

Դ. ԴՈՆԴՈՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԻԹՅՈՒՆ

ԽՄԱՆ

ԽԴԱՎՈՎԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆ



91(075)
7-74

19 · ՍԱԿԵԼՎԱԿԻ · ԹԲԻԼԻՍԻ · 40



25 OCT 2011

91(075)

մբ

Դ. ԳՈՆԴՈՒԱ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԳԻՐՔ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ IV ԴԱՍԾՐԱՆԻ ՀԱՄԱՐ

Թարգմանություն՝ ՅԵ. Գալճյանի
Արացերեն XIII հրատարակությունից

Հաստատված և պհանջ կուսադադար կողմից:

ՎՐԱՍՏԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ

1940

ԹԲԻԼԻՍԻ
1940

ՈՒՍ. ՄԱՆԿԱՎԱՐԺ.
ՍԵԿՏՈՐ

20599



91

675

四

ՀԱՐԴԻՐԴԱՅԻՆ ՍԼԵՒԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆ (ԽՍՀՄ)

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԽՍՀՄ ԴԻՐՔՆ ՈՒ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Քարտեզով. — Նայեցնք կիսագնդերի քաղաքական քարտեզին: Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը (ԽՍՀՄ) ինչ պայմանական գույնով ե ցույց տըրքած: ԽՍՀՄ վնր կիսագնդի վրա յե գտնվում: ԽՍՀՄ վնր աշխարհամասերումն ե գտնվում: Գտեք ԽՍՀՄ քաղաքական գլուխութի վրա:

ԽՍՀՄ գտնվում ե արևելյան կիսագնդի հյուսիսային մասում, Յեղոպայի և Ասիայի մայրցամաքներում։ Նազրավում ե Յեղոպայի ամբողջ արևելյան մասը՝ Արևելյան Յեղոպան, Ասիայի հյուսիսային մասը՝ Սիբիրը, Սեվ և Կասպից ծովերի միջև տարածվող յերկիրը՝ Կովկասը, Ասիայի միջին մասը, վոր ընկած ե Սիբիրի և Կովկասի միջև ու կոչվում ե Միջին Ասիա, և Խաղաղ օվկիանոսի ափերը՝ Հեռավոր Արևելյար։

Այսպիսով, ԽՍՀՄ կազմված ե յերկու գլխավոր մասերից՝ Յեղութական մասից—արևմուտքում և Ասիական մասից—արևելյում ու մասամբ հարավում:

ԽՍՀ Միությունը շատ մեծ պետություն է։ Նրա գրաված տարածությունը հավասար է 21,5 միլիոն քառակուսի կիլոմետրի, փորի մեկ չորրորդն ընկնում է Յեվրոպական մասում, իսկ յերեք չորրորդը՝ Ասիականում։ ԽՍՀ Միության սահմաններում մտնում են ամբողջ Յեվրոպայի (Արևելյան Յեվրոպա) կեսը և ամբողջ Ասիայի (Սիբիր, Կովկաս, Միջին Ասիա, Հեռավոր Արևելք) մեկ յերրորդից ավելին։

ԽՍՀՄ կազմում ե աշխարհամասերի՝ Յեվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի, Հյուսիսային Ամերիկայի, Հարավային Ամերիկայի և Ավստրալիայի, այսինքն՝ յերկրի ամբողջ բնակեցված ցամաքի ընդհանուր տարածության մեկ վեցերորդ մասը:



ԽՍՀՄ տարածվում ե արևմուտքից-արևելք 10 հազար կմ և հյուսիսից-հարավ՝ 4 հազար կմ.:

Վարժություններ՝ 1. Գտեք աշխարհի քարտեզի վրա՝ Յեվրոպան, Ասիան, Աֆրիկան, Հյուսիսային Ամերիկան, Հարավային Ամերիկան, Ավստրալիան։ 2. Ցույց տվեք քարտեզի վրա Յեվրոպան և Ասիան միասին, այսինքն՝ Յեվրասիան։ 3. Ցույց տվեք ԽՍՀՄ Յեվրոպայից բաժանող սահմանագիծը։


ԽՍՀՄ ԾՈՎԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Քարտեզով. — Գտեք աշխարհի քարտեզի վրա՝ Խաղաղ օվկիանոսը, Ատլանտյան օվկիանոսը, Հնդկական օվկիանոսը և Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսը։ ԽՍՀՄ այդ օվկիանոսներից փորին ե սահմանակից։

ԽՍՀՄ սահմանները մեծ մասամբ անցնում են օվկիանոսների ափերով։

ԽՍՀՄ ունի անմիջական յելք դեպի յերկու օվկիանոս, վորոնցից մեկը՝ արևելյան սահմանում Խաղաղ օվկիանոսն ե,

իսկ մյուսը՝ հյուսիսային կողմը՝ Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսը։ Այդ յերկու օվկիանոսները միացնում ե Բերինգյան նեղուցը (նեղուցը ջրի այն շերտն ե, վորը միացնում ե օվկիանոսներ կամ ծովեր)։



ԽՍՀՄ սահմանները

Խաղաղ օվկիանոսը ԽՍՀՄ ափերի մոտ կազմում ե յերեք Ֆով՝ Բերինգյան ծով, Ոխոտի ծով և Ճապոնական ծով (ծովն օվկիանոսի այն մասն ե, վորը մտնում է ցամաքի մեջ)։

Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսը ԽՍՀՄ սահմաններում կազմում ե մի քանի ծով. տանք գրանցից յերկուսի անունը՝ Բարենցի ծով և Սպիտակ ծով։

ԽՍՀՄ արևմուտքում, մեզանից հեռու, գտնվում ե Ատլանտյան օվկիանոսը, վորը վոչ թե ինքը, այլ իր մասերի և ծովերի միջոցով հասնում ե ԽՍՀՄ սահմաններին։ Նա իր ծովերով մտնում ե Յեվրասիայի խորքերը։ Այդ օվկիանոսի ծովերն են՝ ԽՍՀՄ արևմուտքում՝ Բալթիկ ծովը, հարավում՝ Սև ծովը և Ազովի ծովը։ Դրանցից ԽՍՀ Միության ամբողջապես պատկանում ե Ազովի ծովը, մասամբ, համարյա կիսով չափ՝ Սև ծովը, իսկ Բալթիկ ծովը չի մտնում ԽՍՀՄ սահ-

մաններում. միայն նրա ծոցերից մեկը՝ ֆիննական ծոցը՝ շփման մեջ ե գտնվում ԽՍՀՄ սահմանի հետ այնտեղ, ուր ընկած ե մեր Միության խոշորագույն նավահանգիստը՝ Լենինգրադը (ծոցը ծովի այն մասն ե, վորը մտնում է ցամաքի մեջ):

Սեզ ծովից դեպի արևելք գտնվում ե կառպից ծովը: Այդ ծովը, ինչպես յերեսում ե քարտեզից, ովկիանոսի հետ միացած չե, հետևապես չպետք ե, ծով կոչվի: Սակայն նկատի ունենալով այն, վոր այդ ծովը ներկայացնում ե հնագույն ժամանակների մի մեծ ծովի մնացորդը, դրա համար ել հիմա և կրում ե ծովի անունը: Ներկայումս նա լիճ ե, յերկրագնդի խոշորագույն լիճը: Յեզ իր արտասովոր մեծության պատճառով նրան սագում ե ծով անունը, Կասպից ծովը համարյա ամբողջովին գտնվում ե ԽՍՀՄ սահմաններում:

Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսը գտնվում ե ցուրտ գոտում, և այդ պատճառով ել նրա մեծ մասը ամբողջ տարին ծածկված ե սառուցով: Սառուցյն այստեղ խանգարում ե նավագնացության: Ովկիանոսի միայն արևմայան մասը՝ Բարենցի ծովը, յերբեք չի սառչում, վորովհետեւ այդ ծովը տաքացնում ե գոլֆ ստրիմը՝ այն տաք հոսանքը, վոր մտնում ե այստեղ Ատլանտյան ովկիանոսից:

Տաք հոսանքը Սպիտակ ծովը չի մտնում: Այդ պատճառով ել նա կես տարի ծածկված ե լինում սառուցով:

Սեզ ծովը տաք, չսառչող ծով ե: Այստեղից ամբողջ տարին նաև լին անարգել գուրս են գալիս դեպի աշխարհի բոլոր ծովերն ու ովկիանոսները:

Բերինգյան ծովը և Ոխոտի ծովը սառչում են: Սառուցյն այստեղ ևս խանգարում ե նավագնացության:

Յեթե զննենք ԽՍՀՄ ծովային սահմանները, թեկուզ քարտեզով, կնկատենք հետեւյալը. տեղ-տեղ հանդիպում են ցամաքամասեր, վորոնք ամեն կողմից շրջապատված են ջրով: Ցուրաքանչյուր այդպիսի ցամաքամաս կոչվում ե կղզի: Տանք ԽՍՀՄ կղզիներից մի քանիսի անունը. Նոր Յերկիր—Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսում և Սախալին—Խաղաղ ովկիանոսում՝

Ոխոտի և Ճապոնական ծովերի միջև (Սախալինի հյուսիսային կեսը պատկանում ե ԽՍՀ Միությանը, իսկ հարավային կեսը՝ Ճապոնիային): Ավելին տեսնում ենք նաև ծովի կամ ովկիանոսի մեջ մտնող ցամաքամասեր, վորոնց ավելը վողողվում են ջրով միայն յերեք կողմից: Դրանք թերա կղզին եր են: Տանք ԽՍՀՄ թերակղզիներից յերեքի անունը. Ղրիմի թերա կը դպի—Սեզ ծովում, կոլայի թերա կղզի—Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսում, Սպիտակ և Բարենցի ծովերի միջև, կամ չատկայի թերա կղզի—Խաղաղ ովկիանոսում, Բերինցյան և Ոխոտի ծովերի միջև:

Վարժություններ. — 1. Գտեք ԽՍՀՄ քարտեզի վրա վերևում հիշված ծովերը, կղզիները և թերակղզիները, 2. Ներկեցք ԽՍՀՄ ուրվագծային քարտեզի վրա ծովերն ու ովկիանոսները կապույտ գույնով և տակը զրեցեք նրանց անունները. Նշեցնք բոլորին հայտնի կղզիները և թերակղզիները (թվանշաններ դրեք նրանց վրա և պարզեցնք նրանց տեղն ըստ քարտեզի). 3. ցնեց տվեք Յեվրոպայի քարտեզի վրա ծովային ուղին Ֆիննական ծովից մինչև Անգլիա, Սեզ ծովից մինչև Անգլիա:

ԽՍՀՄ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխարհի քաղաքական քարտեզի վրա լավ յերեսում ե, վոր ԽՍՀ Միությունն իր արևմտյան և հարավային սահմանների յերկարությամբ սահմանակից ե շատ պետությունների:

Մեր սահմանակից պետություններն են՝ արևմուտքում՝ Ռումինիան, Հունգարիան, Գերմանիան, Լիտվան, Լատվիան, Եստոնիան և Ֆինլանդիան. հարավում՝ Թյուրքիան, Իրանը, Ավգանիստանը, Զինաստանը, Տուրքիայի ժողովրդական հանրապետությունը, Մոնղոլական ժողովրդական հանրապետությունը, Մանջուստանը:

Արևելքում մեզ սահմանակից ե միայն մի պետություն՝ Ճապոնիան:

Վարժություններ. — 1. Գտեք աշխարհի քաղաքական քարտեզի վրա ԽՍՀՄ սահմանակից պետությունները. 2. Ցնեց տվեք քարտեզի վրա ԽՍՀՄ բոլոր սահմանները:

ԽՍՀՄ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային Միության մեջ կա 186 միլիոնից ավելի բնակիչ։ Միությունն իր բնակչության կազմով բազմագգի յերկիր է, այստեղ ապրում են մոտ 60 տարբեր ժողովուրդներ, որինակ՝ ոռուներ, ուկրաինացիներ, բելոռուսներ, թուրքմեններ, ուզբեկներ, տաջիկներ, վրացիներ, հայեր, ադրբեջանցիներ, կարելներ, ֆիններ, ոսեր, աբխազներ, չեռքեղներ, չեչեններ, ինգուշներ, մոնղոլներ, հրեաներ և ուրիշներ։

Ցարական Ուուսաստանի աստիճանավորներն ու վաճառականները ճնշում եյին և շահագործում այդ բոլոր ժողովուրդներին։ Կառավարական հիմնարկություններում տիրապետում եր ուստաց լեզուն, դպրոցներում դասավանդում եյին միայն ուստաց լեզվով։ Այդ բոլոր ժողովուրդներին կառավարում եյին ուստաց աստիճանավորները։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխությունն ազատագրեց Խորհրդային Միության ժողովուրդներին ճնշումից և շահագործումից։ Մեր Միության մեջ ապրող բոլոր ժողովուրդները հանդիսանում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության լիիրավ անդամները (նկարը՝ եջ 9)։

ԽԱՀՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԸ


ԽԵԶ Միությունը կազմված է տասներկու Խորհրդային Առցիալիստական Հանրապետություններից։ Այդ հանրապետությունները կամագոր կերպով միացել են և ստեղծել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն։

Տանք առանձին-առանձին տասներկու խորհրդային համրապետությունների անունները՝

Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն,

Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն,

ԲԵԼՈՌՈւՍԱԿԱՆ ԽՈՐհԾԴային Սոցիալիստական Հանրապետություն,



Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն,

Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն,

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն,

Թուրքմենական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն,

Ուզբեկական Խորհրդային Սոցիալիստական հանրապետություն,

Տաջիկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն,

Ղազխական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն,

Կիրգիզական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն,

Կարելա-Ֆիննական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն:

1940 թ. հունիսի վերջերին Ռումինիայի հետ բանակցությունները վարելու միջոցով խաղաղությամբ վճռվեց Ռումինիայի կողմից 22 տարի շարունակ ոկուպացիայի յենթարկված Բեսարաբիան Խորհրդային Միությանը վերադարձնելու և Բուլղարաբիան հյուսիսային մասը Խորհրդային Միությանը հանձնելու հարցը:

Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը գտնվում է մեր Միության հարավ-արևելյան մասում, նա սահմանակից է Ռումինիային, Հունգարիային և Գերմանիային: Նրա հարավային ափերը վողողում են Սեվ և Ազովի ծովերը: Նրա գլխավոր քաղաքն է Կիև:

Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը գտնվում է Միության արևմտյան մասում, նա սահմանակից է Գերմանիային, Լիտվային և Լատվիային: Նրա գլխավոր քաղաքն է Մինսկը:

Կովկասիոնի լեռներից դեպի հարավ՝ Սեվ և Կասպից ծո-

վերի միջև գտնվում են յերեք խորհրդային հանրապետություններ՝ Անդրկովկասի արևմտյան մասում — Սեվ ծովի ափին գտնվում է Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (գլխավոր քաղաքն է Թբիլիսին): Անդրկովկասի արևելյան մասում — Կասպից ծովի ափին գտնվում է Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (գլխավոր քաղաքն է Բաքուն), իսկ Անդրկովկասի հարավային մասում գտնվում է Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (գլխավոր քաղաքն է Յերևանը): Անդրկովկասի հանրապետությունները սահմանակից են Թյուրքիային և Իրանին:

Կասպից ծովից դեպի արևելք գտնվում են՝ Թուրքմենական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (գրլիսավոր քաղաքն է Աշխաբադը), Ուզբեկական Խորհրդային սոցիալիստական Հանրապետությունը (գլխավոր քաղաքն է Տաշքանդը), Տաջիկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (գլխավոր քաղաքն է Ստալինաբադը), Կիրգիզական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (գլխավոր քաղաքն է Ֆրունզեն), Ղազախական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (գլխավոր քաղաքն է Ալմա-Աթան):

Մեր Միության հյուսիս-արևմուաքում գտնվում է Կարելա-Ֆիննական ԽՍՀ (գլխավոր քաղաքն է Պետրոգրադը):

Մնացած ամբողջ տարածությունը գրավում է Բուսատանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը, վորչ մյուս խորհրդային հանրապետություններից ամենամեծն է: Նրա գլխավոր քաղաքն է Մոսկվան՝ Խորհրդային Միության մայրաքաղաքը:

Վարժուքյուններ. — 1. Գտեք ԽՍՀ Միության քաղաքական քարտեզի վրա տասներկու խորհրդային հանրապետությունները և նրանց գլխավոր քաղաքները. 2. Անցկացրեք ԽՍՀ Միության ուրվագծային քարտեզի վրա կարմիր գիծ ցամաքային սահմաններով և հարևան պետությունների վրա գրեցեք նրանց անունները:

II ՎՐԱՑԱԿԱՆ ԻՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

ԴԻՐՔԸՆԵՐԸ, ՄԱՀՄԱՆՆԵՐԸ ՅԵՎ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կովկասը, վոր գտնվում է Սեվ և Կասպից ծովերի միջև, Կովկասիոնի լեռնաշղթայով բաժանվում է յերկու գլխավոր մասերի՝ լեռնաշղթայից հյուսիս գտնվում է Հյուսիսային Կովկասը, իսկ նրանից հարավ՝ Հարավային Կովկասը կամ Անդրկովկասը:

Վրացական ԽՍՀ գտնվում է Անդրկովկասի արևմտյան մասում:


Վրացական ԽՍՀ զգալի մասը գտնվում է Սեվ ծովի ափին:

Վրացական ԽՍՀ Հանրապետությունը՝ հյուսիսային կողմից յեզերում է Կովկասիոնի լեռնաշղթան, արևմուտքից նրա ափերը վողողում են Սեվ ծովը, արևելքից և հարավից նրան սահմանակից են յեղբայրական հանրապետություններ՝ Ադրբեյջանական ԽՍՀ Հանրապետությունը և Հայկական ԽՍՀ Հանրապետությունը, իսկ հարավարևմուտքից՝ Թյուրքիան:

Վրացական ԽՍՀ հյուսիսային և հարավային սահմանները լեռնոտ են, արևելյան սահմանին տարածվում են հարթավայրեր, արևմտյան սահմանը ձգվում է ծովափով:

Վրացական ԽՍՀ բոնած տարածությունը հավասար է 70.000 քառ. կմ.: Իր մեծությամբ Վրացական ԽՍՀ Անդրկովկասի կեսից քիչ ե պակաս:

Հարևան յեղբայրական հանրապետությունների հետ համեմատած՝ Վրացական ԽՍՀ իր բոնած տարածությամբ զիջում է Ադրբեյջանին, բայց կրկնակի անցնում է Հայաստանից:



Վրացական ԽՍՀ-ում կա 3,5 միլիոնից ավելի բնակչություն։ Քաղաքներից ամենամեծն ու նշանավորը Թբիլիսին է։ Թբիլիսում կա կես միլիոն 19.000 բնակչություն։

ՄԱԿԵՐԵՎՈՒՅՑԹԸ


Վրացական ԽՍՀ լեռնոտ յերկիր ե. մակերևույթի յերկու յերրորդը ծածկված ե լեռներով, իսկ մեկ յերրորդը գրավում են հարթավայրերը:

Վըաստանի լեռները բաժանված են յերկու գլխավոր խրմ-
քերի. հյուսիսային մասում ձգված է կովկասիոնի լեռնա-
շղթան իր ճյուղերով և նախալեռներով, իսկ հարավային մա-
սում նույնպես բարձրանում է լեռների յուրատեսակ մի-
խումբ — դա Հարավային լեռնաշխարհն է. Այդ յերկու
լեռնաշխարհների միջև տարածվում են հարթություններ, վո-
րոնք կըում են մի ընդհանուր անուն՝ Վըաստանի հար-
թավայրեր.

ԿՈՎԿԱՍԻՈՆԻ ԼԵՇՆԱՇՂԹԱՆ


Կովկասիոնի լեռնաշղթան ամբողջ կովկասի ամենամեծ լեռնաշղթան է։ Նա ձգվում է հյուսիս-արևեմուտքից դեպի հարավ-արևելք։ Մեջ և կասպից ծովերի միջև, գրեթե 1200 կմ.՝ յերկարությամբ։ Լեռնաշղթայի սկիզբն ու վերջը միանում են մոտակա դաշտավայրերին։ Լեռնաշղթան ամենից ավելի բարձր են միջին մասում — լեռնաշղթայի հենց այդ կենտրոնական մասն են, վոր կոչվում են կենտրոնական կովկասիոնի։

Կենտրոնական Կովկասիոնիի լեռնագագաթները շատ են
բարձր: Ամենաբարձր գագաթն է Ելբրուսը: Ելբրուսը ծովի
մակերևույթից բարձր է 5630 մետր: Կենտրոնական Կովկա-
սիոնիի ամենամեծ գագաթներից մեկը հանդիսանում է Կաղ-
քեկը, վորը Ելբրուսից ցած է 600 մետր: Կովկասիոնի լեռնա-
շղթան աչքի յե ընկնում վոչ միայն՝ իր գագաթների բարձ-
րությամբ, այլ և իր փոված լայնքով: Նա ամենից ավելի նե-
ղանում է լեռնաշղթայի սկզբում և վերջում, ինչպես նաև Կաղ-



բեկ լեռան մոտերքը, բայց տեղ-տեղ նրա լայնությունը հասնում է 200 կմ.:


Կովկասիոնի լեռնաշղթան, վորը ձգվում է մեծ տարածության վրա ինչպես յերկայնքով, այնպես ել լայնքով, իր կատարների ու գագաթների նշանակալից բարձրության և սեալ, ապառաժոտ լանջերի պատճառով կատարելապես անանցանելի կլիներ, յեթե նրա կատարները տեղ-տեղ իջած չինելին, կենտրոնական կովկասիոնի ամենացած լեռնանցքը Խել վիլ լեռնանցքն է (կամ Կրեստովիլ):



Կենտր. Կովկասիոնի քարտեզը

Կազբեկի ստորոտին գտնվում է Դարիալի կիրճը, վորը ծառայում է վորպես ճանապարհ՝ Անդրկովկասից դեպի Հյուսային կովկաս: Այդ յերկու յերկրները միացնող ճանապարհն սկսվում է Թբիլիսիից, գնում է հյուսիսային ուղղությամբ, մոտենում է Կովկասիոնին, կտրում-անցնում է այն Խելվիի լեռնանցքի միջով, մտնում է Խելվի (յերկիր, ուր ապրում են մոխելիները), հետո անցնում է Դարիալի կիրճով և, այսպիսով, կտրելով վողջ Կովկասիոնին, մտնում է Որջոնիկիձե քաղաքը:

Վարժություններ. — Գտեք քարտեզի վրա՝ Կազբեկը, Ելբրուսը, Խելվիի լեռնանցքը, Դարիալի կիրճը, Որջոնիկիձե քաղաքը:



Հավերժածյուն կովկասիոնին

ԴԱՐԻԱԼԻ ԿԻՐՃԸ

Կազբեկի մոտ կովկասիոնից հոսում են մի քանի աղմկալի գետեր, վորոնցից ամենից ավելի աչքի յե ընկնում Թերեք (Թերգի):

Թերեք գետը, սկսած իր ակունքներից, հոսում է իր վրա կախված լեռնակույտերի միջով, գալարապտույտ անցնում է ապառաժոտ լեռների նեղ արանքներով և Ստեփանցմինդա գյուղի մոտ մտնում է Դարիալի կիրճը, վորը ամենախորն ե բոլոր կիրճերից:

«Ո՛, դու, դաման Դարիալ,


Վողջ լերկ ժայռից հնամյա...»

ասում է մոխեվական յերգը: Յեվ, իսկապես, Դարիալի կիրճը քարակույտերից ու ժայռերից կազմված վիթխարի մի ծածկ է:

Դարիալի կիրճը համեմատաբար լայն է Ստեփան ցմինդա



գյուղի մոտ, վորտեղից և սկսվում է նա: Այստեղ գտնվում է բավական ընդարձակ մի գոգավորություն, բայց կիրճը վորքան



Դարիալի կիրճը
հեռանում եւ Ստեփանցին զայից, այնքան ավելի յեւ խորանում,
ժայռերն ավելի յեն մոտենում իրար. գյուղից մի 10 կմ. հե-

ռավորության վրա գտնվում եւ կիրճի ամենանեղ տեղը: Այստեղ Դարիալի լայնությունը 80 մետրից ավելի չեւ: Դարիալի կիրճի ընդհանուր տարածությունը 15 կմ. եւ: Արևի շողովուն ճառագայթները յերկարատև չեն ընկնում Դարիալի կիրճը. նա գրեթե միշտ գտնվում եւ բարձր լեռների ստվերում: Այստեղ բուսականությունն աղքատ է, ժայռերն ու ապառաժները զրկված են բուսական ծածկույթից: Կիրճը չի գրավում վնչ թուչուններին, վնչ գաղաններին: Յերբեմն միայն լեռնային արծիվն եւ սավառնում սեպ ապառաժների գլխին, կամ ծիծեռնակներն են ուրախ ճիշերով սլանում կապույտ յերկնքում: Այստեղ՝ կիրճում, կատարյալ լուսություն կթագավորեր, յեթե թերեք գետի անեղ մոնջունը չարթնացներ շրջակա վայրերը: Այդ մուայլ տեղերից անցնող ճամբորդն արտասովոր հրճվանք եւ զգում, գիտենալով, վոր ուրիշ յերկներում դժվար թե հանդիպի Դարիալի նման վեհ բնության:

ԿՈՎԿԱՍԻՈՆԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՃՅՈՒՂԵՐԸ

Կովկասիոնիի լեռնաշղթան հարավային ուղղությամբ կազմում եւ շատ ճյուղեր, նրանցից ամենազլիսավորները յոթն են՝ Սուրամի կամ Քարթլի-իմերեթի լեռնաշղթան—բաժանվում եւ կենարունական կովկասիոնիից և ձգվում Բորժոմի ուղղությամբ. նա բաժանում եւ Վրաստանը յերկու գլխավոր մասերի՝ նրանից գետի արևելք գտնվում եւ Արևելյան Վրաստանը, գետի արևմուտք — Արևմտյան Վրաստանը. Քարթլի լեռնաշղթան, վոր բաժանվում եւ կովկասիոնից Բորբալո լեռան մոտ և ձգվում Թբիլիսիի ուղղությամբ, գտնվում եւ Սուրամի լեռնաշղթայից գետի արևելք. Կախեթի լեռնաշղթան ճյուղավորվում եւ կովկասիոնիից նույն Բորբալո լեռան մոտ և ձգվում Քարթլի լեռնաշղթային գրեթե զուգահեռ. Ռաճայի լեռնաշղթան—բաժանվում եւ կովկասիոնիից Սուրամի լեռնաշղթայից գետի հարավ և ձգվում Քութափսի ուղղությամբ. Ռաճա-Սվանական լեռնաշղթան—բաժանվում եւ կովկասիոնիից Պասիսմթա լեռան մոտ. այդ լեռնաշղթայի հարավային մասը կոչվում եւ Լեչխումի լեռնա-

— մ ղ . մ ա զ փ տ վ ի ս ք հ զ զ ն զ վ յ ս բ մ ս ց դ ր ա շ ի ե ց — դ ո ւ թ վ ե լ ո ւ դ յ
— ս դ լ կ թ ե մ ո ւ դ լ լ ։ վ յ ս բ մ ս ց դ ր ա զ վ յ ս բ վ ո վ լ վ մ ֆ դ ր ա շ ի ե ց — դ ո ւ թ վ
— ե մ ե լ ո ւ դ ս դ լ կ թ ե լ ո ւ վ մ ֆ ջ դ զ ո ւ մ ա չ մ ա յ լ ի ն ե վ թ պ ո ւ մ դ զ
ե ր ո ւ մ ։ մ զ պ տ թ վ ն ե տ ո ւ ս գ լ տ ո ւ լ վ յ ս ո ւ մ ը մ ա յ լ ի տ ո ւ մ է


ւցմովն ուսագիտել կմսի մրցառի վր Նվաս վմգուսդի զ բարչ
շոմքմամ գր վղտմաց եզր ոգեհնդի բասիմաց վղտառմի

մմզեւսից ովմտիում
այ վկազութիսէ տմի վեզալուժ ժշտակ— բցցրամքարտի
իսմզուզը գ քոիտմտի նղուեավակ
մույ ովմտովուսից վզտուումի հսովեուրի : մրտբանեւս
ոտեազնն ոզ յրախեց մմզեւսից ովմտիումց նմո ժղզմկ յրամ
սիմուզ մզեւսից մզոյ վեզիո ժմուն վյո ու ոզ յրախեց իտմոց
վեզն նվկազութիսէ նվմզեւսից քոինվց յրաղմդի վնոյ

ու զի՞րո՞ք ին և ու դսգլ վ զախտի
-իսկ բաւծին զ չվժ մյուս թշում մկ մաի ո զոք ին և ու դսգլ ու տի
-տունի զ վուս մմկն մջում վ զիտ ե վուցրու ե վագեւարք ո որ.

Ճարարդմտ-իտմոց վեզն ոչ
յրախեց՝ ճարարդմտ (ոտկտեռովմզ-ոտիլ ոտկտուլու-
միլ-տցտյ վմտցտյ) նվրովնեռուսգլ վթգմ գյ զ-վլթմտ ք-
զգ յրախբուտ ժղսմսի մմզերմց ոյտ կով ժլդդմտ-իտմոց
վեզն ոչ յրախեց՝ ժլդդմտ (վթգվտկ վլթմտյ). նվրովնեռուսգլ
վթգմ գյ զ-վլթմտ ք- ոչ յրախբուտ ժղսմսի մմզերմց ոյտ
ոպեռուտ ոչ յրախեց մմզցտնուց կով ոտքլնեռուսգլ վթգմ գյ վ-
վլթմտ ք- յուկ վկրում-նու ըմից ոյտյ վզյս ոչամթշանեռա-
նկի իտմոց-նվրովումց նվմզերմց ովկրումտոց վկոսպոտիկիս.

միսք իզզ վեպն գ րասինց դ
եղետը վուսմմլգ Եվկղսվոտիհսկ գ յրախղտքութ զտքինշտպագի
զտկութով մղ-դուի Ա կով ու զտքինշտպագի զտկութուլգ մնէ զգ Ո
գ յրադտպար Եվիտմաց զվրտքինշտպագի նմու տար զտպագի տմտպագի
Եվկղսվոտիհսկ գ յրախմախտնամց — զտքինշտպագի զտկութուլգ
ու կովտքինշտպագի գ յրահնտը իսմղդագլովուղ մկ զմսի ու զտքինշտպագի



սիանի լեռնաշղթան—միանում ե Մեսխեթի լեռնաշղթային Բախմարոյի մոտ՝ և բռնում հյուսիսից-հարավ ուղղություն. Զավախեթի լեռնաշղթան—գտնվում ե Թրիալե-



Արևմտյան Վրաստանը

թի լեռնաշղթայից հարավ և ձգվում ե հյուսիսից-հարավ:

Հարավային լեռնաշխարհի լեռնաշղթաները, կովկասիոնիի հետ համեմատած, ավելի ցած են: Բացի վերևում, հիշված չորս գլխավոր լեռնաշղթաներից, այս շրջանում կան և՛ շատ այլ լեռնաշղթաներ, վորոնք հանդիսանում են այդ գլխավոր լեռնաշղթաների ճյուղավորությունները և ձգվում են զանազան ուղղությամբ:

Սուրամի լեռնաշղթան ե, վոր միացնում ե կովկասիոնի և Հարավային լեռնաշխարհի լեռնաշղթաները:

Վարժություններ. — Գտեք քարտեզի վրա Հարավային լեռնաշխարհի լեռնաշղթաները:

ՀԱՐԹԱՎԱՅՐԵՐԻ ՇՐՋԱՆԸ

Ինչպես գիտենք, Վրաստանում կովկասիոնիի և հարավային բարձրավանգակի միջև տարածվում են հարթություններ. ներք այդ շրջանն ե, վոր կոչվում ե հարթավայրերի շրջան:


Հարթավայրերի շրջանում կա յերեք գլխավոր հարթություն. գրանցից մեկը դաշտավայր ե — Կոլխիդայի դաշտավայրը, իսկ մնացած յերկուսը՝ Քարթլի հարթությունը և Կախեթի հարթությունը դաշտավայրեր չեն:

Կոլխիդայի դաշտավայրը տարածվում ե Սեվ ծովի վողջ ափով՝ բանելով բավական լայն շերտ, իսկ ծովից դեպի արևելք աստիճանաբար նեղանում ե: Այդ դաշտավայրն ունի յեռանկյունու ձե (հիմքը մոտենում ե ծովագին), իսկ գագաթը համենացած գիրքը գտնվում ե ծովագին, իսկ դեպի արևելք աստիճանաբար բարձրանում է: Կոլխիդայի դաշտավայրը թեքակի թեքվում ե դեպի Սեվ ծովը, նրա ամենացած գիրքը գտնվում ե ծովագին, իսկ դեպի արևելք աստիճանաբար բարձրանում է: Կոլխիդայի դաշտավայրում գտնը վոր քաղաքները ծովի մակերեսութից բարձր են՝ Բաթումին — 3 մ., Փոթին — 4 մ., Սուխումին — 10 մ., Սամտրեղիան — 28 մ., Մախաբելի քաղաքը — 70 մ., Ցիակայա քաղաքը — 104 մ., Չուգդիդին — 134 մ., Քութախիսին — 164 մ.:

Քարթլի հարթություններն կածած ե Սուրամիի և Քարթ-

լի լեռնաշղթաների միջև: Դա քիչ բարձր ե կոլխիդայի դաշտավայրից և հասնում ե 400—800 մետր բարձրության (ծովի մակերեսութից): Քարթլի հարթության վրա գտնվող քաղաքները ծովի մակերեսութից բարձր են՝ Գորին — 600 մ., Թրիլիսին — 404 մ., Քարթլի հարթությունը բարձրանում ե դեպի

հյուսիս և սահմանափակվում կովկասիոնիի լեռներով, իսկ հարավից հարթությունը հասնում է Թրիալեթի լեռնաշղթային։ Այսպիսով, Քալթլի հարթությունն ամեն կողմից յեզերված է լեռներով։ Ի արթությունն ազատ յելք ունի միայն յերկու տեղ՝ մեկը Բորժոմիի ուղղությամբ, մյուսը Թբիլիսիի մոտ։




Քարթլի հարթությունը

Կախեթի հարթությունը գտնվում է Կախեթի լեռնաշղթայից արևելք և տարածվում է Կովկասիոնիի ու Կախեթի լեռնաշղթայի միջև։ Այս հարթությունն ունի յերկարավուն ձեւ։ Լայնությամբ հավասար է 160 կմ. իսկ յերկարությամբ՝ 160 կմ.։ Կախեթի հարթությունն աստիճանաբար լայնանում է հարավ-արևելյան ուղղությամբ։ Կախեթի հարթությունն ավելի ցած է Քարթլի հարթությունից, բայց ավելի բարձր է Կովկասայի դաշտավայրից։ Կախեթի հարթությունը ծովի մակերևույթից բարձր է 200—700 մետր։

Բացի այս յերեք գլխավոր հարթավայրերից, Վրաստա-

նում, հարավային լեռնաշխարհում, կա նաև բարձր և բավական լայն մի պլատո՝ Զավախեթի բարձրավանդակը, վորը բարձր է ծովի մակերևույթից 2000 մետր:



Վրաստանի լեռները

Վարժություններ. — Գտեք քարտեզի վրա վրաստանի գըլ-
խավոր հարթավայրեղը՝ կոլխիդայի դաշտավայրը, Քարթի հար-
թությունը, Կախեթի հարթությունը և Զավախեթի բարձրա-
վանդակը:

4 L H U U U

Վրաստանն ընդհանրապես տաք կլիմա ունեցող յերկիր եւ Սակայն նրա տարբեր մասերում կլիման ունի իր առանձնահատկությունները:

Սեվ ծովի ափերին, Կոլխիդայի դաշտավայրում, համարյա
ամբողջ տարին յեղանակը տաք ե: Այստեղ ձմեռը բարեխսառն
ե և յերկար չի տեսում: Ծովափնյա շերտում ձյունը և սառնա-
մանիքը հազվադեպ յերկույթ են: Սեվ ծովի ե մեղմում ձմեռ-
վա խստությունը:

Իսկ Արևելյան Վրաստանում ձմեռն ավելի խիստ է, մասնավանդ Քարթլի հովտում։ Այստեղ լինում է մեծ սառնամանիք։ Քարթլի-Իմերեթի լեռնաշղթան կտրում և Սեփ ծովից փչող

Քամիների ճանապարհը, այդ պատճառով ել ծովի ազդեցությունն ավելի թույլ ե։ Դրա հետ մեկտեղ Քարթլի հարթությունն ավելի բարձր գիրք ունի, և, ինչպես մեզ հայտնի յե, բոլոր բարձր գիրք ունեցող վայրերում շատ ավելի ցուրտ ե։ Նույնպիսի ցուրտ լինում ե և Զավախեթի բարձրավաճակում։

Առանձնապես մեծ սառնամանիք ե լինում լեռնային ջրը-
ջաններում, լեռների գագաթներին ու կատարներին։ Կովկա-
սիոնիի բարձր լեռներին ամբողջ տարին ձյուն կա։ Այստեղ կան
նաև շատ սառցադաշտեր։ Միայն այն կիրճերում, վորոնք բաց
յելք ունեն Սեվ ծովի վրա, ջերմությունը թափանցում ե
խորքը՝ բավական հեռու,


Մթնոլորտային տեղումներով շատ հարուստ է Արևմտյան
Վրաստանը, վորը կըում է Սեփ ծովի ազդեցությունը: Արեւ-
լյան Վրաստանում մթնոլորտային տեղումներն ավելի քիչ են,
վորովինետե Սև ծովը նրա վրա ավելի քիչ ազդեցություն ունի:

ԳԵՏԵՐԸ ՅԵԿ ԼՃԵՐԸ

Վրաստանում շատ գետեր կան, նրանցից ամենանշանակունեցողն էն՝ Կուրը (Մտկվարի) և Ռիոնը: Կուրը հոսում է Արևելյան Վրաստանով, իսկ Ռիոնը վուտքում է Երևամտյան Վրաստանու:

Կուրն սկիզբ ե առնում Արսիանի լեռնաշղթայից, Արսիանի լեռնաշղթայի լանջերը ծածկված են անտառներով, բայց նրա կատարն անտառազուրկ է, Խոտառատ և ծաղկաշատ Արսիանից սկիզբ են առնում շատ աղբյուրներ, վորոնցից Մարդուհա- ծղարսն և Մարդարմիս-Ծղարոն հանդիսանում են Կուրդեականավոր ակունքները:

Այդ աղբյուրները գուրս են գալիս ժայռերից. Նրանցից գոյացած առվակներն իրար միանում են զեռ լեռնաշղթայի կատարին և ապա լանջերից իջնում են հովիտ՝ կազմում կուր գետը: Կուրի ակունքները և նրա վերին հոսանքի մի մասը, մինչև կարծախի լիճը, գտնվում են Թյուրքական Հանրապետության սահմաններում: Համելով այդ լճին, կուրը մտնում է Վրաստանի սահմանները և գոռոգում Վրաստանը մինչև Դա-




Պայտագի տափաստանները (Ղարայազի տափաստանները մոտ են Թբիլիսիին), իսկ այստեղից կուրը հոսում է Աղբքեջանի հարթավայրերով: Այսպիսով, կուրն ամբողջապես չի հոսում մեր յերկրի սահմաններում. Վրաստանին պատկանում է կուրի միայն մեկ հինգերորդ մասը (կուրի ընդհանուր յերկարությունը հավասար է 1500 կմ., այնինչ, Վրաստանում նա ունի միայն 300 կմ. յերկարություն): Կուրը թափվում է կառպից ծովը: Կուրը Բորժոմի մոտ անցնում է մի խոր կիրճով, վորը կոչվում է Բորժոմի կիրճ:

Արևելյան Վրաստանում, բացի կուրից, կան ուրիշ շատ գետեր, բայց նրանցից և վոչ մեկը ծով չի թափվում առանց միանալու կուրին: Արևելյան Վրաստանի բոլոր գետերը հանդիսանում են կուրի վտակները: Կուրի ձախ վտակներից գըլխավորներն են՝ Լիախվան, վորն սկիզբ է առնում կովկասիոնից և թափվում կուրը Գորի քաղաքի մոտ. Արագվան—սկիզբ է առնում կովկասիոնից, թափվում է կուրը Մցխեթի մոտ. Ալագանին—սկիզբ է առնում կովկասիոնի լեռներից և թափվում կուրը. Յորան, վորն սկիզբ է առնում կովկասիոնից, Ալագանի ակունքներից վոչ հեռու և թափվում է Ալագանին, նրա գետաբերանի մոտ: Կուրի աջ վտակներից գըլխավորներն են՝ Խրամին, վորը հոսում է Թրիալեթի լեռներից և թափվում կուրը Ղարայազի հարթավայրում, Ալգեթին, վորը հոսում է Թրիալեթի լեռներից և թափվում կուրը Խրամինի գետաբերանի մոտ:

Արևմտյան Վրաստանում ամենայերկար գետը Ռիոնն է, վորն սկիզբ է առնում կովկասիոնի լեռներից և թափվում Սեվ ծովը Փոթի քաղաքի մոտ: Ռիոնն ընդունում է շատ վտակներ, վորոնցից ամենամեծն է Ցխենիս-Ծղալին: Ցխենիս-Ծղալին հոսում է կովկասիոնի լեռներից, նրա ակունքները գտնվում են վոչ հեռու Ռիոնի ակունքներից, նա թափվում է Ռիոնը Սամտրեղիայի մոտ: Ռիոնի յերկրորդ գլխավոր վտակը Կվիրիլան է: Կվիրիլան հոսում է Քարթլի-Իմերեթի լեռնազդայից և Ռիոն է թափվում Քութախիից հարավ:

Բացի Ռիոնից, Արևմտյան Վրաստանում Սեվ ծովն են

թափվում Ինգուր գետը, Կոդոր գետը և Բղիքի գետը: Այս բոլոր գետերն ել սկիզբ են առանում կովկասիոնի լեռներից: Ճորոխ գետը դուրս է գալիս Թյուրքիայից, նա վրաստանին է պատկանում միայն իր ստորին հոսանքում: Ճորոխը թափվում է Սեվ ծովը Բաթումիի մոտ: Ճորոխի աջ վտակն է Աջարիս-Ծղալին:




Ռիոնն իր վտակներով

Կովկասիոնի լեռներից հոսող Յորա և Ալագանի գետերի համար ջրբաժան է հանդիսանում Կախեթի լեռնաշղթան: Ռիոնը և Ցխենիս-Ծղալին միմյանցից բաժանում է Ռաճա-Սվանական լեռնաշղթան: Ինգուրի և Ցխենիս-Ծղալի համար ջըրբաժան է հանդիսանում Սվանական լեռնաշղթան: Վրաստանի գետերի հոսանքի ուղղությունն ըստ մակերեսույթի թեքության յերկու տեսակ է. Արևելյան Վրաստանի բոլոր գետերը հոսում են գեպի կասպից ծովը. այստեղ միազետային սիստեմ է՝ Կուրի սիստեմը, իսկ Արևմտյան Վրաստանի գետերը բոլորն ել հոսում են գեպի Սեվ ծովը: Այստեղ կան մի քանի գետային սիստեմներ, վորոնցից ամենամեծն է Ռիոնի սիստեմը: Կուրի և Ռիոնի սիստեմները բաժանում են Քարթլի-Իմերեթի լեռնա-

շղթան հանդիսանում ե Վրաստանի գետերի գլխավոր ջըր-
բաժանը:

Վրաստանում աչքի ընկնող մեծության լճեր քիչ կան: Լճերի
ամենից ավելի հանդիպում ենք Զավախեթում, վորը կարելի յե-
անվանել Վրաստանի լճային աշխարհը: Այստեղ են գտնվում
Վրաստանի ամենամեծ լճերը՝ Փարվանա լիճը, Կարծախի լիճը,
Տաբիսդուրի լիճը և այլն:



Զավախեթի լճերը

Մյուս լճերից թվենք Պալիաստոմի լիճը — Սեվ ծովի ա-
փին, Ռիոնի գետաբերանի մոտ, Խարիսթվալան — Ռաճայի
լեռնաշղթայի վրա, Կելի լիճը — Քսանի գետի ակունքի մոտեր-
քը, Բազալեթի լիճը — Դուշեթի քաղաքի մոտ, աղի լճերը և Կու-
միսի լիճը — Թբիլիսիի շրջակայքում, Ռիցան — Աբխազիայում:
Վարժուքյուն. — Դտեք քարտեզի վրա Վրաստանի գետերն
ու լճերը:

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՍԵՐԸ

Ամեն ուղղությամբ լեռներով կտրտված Վրաստանում կան
շատ առանձին մասեր՝ Կախեթի, վորը գտնվում ե Յորա և

Սլաղանի գետերի ավազանում. Նա բաժանվում է յերկու մա-
սի՝ Ներքին Կախեթի, վորը վոռոգվում է Սլաղանի գետով
և Գարե-Կախեթի, վորի միջով հոսում ե Յորան: Այսպի-
սով, Կախեթի լեռնաշղթան Կախեթին բաժանում է յերկու մասի:

Քարթի — Լիախվա — Քսանի և Արագվա գետերի ավա-
զանում, ինչպես և Կուր գետի միջին հոսանքի վերին մասում՝
Բորժոմիի կիրճից մինչև Ղարայազի:

Ի մերեթի — Կվիրիլա գետի և Ռիոնի գետի միջին հո-
սանքի ավազանում:

Ռաճա — Ռիոնի գետի վերին հոսանքի ավազանում:

Սվանեթի — Ինգուրի և Ցիենիս-Ծղալի գետերի վերին
հոսանքների ավազանում: Սվանեթին բաժանվում է յերկու մա-
սի՝ Վերին Սվանեթի, վորը վոռոգվում է Ինգուրի գետով և
Ներքին Սվանեթի, վոր վոռոգվում է Ցիենիս-Ծղալի գետով:
Այսպիսով, Սվանական լեռնաշղթան Սվանեթին բաժանում է
յերկու մասի:

Մենգրելիա — տարածվում է Ցիենիս-Ծղալիի միջին
հոսանքից մինչև Սեվ ծովը:

Գուրիա — ընկած ե Ռիոնի գետի ներքին հոսանքից գե-
տի հարավ, մինչև Մեսխեթի լեռնաշղթան՝ Սեվ ծովի ափին:

Մեսխեթի և Զավախեթի — Կուր գետի վերին հոսան-
քի ավազանում:

Բորչալո — Խրամի և Ալգեթի գետերի ավազանում:

Մթիւլեթի և Փշավ-Խելուրեթի — Արագվի գե-
տի ակունքներում:

Թուշեթի — Ալագանի գետի ակունքում:

Խեվի — Թերեք գետի ակունքներում:

Այսպիսով, Վրաստանի այս անկյուններից Սեվ ծովի ափե-
րին անմիջապես հարում են՝ Մեգրելիան և Գուրիան: Հստ
իրենց մակերևույթի մեծ մասամբ հարթություններ են՝ Մեգ-
րելիան, Խմերեթին, Քարթլին, Կախեթին, իսկ մնացածները
մեծ մասամբ լեռնոտ են:

Վարժուքյուն. — Դտեք քարտեզի վրա Վրաստանի այս ան-
կյունները:

ՎՐԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՍԵՐԸ

Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմում մտնում են՝ յերեք ինքնավար մասեր՝ Արխազական Խորհրդային Սոցիալիստական Ինքնավար Հանրապետությունը (գլխավոր քաղաքն ե Սոռլիումին), Աջարական Խորհրդային Սոցիալիստական Ինքնավար Հանրապետությունը (գլխավոր քաղաքն ե Բաթումին) և Հարավ-Ոսեթական ինքնավար մարզը (գլխավոր քաղաքն ե Ստալինիրին):

Արխազական Խորհրդային Սոցիալիստական Ինքնավար Հանրապետությունը գտնվում է Վրաստանի հյուսիսարևեմտյան մասում, Սեվ ծովի ափին:

Աջարական Խորհրդային Սոցիալիստական Ինքնավար Հանրապետությունը գտնվում է Վրաստանի հարավ-արևմտյան մասում, Սեվ ծովի ափին:


Հարավ-Ոսեթական ինքնավար մարզը գտնվում է Քարթլիի հարթությունից հյուսիս, Կովկասիոնիի լեռնաշղթայի հարավային լանջերին:

Վարժություններ. — 1. Գտեք քարտեզի վրա Արխազական ԽՍԻՀ, Աջարական ԽՍԻՀ և Հարավ-Ոսեթական ինքնավար մարզը՝ իրենց գլխավոր քաղաքներով: 2. Վրաստանի ուրվագծային քարտեզի վրա կարմիր գիծ անցկացրեք Արխազիայի, Աջարիայի և Հարավ-Ոսեթի սահմաններով և համապատասխան տեղերում գրեցեք նրանց գլխավոր քաղաքների անունները:

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ԿՅԱՆՔԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒԹ

Կ լի ման. — Լեռնային շրջաններում կլիման ընդհանրապես ավելի ցուրտ է, վորովհետև վորքան տեղի դիրքը բարձր ե լինում, ջերմությունն ել այնքան պակաս ե լինում: Ահա թե ինչու ամառվա շոգին հարթավայրերի բնակիչները գերադասում են ամառն անցկացնել ամառանոցներում: Սակայն, վրա փոխարեն լեռներում ձմեռը միշտ խիստ ե լինում: Այստեղ ձմեռը շուտ է գալիս, իսկ ամառը՝ ուշ: Տաք յեղա-

նակը կարճատեև ե լինում վոչ միայն ամբողջ տարվա ընթացքում, այլ, նույնիսկ, առանձին որպա ընթացքում: Բարձր լեռների կատարներն ու գագաթները ստվեր են զցում տեղական բնակավայրերի վրա, և արեւ շատ կարճատեև ե տաքացնում ու շուտով թաղնվում ե լեռների հետեւ: Ճանապարհները դեռ աշնան կեսին ծածկվում են ձյունով, և հաճախ խոր ձյունը, բուքն ու փոթորիկը և ձյան կույտերը դժվարացնում են շարժումը, իսկ յերբեմն ամբողջ ձմեռվա ընթացքում հաղորդակցությունը բոլորովին կարվում է վորոշ տեղերում:



Հավերժածածյուն լեռներ

Իր բարձրությամբ առանձնապես աչքի յե ընկնում կովկասիոնին, վորի կատարներն ու գագաթները ծածկված են հավերժական ձյունով և սառցագաշերով:

Սակայն Հարավային լեռնաշխարհը, կովկասիոնիի հետ համեմատած, ունի աննշան բարձրություն: Նրա գագաթներն ու կատարները չեն ծածկվում հավերժական ձյունով, վորովհետև նրա գագաթներից վոչ մեկը ձյան սահմանագծից չի բարձրանում: Հարկավոր ե միայն նշել, վոր այստեղ ավելի բարձր

մասերում շուտ և ծյուն գալիս և նստում եւ գրեթե մինչեւ տամավակեսը։ Այսպիսով, Հարավային լեռնաշխարհը, Կովկասիոնիի հետ համեմատած, ավելի պակաս ցուրտ շրջան է։ Այստեղ ցուրտը մեղմանում է, վորովինետե Հարավային լեռնաշ-



ԵՐԵՎԱՆ

խարհը, ի տարբերություն Կովկասիոնիի, ընկած և ավելի հարավ և ավելի մոտ եւ տաք յերկրներին։ Բացի դրանից, Կովկասիոնին պաշտպանում եւ մեր յերկիրը հյուսիսային ցուրտ քամիներից և, հետեարար, Հարավային լեռնաշխարհում,

Նրանից ավելի հարավ եւ գտնվում այսպիսի սառնամանիք, վորպիսին կա Կովկասիոնիի կատարներին, գագաթներին և հյուսիսային լանջերին։

Սեզ ծովի աղղում եւ Կովկասիոնիի հյուսիսարևմայան և Հարավային լեռնաշխարհի արևմայան մասերի վրա, դրա համար ել լեռնային շրջանների այդ մասերում ձմեռն ավելի մեղմ է, մթնոլորտային տեղումներն ավելի շատ են։ Մեր լեռնային շրջանների մնացած մասերում ծովի աղղեցությունը թույլ եւ ծիշտ է, լեռնային ողի ցուրտ շերտերում մթնոլորտային տեղումներ կարող են առաջանալ նույնիսկ աննշան քանակությամբ բարձրացած գոլորշուց, բայց նկատի ունենալով այն, վոր մեր լեռնային շրջանների կենտրոնական և արևելյան մասերում ծովի աղղեցությունն ավելի թույլ ե, և Սեզ ծովից փչող քամիներն արևմտյան մասերի հետ համեմատած ավելի սակավ են ամպեր հավաքում, այդ իսկ պատճառով այստեղ կլիման ավելի չոր է։

Բուսականությունը և կենդանական աշխարհը՝ լեռնային շրջաններում բուսականությունը ճոխ եւ բազմազան։ Լեռների ստորոտներին բուսականությունն անտառներում այնպիսին է, ինչպես հովիտներում—սաղարթավոր տեսակը՝ կաղնի, հաճարի, նշտարի, լորի, տիկի և այլն։ Այդպիսի բույսերի մեծ մասամբ կարելի յե հանդիպել ծովի մակերեսույթից մինչեւ մեկ կիլոմետր բարձրության վայրերում։ Ավելի բարձր տեղերում սկսվում են խառն անտառներ, ուր իրար կողքի առում են ծառերի սաղարթավոր և փշտերև տեսակները. այստեղ կաղնիների, հաճարիների և շագանակենիների կողքին հպարտորեն վերև են ձգվում անուշաբույր և բարեձև նոճիներն ու յեղենիները։ Այսպես շարունակվում է մոտավորապես մինչեւ մեկ և կես կիլոմետր (ծովի մակերեսույթից)։ Ավելի բարձր՝ ամբողջ տարածությունը բռնում են համատարած վշատերև անտառները. ամեն կողմ յերեսում են միայն նոճիներ, յեղենիներ և արծաթափայլ կեշիներ։ Փշտերև անտառները տարածվում են մոտ յերկու կիլոմետր բարձրության վրա (ծովի մակերեսույթից)։ Իսկ հեռվում՝ ավելի բարձր

մասերում անտառն աստիճանաբար նոսրանում ե, և սկսվում
են թփուտները, վորոնց հաջորդում են ալպյան մարգագե-
տինները, վորոնք ձգվում են մինչև ձյան սահմանագիծ՝ հա-
ըստ խիտ ու բարձր խոտերի մեջ ցաք ու ցրիլ աճող բազ-
մազան ծաղիկներով։ Ձյան սահմանագիծ քիչ բարձր սկսվում
է ձյան և սառցի թագավորությունը։



Կոտորի (Մկներություն)

Այսպիսով, բուսականությունը լեռներում փոխում է իր
դեմքը՝ նայած տեղի բարձրության, վորովիտե վորքան բարձր—
այսքան պակասում է ջերմությունը, և նման բարձր վայրերում
կարող են աճել միայն այնպիսի բուսական տեսակներ, վորոնք
հարմարվել են ցուրտ միջավայրին և հեշտությամբ են դիմա-

նում կլիմայի խստությանն ու դաժանությանը։ Հստ բույսե-
րի գասավորման կարելի յե դատել, թե ինչպիսի վայրում
ենք մենք գտնվում՝ տաք, թե ցուրտ յերկրում։ Բուսական
աշխարհը — դա կլիմայի յուրատեսակ հայելի յե, վոր արտացո-
լում ե նրա տեղական առանձնահատկությունները։

Ճոխ և բազմազան անտառային բուսականությամբ առանձ-
նապես հարուստ են Կովկասինիի և Հարավային լեռնաշխար-
հի արևմտյան մասերը, վորը և բացատրվում ե Սեվ ծովի ազ-
գեցությամբ։ Անտառներով հարուստ են նաև Հարավային լեռ-
նաշխարհի առանձին տեղերը, որինակ՝ Աբասթումանիի և Բոր-
ժումիի կիրճերը։ Մեր լեռնային շրջանների կենտրոնական և
առանձնապես արևելյան մասերը համեմատաբար հարուստ չեն
անտառներով, վորովինետե այդ տեղերում կլիման ավելի չոր ե։

Լեռների լանջերին հաճախ պատահում են այնպիսի տե-
ղեր, վորոնք ծածկված են հյութեղ խոտով. դրանք կոչվում են
արոտատեղիներ, վորտեղ ամառը հոտերն են արածում։

Լեռներում բազմազան ե նաև կենդանական աշխարհը։
Այստեղ ընտանի կենդանիներից աչքի յեն ընկնում՝ խեվսու-
րական կովը, թուշի վոչխարը և արխազական ձին։ Լեռներում
կան և անտառային գազաններ՝ արջ, աղվես, լուսան, շնա-
գայլ, ինձ, գայլ և այլն։ Ժայռոտ լեռների սեպ լանջերին քա-
րիցքար ցատկում են՝ վայրի այծը, վայրի վոչխարը, քարայծը,
այծյամը։ Յեղջերուներ տեղ-տեղ պահպանված են Բորժումիի
կիրճում։

Գազանների վորսը կարգավորելու համար խորհրդային իշ-
խանությունը ձեռք է առնում հատուկ միջոցներ։ Բոլոր վոր-
սորգները խմբվել են վորսորդների միության մեջ, մշակված
են վորսորդության կանոններ, թե վոր ամսին ինչ գազան է
թույլատրվում վորսալ։ Յեղջերուների վորսը բոլորովին արգել-
ված է, քանի վոր նրանք մեզ մոտ գրեթե ամբողջապես վո-
չընչացված են, վորովիտե հնում նրանց վայրենաբար կոտո-
րում են։


Լեռնային շրջաններում թռչուններից հայտնի յե լեռնա-
յին արծիվը։

Հանքային հարստությունները. — Վրաստանի լեռնային շրջանների՝ կովկասիոնիի և Հարավային բարձրավանդակի լնդերքում կան շատ հանքային հարստություններ։ Դրանցից ամենակարևորներն են՝ մանգանի հանքը — կվիրիագետի կիրճում, վորն ըստ իր հանքային վրակի և պաշարի գրավում ե առաջին տեղերից մեկն ամբողջ աշխարհում։ Նույնպիսի մեծ նշանակություն ունի մեզ համար քարածուխը, վորն արդյունահանվում ե Տղիբուլում և Տղվարչելում։ Քարածի տեսակետից Վրաստանն առաջին տեղն ե գրավում Անդրկովկասում։ Բացի գրանից, Վրաստանում արդյունահանվում են՝ գումբրին — Քութախիլի մոտ, բարիտ — Լեշխումիի լեռներում, վիմագրական քար — Ալգեթի և Կախեթիի կիրճերում, ցեմենտ — Կասպիի մոտ։ Ունենք նույնպես նավթի հանքատեղեր Շիրաքում, Գուրիայում, վոսկի — Սվանեթում և այլն։ Խորհրդային իշխանության հաստատումից հետո, մեզ մոտ առանձին ուշադրություն են դարձնում հանքային հարստությունների հետազոտմանը, արդյունահանմանը և մշակմանը։ Վրաստանի լեռներում հանքային աղբյուրներ շատ կան։ Դրանցից նշանակալից են Բորժոմիի, Սահիրմեյի, Զավայի, Ծաղկերիի, Ուծերայի հանքային աղբյուրները։ Խորհրդային իշխանության որով ծավալվեց Բորժոմիի, Զավայի և Սահիրմեյի ջրերի արտադրությունը։ Այդ ջրերն արտահանվում են հեռավոր յերկրներ։

Բնակչությունը և տնտեսությունը. — Կովկասիոնի լեռներում և կիրճերում ապրում են շատ տարբեր ժողովուրդներ՝ լեռնականներ ընդհանուր անվան տակ, լեռնականներ են համարվում՝ արխազները, սվանները, ոսերը, մոխեները, մթիունները, խեռունները, փշավները, թուշերը,

լեռնականների բնակած շրջանները և գյուղերն իրարից բաժանված են բարձր ժայռերով, հավերժածյուն լեռներով, խոր կիրճերով։ Մի շրջանից մյուսն անցնելու համար պահանջվում ե առանձին ճարպիկություն։ Նեղ կածանները հաճախ դալարվելով անցնում են վտանգավոր վերելքներով և դա-

ռիվայրներով, թեք լանջերով ու անդունդների յեզերքներով։ Գյուղերը նույնպես ցրված են լեռնալանջերին և այնտեղ ծվարել վորպես արծվի բներ։ Գյուղերից մի քանիսը հաճախ անմատչելի յեն ձմեռը, յերբ խոր ձյունը կտրում ե նրանց ճանապարհը։



Սվանեթիի նոր խճողին

Խորհրդային իշխանության հաստատումից առաջ լեռնականները շատ հետամնաց եյին։ Գրագիտառությունը համարյաբուրովին տարածված չեր նրանց մեջ, Սնոտիապաշտությունը խորն եր զցել իր արմատները։ Լեռնականներն ապրում եյին աղքատ, չափազանց նեղ, մութ և կեղառա բնակարաններում, ուր մարդու հետ մեկտեղ պատսպարվում եր նաև անասուններ։ Զանազան հիվանդությունների պատճառով շատերն եյին մեռնում։ Ամենքից շատ հարստահարվում և շահագործվում եյին աշխատավոր լեռնականները։ Նրանց կողոպատում, տներն ավերում եյին ինչպես տեղական կալվածատերերը, նույնպես և ցարկան աստիճանավորները։ Բոնությամբ իրենց լավագույն


հողերից կտրված աշխատավոր լեռնականները թագնվում եյին թեև անպտուղ, սակայն անմատչելի լեռների ճեղքերում, ուր կարելի յեր գոնե ազատ շունչ քաշել: Իսկ կալվածատեր լեռնականներն իրենց պալատներում և ամրոցներում պլաններ եյին կազմում՝ աշխատավորներին ավելի ուժեղ կերպով ճընշելու և կողոպտելու համար:

Փակ կյանքի պայմաններում լեռնականների մեջ առաջ եյին յեկել ուրույն բարքեր և սովորություններ: Իրենց կենցաղային հատկանիշներով (շենքեր, բակ, հագուստ, տնտեսություն) նրանք խիստ տարբերվում եյին հովտի բնակիչներից:

Խորհրդային իշխանության հաստատումից հետո լեռնականներն սկսեցին ապրել բոլորովին նոր ձեռք: Աշխատավոր լեռնականները թոթափեցին ինչպես ներսի, այնպես ել դրսից յեկած տերերի ճնշման և բռնության լուծը: Համատարած գրագիտությունն ընդգրկել ե ամբողջ բնակչությանը: Բացված են դպրոցներ: Մացված ե ընդհանուր պարտադիր ուսում: Լեռնային շատ վայրերում բացված են հիվանդանոցներ, ուղարկված են մասնագետ բժիշկների խմբեր՝ բնակչությանը տեղում բժշկական ոգնություն ցույց տալու համար: Անդուկ պայքար ե տարվում հնից մնացած սովորությունների և մնութիապաշտության դեմ, և հին, մեռնող կենցաղի ավերակների վրա կառուցված ե նոր, սոցիալիստական կյանք: Առանձին ուշադրություն ե նվիրվում ճանապարհային շինարարությանը: Նոր ճանապարհներ են կառուցված, որինակ՝ Սվանեթում, Թուշեթում, Հարավ-Ոսեթում: Բարելավված են հին ճանապարհները, Վրացական խճուղին, Ռատան խճուղին, Արխաղական ճանապարհները: Նախապատրաստական աշխատանքներ են կատարվում կառուցելու տրանսկովկասյան լեռնանցքային յերկաթուղի, վորը կտրելու յե կովկասիոնի գլխավոր լեռնաշղթան կենտրոնական մասում և Վրաստանը միացնելու յե ամենակարճ ճանապարհով ԽՍՀ Միության կենտրոնի հետ:

Որեցոր զարգանում ե արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը: Արդյունահանվում և մշակվում են հանքային հարստությունները:

Լեռնային արդյունաբերության բնագավառում հայտնի յեն Ճիաթուրայի մանգանի, Տղիբուլիի և Տղվարչելիի քարածխանքերի, Քութախսիի մոտ գտնվող գումբրինի և բարիտի, Ռածայի մոլիբդենի, Խելիի և Բակուրիանիի անդեղիթի, Ալգեթի Կիրճի վիմագրական քարի մշակումը, Շիրաքի նավթը և այլն:



Ռիոնդես—Զագես

Լեռնային արագընթաց գետերի ուժը՝ սպիտակ ածուխն ոգտագործվում ե Զագես, Ռիոնդես և այլ հիդրոելեկտրակայանների համար:

Շատ ե զարգացել անտառային արդյունաբերությունը: Շատ տեղերում աշխատում են սղոցագործարաններ: Փայտամշակմանը նույնպես մեծ ուշադրություն են դարձնում: Այդ տեսակետից նշանավոր ե Ինգուրիի թղթի գործարանը Զուգդիդիի մոտ, վորը բնափայտից մշակում ե բարձրորակ թուղթ: Առաջներում յերկրագործությունը լեռներում հետամնաց եր: Իսկ ներկայումս այստեղ մեծ տեղ են զրավում արտերը, բանջարանոցները և այգիները, վորոնք լավ բերք են տալիս:

Լեռնային արոտատեղիներում զարգացած ե անսանապահությունը: Բազմացնում են՝ այծ, յեղ, կով, վոչխար, ձի և

այլն։ Կառուցված են կաթնամթերքի գործարաններ՝ պահիր, յուղ, կարագ պատրաստելու համար։

Իրենց բնակչության քանակով լեռնային շրջանները զիջում են հովիտներին. բոլոր լեռնականների ընդհանուր թիվը հավասար է Վրաստանի ամբողջ ազգաբնակության մոտ մեկ տասերորդ մասին։

Լեռնային շրջաններում հանդիպում են առավելապես գյուղեր, այնտեղ քաղաքներ բոլորովին չկան, յեթե չհաշվենք նրանցից մի քանիսը, վորոնք գտնվում են լեռների և կիրճերի ստորոտներին։ Լեռներում հազվագյուտ չեն ամառանոցային վայրերն ու կուրորտները, ուր ստեղծված են լավագույն պայմաններ՝ հանգստի և բժշկության համար։ Ամառանոցներում և կուրորտներում մեր առողջության վրա բարերար ազգեցություն են գործում լեռնային մաքուր ողջ, արևի ճառագայթները, նոճիների պուրակները, հանքային և բուժիչ աղբյուրները։ Այդ տեսակետից մեզ մոտ հայտնի յեն՝ Աբասթումանին, Բորժոմին, Բակուրիանին, Բախմարոն, Շովին, Զավան, Սահմեն, Ծղալթուրոն, Ախթալան, Մենջին և այլն։

ԲՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՅԱՆՔԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՐԹԱՎԱՅՐԵՐՈՒԻՄ

Կ լ է մ ա ն. — Հարթավայրերի արևմտյան և արևելյան մասերը տարբերվում են իրարից ինչպես իրենց բարձր դիրքով (ծովի մակերեսութից), այնպես ել կլիմայի առանձնահատկություններով։

Կոլխիդայի դաշտավայրին մեծապես ազդում է Սեվ ծովը, իսկ Քարթլի-Կախեթի հարթությունները, վորոնք անջատված են Սեվ ծովից Սուրամիի լեռնաշղթայով, ծովի ազգեցությունն ավելի քիչ են կրում։ Դրա համար ել Կոլխիդայի դաշտավայրերում ձմեռն ավելի տաք և լինում, սակայն Քարթլի-Կախեթի հարթություններում ձմեռը խիստ ե, իսկ ամառը՝ շատ տաք։ Բայց դրանից, արևելյան մասում ձմռան խստությունն ուժեղացնում է և տեղի բարձր դիրքը։ Կոլխիդայի դաշտավայրը մթնոլորտային տեղումների տեսակետից ել շատ ավելի

հարուստ է, քան Քարթլի Կախեթի հարթությունները։ Որինակ, Քութափսում մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը հավասար է 1300 միլիմետրի, իսկ Թբիլիսում՝ 500 միլիմետրի։ Մթնոլորտային տեղումների քանակն ընդհանրապես պակասում է այն չափով, վոր չափով տվյալ վայրը հեռանում է ծովի ափից արևելյան ուղղությամբ։ որինակ, Բաթումում (Սեվ ծովի ափին) մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը հավասար է 2529 միլիմետրի, բայց այդ տարբերությունն ել ավելի յէ մեծացնում Քարթլի-Կախեթի լեռնաշղթան, վորը կապում է Սեվ ծովից յեկող քամիների և ամպերի ճանապարհը։

Վրաստանի հարթավայրերում կլիման ընդհանրապես մեղմ է, կարելի յե ասել, մերձարևադարձութիւն։ Միայն արևմտյան մասումն է, վոր կլիման խոնավ տաք է, իսկ արևելյան մասում՝ չոր ու տաք։ Յերբեմն յերաշտ և լինում է՝ արևմտյան մասում, բայց տեսական յերաշտն ավելի հատկանշական է Արևելյան Վրաստանի համար։ Քարթլի-Կախեթի հարթություններում յերաշտը յերբեմն տեղում է յերեք, նույնիսկ չորս ամիս։

Վրաստանի հարթավայրերում տարվա ամենաանձրեային շրջանը գարունն է և աշունը։

Վրաստանի կլիմայի համար հսկայական նշանակություն ունի և Կովկասիոնի լեռնաշղթան, վորը պաշտպանում է մեր յերկիրը հյուսվասային ցուրտ քամիներից։

Քանի վոր Վրաստանի հարթավայրերում հաճախակի անձրեղ սովորաբար գարնանը և աշնանն է գալիս, դժա համար ել գետերն սկսում են վարաբել հենց այդ ժամանակ։ Գետերի վարաբում և առաջացնում նաև ձնհալլ լեռներում, վորի հետևանքով մեր գետերը վարաբում են և ամռանը։ Սեր գետերը ծանծաղում են ձմռանը, յերբ ձնհալլ լեռներում արդեն գաղարել ե, և հովիտներում ել անձրեի փոխարեն մեծ մասմբ ձյուն է տեղում։

Խորհրդային իշխանությունը պայքար է մղում կլիմայական աննպաստ պայմանների դեմ։

Յերաշտային վայրերը, ինչպես հայտնի յե, կարիք են զգում արհեստական վոռոգման Խորհրդային իշխանության ուսով շատ տեղերում են բացել վոռոգող ջրանցքներ։

Խոնավ, ճահճային վայրերը, ընդհակառակը, չորացման կարիք են զգում։ Առանձնապես ճահճապատ եր կոլխիդայի դաշտավայրը Ռիոնի ներքին հոսանքի յերկարությամբ, ուր ճահճները տարածել եյին ժանտ ջերմախտ (մալարիա), և հողի մեծ տարածություններ դուրս եյին մնացել տնտեսական ոգտագործումից։ Կոլխիդայի ճահճների (վորոնց դարեր շարունակ ձեռք չեր կպել) չորացմանն առաջին անգամ ձեռնարկեց խորհրդային իշխանությունը։ Այստեղ արդեն չորացված ե զգալի չափով հողի տարածությունը, վորի մի մասն ոգտագործում ենք ցիտրուսի և թեյի պլանտացիաներ գցելու համար։

Հողը. — Վրաստանում հողը բազմազան ե, վորի լավագույն տեսակներն են համարվում սևահողն ու կարմրահողը։ Սևահողը մեծ մասամբ տարածված ե Քարթլի-կախեթի հարթություններում, ինկ կարմրահողը՝ միայն Կոլխիդայի դաշտավայրում, այն ել՝ գլխավորապես Սեվ ծովի ափերին։ Կարմրահողում հիանալի աճում են տաք յերկրների բույսերը, վորովնետե այդ հողը յերկար ե պահպանում ջերմությունը և ունի չափավոր քանակությամբ խոնավություն։

Ընդհանրապես, Վրաստանի հարթավայրերում հողը բավականաշափ բերրի յե, բայց շատ տեղերում կարիք ե զգացվում պարարտացման, վորովինետե յերկարատե մշակման հետևանքով ուժասպառ յե յեղել։ Խորհրդային իշխանությունն առանձին ուշադրություն ե դարձնում հողի պարարտացմանը։

Բուսականությունը և կենդանական աշխարհը. — Վրաստանի հարթավայրերը ծածկված են ճոխ բուսականությամբ։ Կոլխիդայի դաշտավայրում հիանալի յեն աճում տաք յերկրների բույսերը՝ թեյի թուփ, ցիտրուսներ (մանդարինի, կիտրոնի, նարնջի ծառեր), արմավենի, եվկալիպտ, դափնի, շիմշիտ, խաղողի վորթ, թուզ, սերկեիլ, դափնեկեռաս և այլն։

Տաք յերկրների բույսեր հանդիպում են նաև Քարթլի-կախեթիի հարթություններում, բայց այստեղ դրանք այնպիսիներ են, վորոնք հարմարվել են չոր կլիմայի պայմաններին։ որինակ՝ նուշ, հունաբ, շիմշիր, խաղողի վորթ և այլն։

Վրաստանի հարթավայրերում սաղարթավոր տեսակներից տարածված են՝ կաղնի, հաճարի, նշդարի, լորի, տիկի, ընկուգնի, շագանակենի և այլն։

Այն հարթավայրերում, ուր ուժեղ յերաշտ ել լինում, աճում ե միայն խոտը, վորը գրեթե ամբողջովին խանձվում ե ամառվա տաք ամիսներին։ Այդ ժամանակ մերկացած հարթություններն ունենում են դեղնավուն-գորշ գույն։ Այդպիսի տեղեր կոչվում են տափաստաններ, ուր ամառը խոտը խանձվում ե, կանկենդան բնությունը կենդանանում ե միայն գարնանն ու աշնանը։ Այդպիսի տեղեր են, որինակ, Ղարյացի տափաստանը, Շիրաքի տափաստանը։ Տափաստաններում ավելի շատ աճում են վետրախոտ, սիրախոտ և այլ խոտեր, վորոնք հեշտությամբ են դիմանում չոր կլիմային։

Վրաստանի հարթավայրերում ապրում են անտառային, լճային, ճահճային և տափաստանային բազմատեսակ կենդանիներ։ Անտառային գաղաններից մեծ քանակությամբ հանդիպում են՝ արջ, գայլ, լուսան, ինձ, կզաքիս, աղվես և այլն։ Տափաստաններում ապրում են՝ արջամուկ, առնետ, դաշտային մուկ, աքիս, բորենի, մողես, ոձ և այլն։ Անտառներում ապրում են հետեւյալ թռչունները՝ մայրեհավ, լեռնային հընդկանակ, ցախաքըր և այլն, տափաստաններում և լեռնալանջերին՝ փասիան, լոր, լեռնային կաքավ (վրացերեն — կակարի), ցին, ճուռակ, տափաստանի՝ արտույտ և այլն, իսկ լճերում և ճահճներում՝ կոռնկ, արագիլ, սագ, բաղ, կարապ և այլն։

Այսպիսով, բուսականությունն ու կենդանական աշխարհը համեմատաբար հարուստ ու բազմազան ե Վրաստանի հարթավայրերում։

Բնակչությունը և տնտեսությունը. — Վրաստանի հարթավայրերում մեծ ե բնակչության թիվը։ Այստեղ կան շատ գյուղեր և քաղաքներ։

Վրաստանի բոլոր քաղաքները գրեթե կենտրոնացած են հարթավայրերում։ Ամենից ավելի մեծաքանակ բնակչություն ունեցող գյուղերը գտնվում են Կոլխիդայի հարթավայրում և Ալաղանիի հովտում։

Վրաստանի հարթավայրերում բնակչության բաժանումն անհամաչափ է։ Չոր տափաստաններում և ճահճային վայրերում բնակչությունն ավելի նոսր է, մեծ խտացածությունն նկատվում է գետափերին՝ Կուրի և Ռիսնի ավազաններում, գյուղատնտեսական և արդյունաբերական կենտրոններում։

Հարթավայրերի բնակչության ազգային կազմը բազմազան է։ Գերակշռում են վրացիները (իրենք իրենց անվանում են քարթվելներ), իսկ վրացիներից հետո, իրենց քանակով մասցածներից շատ են ռուսները, հայերը և ադրբեջանցիները։

Վրաստանի հարթավայրերը, իրենց բնության բազմազանության շնորհիվ, պիտանի յեն գյուղատնտեսության բոլոր ճյուղերի համար։ Այստեղ լավ են աճում հացահատիկային բույսերը, լավ բերք են տալիս պտղատու այգիները, ցիտրուսային մշակույթները (մանդարին, նարինջ, կիտրոն), խաղողի այգիները, բանջարանոցները, բոստանները, տեխնիկական մշակույթները (ծխախոտ, բամբակ, ռամի, կանեփ, սոյա և այլն), թեյի պլանտացիաները։ Այստեղ մշակվում են թանգարժեք ծառերի տեսակներ՝ տունդ, եվկալիպտ։ Բնակչությունն զբաղվում ենաև շերամաբուծությամբ, մեղվարուծությամբ, թռչնաբուծությամբ, անասնապահությամբ և այլն։

Գյուղատնտեսության ճյուղերից մի քանիսը կարելի յեղարգացնել առավելապես Կոլխիդայի գաղտավայրում (թեյի պլանտացիաներ, մանդարինի, կիտրոնի և նարինջի այգիներ), իսկ մի քանիսն ավելի լավ են մշակվում Քարթլի-Կախեթի հարթություններում (որինակ, հացահատիկի և բամբակի կուլտուրաները)։

Անասնաբուծության համար ավելի նպաստավոր են Քարթլի-Կախեթի ընդարձակ հարթությունները, վորոնք ծածկված են մարգային բուսականությամբ։ Թռչնաբուծության համար ավելի նպաստավոր պայմաններ կան Կոլխիդայի գաղտավայրում։ Հա-

ցահատիկներից Կոլխիդայի գաղտավայրում ամենից լավ աճում է յեղիպտացորենը, իսկ Քարթլի-Կախեթի հարթություններում՝ ցորենը։ Գյուղատնտեսության մի քանի ճյուղերը (այգեգործություն, խաղողագործություն, բանջարագործություն) միևնույն հաջողությամբ աճում են Վրաստանի յերկու մասումն եր։

Մինչև խորհրդային իշխանության հաստատումը Վրաստանի հարթավայրերում բնակչությունն զբաղվում եր գլխավորապես հողագործությամբ՝ ցորենի և յեղիպտացորենի մշակումով, այն ել հնացած, պապենական անպետք միջոցներով։ Արժեքավոր մշակույթները գրեթե բացակայում եյին. մեկ այստեղ, մեկ այնտեղ պատահում եյին բամբակի, թեյի թփի, ծխախոտի վոչ մեծ առանձին հողամասեր։ Գյուղատնտեսությունը գտնվում եր զարգացման ցած աստիճանի վրա։ Խորհրդային իշխանության հաստատումից հետո գյուղատնտեսությունն արագորեն զարգացավ։ Մենք մեծ ուշադրություն ենք դարձնում գյուղատնտեսական հումքի վերամշակմանը։

ԲՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՑԱՆՔԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄՍՍԵՐՈՒՄ


ԱԲԽԱԶԱԿԱՆ ԽՍԻՀ

Աբխազական Խորհրդային Սոցիալիստական Ինքնավար Հանրապետությունը գտնվում է Մեկ ծովի ափին, Վրաստանի հյուսիս-արևելյան մասում

Հստ իր մակերեսույթի Աբխազիան բաժանվում է յերկու գլխավոր մասերի՝ լեռնային և ծովափնյա։ Կովկասիոնիի լեռնաշղթան պաշտպանում ե այս յերկիրը հյուսիսային ցուրտ քամիներից, դրա հետ միասին Մեկ ծովը մեղմում է ձմեռը, վորի հետևանքով Աբխազիան հանդիսանում է տաք կլիմա ունեցող յերկիր։ Այստեղ ձմեռը հաճախ ծյուն չի գալիս, սառնամանիքը հազվագեղ յերեսույթ ե, ձմեռն անցնում է վորպես

բարեխառն գարուն։ Արխագիտում աճում են տաք յերկրների մշտադալար բույսեր։ որինակ՝ արմավենիներ։

Աբխազիան հարուստ է անտառներով։ Աբխազիայի անտառներում շատ կան թանգարժեք տեսակի ծառեր. որինալիցիմցիր, գեղջի (կարմիր փայտի ծառ)։



ԱՐԺԱՊԱԿԱՆ ԽՍԻՀ (ցույց ե տրված կետերով)

Աբխազիայի այգիներում մշակում են ցիտրուներ՝ ման-
դարին, կիտրոն, նարինջ, ձիթապտղուզ: Զարգացած են նաև ծխա-
լսոտի մշակույթը. այստեղ ստացվում է ընտիր տեսակի ծխա-
լսոտ: Իր ծխախոտի վորակով Աբխազիան գրավում է առաջին տե-
ղերից մեկն ամբողջ Խորհրդային Միության մեջ: Աբխազիայում
կան և թեյի պլանտացիաներ: Աբխազիայում բազմացնում են
ձիերի լավագույն տեսակները: Աբխազական մեղուն հայտնի յե-
ամբողջ աշխարհում: Աբխազիան հարուստ են նաև հանածոնե-
րով. այստեղ են գտնվում քարածխի խոշորագույն շերտերը
(Տղվարչելի): Այնուամենայնիվ, գլխավորն այն ե, վոր Աբխա-
զիան հանդիսանում է տաք ձմեռ ունեցող յերկիր և հայտնի
յե իր ձմեռային սքանչելի կուրորտներով:

Մինչև խորհրդային իշխանության հաստատումը Արքապահան հետամնաց յերկիր եր, իսկ այժմ նա համոզիսանում է Խորհրդային Միության առաջավոր հանրապետություններից մեկը։ Այստեղ զարգացել ե արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, Սուխումից մինչև Ճխակայա քաղաքը գցված ե յերկաթուղի, Սուխումից դեպի Ռուսաստան գցվում ե յերկաթուղի, վորով Արքապահան միանալու յե Խորհրդային Միության բոլոր շրջանների հետ Բարելավված ե Սուխումիի նավահանգիստը, Ոչեմչիրում կառուցվում ե նոր նավահանգիստ, վերանորոգված են խճուղիները։ Կառուցվում են գործարաններ, ֆաբրիկաներ, ելեկտրակայաններ։ Հիմնված են խորհրդային տնտեսություններ, գյուղացիները համախմբվել են կոլտնտեսություններում, և զարգանում ե Արքապահայի սոցիալիստական արնուսությունը։ Բնակչության մեջ տարածված ե գրագիտությունը, բացված են շատ գպրոցներ, գիտական հիմնարկություններ և ինստիտուտներ։

Համամիութենական կենտրոնական Գործադիր կոմիտեն
պարզեվատրել ե Աբխազիային Լենինի շքանշանով՝ տնտեսա-
կան և կուլտուրական շինարարության բնագավառում նրա ձեռք
բերած հաջողությունների համար։ Այսպիսով, Աբխազիան հան-
դիսանում ե առաջավոր շքանշանակիր հանրապետություն։


Արխազական ԽՍՀՀ գլխավոր քաղաքն եւ Սուխումին:

ԱՀԱՐԱԿԱՆ ԽՄՀՀ

Աջարական Խորհրդային Սոցիալիստական Խնքնավար Հանրապետությունը գտնվում է Եեվ ծովի ափին, Վրաստանի հարավ-արևմտյան մասում։

Հոտ իր մակերևույթի Աջարիան բաժանվում է յերկու գլխավոր մասերի՝ լեռնային և ծովափնյա։ Սեվ ծովը մեղմում է Աջարիայի ձմեռը, վորի հետևանքով Աջարիան հանդիսանում է տաք կլիմա ունեցող յերկիր։ Այստեղ մթնոլորտային տեղումներն առատ են։ Խորհրդային Միության մեջ վոչ մի տեղ մթնոլորտային տեղումներն այնքան շատ չեն, վորքան Աջարիայում, առանձնապես Բաթումիի և Չակվայի շրջակայ-

քում: Այստեղ տաք կլիման և առաս մթնոլորտային տեղումները նպաստում են տաք յերկրների բույսերի մշակմանը: Աջարիայի այգիներում հրաշալի յեն աճում մանդարինը, կիտրոնը, նարինջը: Աջարիան հոչակված է իր թեյի պլանտացիաներով:



Աջարական ԽՍԻՀ (ցույց ե տրված կետերով)

Մինչև խորհրդային իշխանության հաստատումը Աջարիան հետամնաց յերկիր եր, իսկ այժմ այնտեղ զարգացած ե սոցիալիստական տնտեսությունը: Հիմնված են խորհմտեսություններ, կոլտնտեսություններ, կառուցված են ֆաբրիկաներ, գործարաններ:

Բնակչության մեջ տարածված ե գրագիտությունը, բացված են շատ դպրոցներ, ինստիտուտներ, գիտական հիմնարկություններ: Աջարիան Խորհրդային Միության առաջավոր հանրապետություններից մեկն ե:

Աջարական ԽՍԻՀ զիմավոր քաղաքն ե Բաթումին: Բաթումին հանդիսանում է Խորհրդային Միության ամենակարևոր նավահանգիստներից մեկը:

ՀԱՐԱՎ-ՌՍԵԹԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶ

Հարավ-Ռսեթական ինքնավար մարզը գտնվում է Արևելյան Վրաստանում՝ կովկասիոնիկ լեռնաշղթայի հարավային լանջերին, Լիախվա և Քսանի գետերի ակունքների մոտ, Քարթլի հարթությունից դեպի հյուսիս: Հարավ-Ռսեթին գլխավորապես լեռնոտ յերկիր ե: Նա չի կրում Սեփ ծովի աղղեցությունը, դրա համար ել նրա կլիման խիստ ե: Հարավ-Ռսեթին հարուստ ե անտառներով: Այստեղ շատ կան ոգտակար հանածոներ. որինակ՝ մարմար, կապար, ցինկ և հանքային աղբյուրներ, որինակ, Ջավայում:



Հարավ-Ռսեթական ինքնավար մարզ
(ցույց ե տրված կետերով)

Մինչև խորհրդային իշխանության հաստատումը Հարավ-Ռսեթին հետամնաց յերկիր եր, իսկ այժմ նա արագորեն աճում ե և զարգանում: Բացված են շատ գոլորոշներ, բնակչության մեջ տարածված ե գրագիտությունը, զարգանում ե գիտությունը, գրականությունը: Զարգանում ե նաև արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը: Հիմնված են խորհմտեսություններ, կոլտնտեսություններ: Կառուցված են խճուղիներ: Հարավ-Ռսեթական ինքնավար մարզի գլխավոր քաղաքն ե Ստալինիրին:

ՎՐԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏԵՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Արդյունաբերության զարգացման համար Վրաստանում կան շատ նպաստավոր պայմաններ՝ ոգտակար հանածոների առատություն, սպիտակ ածխի հսկայական պաշար, անտառային մեծ տարածություններ և այլն։ Սակայն, մինչև խորհրդային իշխանության հաստատումն արդյունաբերությունն այնուամենայնիվ զարգացած չեր։ Ոգտակար հանածոները շահագործվում եյին միայն յերկու տեղում՝ ձիաթուրում և Տղիբուլում։ Ձիաթուրում հանգում եր մանգան, իսկ Տղիբուլում՝ քարածուխ։ Ձիաթուրայի և Տղիբուլիի հանքահորերում աշխատանքի պայմաններն անտանելի եյին, և այս բոլորի հետ մեկտեղ ամբողջ հարստությունը գլխավորապես ընկնում եր ոտարերկրյա կապիտալիստների ձեռքը, մասամբ ել՝ տեղական արդյունաբերողների։

Խորհրդային իշխանության հաստատումից հետո մանգանի և քարածի արտադրության հին ձեերը ձիաթուրում ու Տղիբուլում վերակառուցվեցին սոցիալիստական տնտեսության հիման վրա։ Այդ հարստությունների մշակմամբ զբաղվում ենքը՝ մեր սոցիալիստական պետությունը։ Աշխատանքի պայմաններն արմատապես փոխված են հանքահորերում։ Ձիաթուրայի և Տղիբուլի հին հանքերն ու հանքահորերը տեխնիկապես վերասարքավորված են։ Հանքի արդյունահանությունը տեղի յե ունենում գերազանցապես մեքենայի միջոցով։ Դրա համար ել հանքը հանգում ե շատ ավելի մեծ քանակությամբ։ Ձիաթուրում և Տղիբուլում բացված են նոր հանքեր ու հանքահորեր և, վոր ամենակարևորն ե, այժմ արդեն հանգող հումույթը վերամշակվում ե տեղում և տալիս ե արդյունաբերական մեծ արտադրանք։ Զեստաֆոնի քաղաքում կառուցված ե ֆերումանգանի գործարանը։ Զեստաֆոնի մանգանից արտադրում ե մանգանի և յերկաթի հալածոներ։ Այս գործարանը համարվում ե Խորհրդային Միության ամենախոշոր գիտաներից մեկը ծանր արդյունաբերության մեջ։

Հիմնված են և լայնորեն զարգանում են լեռնային արդյունաբերության նոր բնագավառներ։ Տղիարչելիի քարածի անշափի հարուստ շերտերն առաջին անգամ խորհրդային իշխանության որով շահագործման յենթարկվեցին։ Հանքահորերից ածուխը գուրս բերելու համար Տղիբուլում հատկապես կառուցվել ե յերկաթուղու ճյուղ։ Հսկայական նշանակություն ունեն նմանապես Շիրաքի նավթահանքերը։ Խորհրդային իշխանությունից առաջ Վրաստանում նավթ յերեք չեր հանգում։ Մեզ մոտ հանգում ե նաև գումբրին-Գումբրա գյուղում, Քութախիսի մոտ։ Բարիտը հանգում ե Քութախիսի մոտերքը և վերամշակվում Քութախիսում, մարմարը՝ Քութախիսի մոտ և Հարավ-Ռսեթում, վիմագրական քարը՝ Քութախիսի մոտ և Կախեթի շրջանում։

Այսպիսով, Վրաստանի հանքային հարստությունները ներկայումս բազմակողմանիորեն ոգտագործվում են մեր սոցիալիստական շինարարության համար։

Լեռնային արագընթաց աղբյուրների գահավիժող ջրի ուժը՝ սպիտակ ածխի վրա, միայն խորհրդային իշխանության որով ե, վոր ծառայում ե ժողովրդի շահերին։ Սպիտակ ածխի վրա մեծ քանակությամբ ոգտագործվում ե սոցիալիստական շինարարության մեջ։ Խորհրդային Վրաստանի հիգրոելեկտրակայաններից ամենանշանավորներն են Զագեսլավի և Ռիոնգեսլավի կառուցվում ե մի մեծ հիգրոելեկտրակայան՝ Խրամգեսլավը։ Ելեկտրիֆիկացիան մեծ նշանակություն ունի արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման համար։ Մեզ մոտ որեցորութեղանում ե սպիտակ ածխի ոգտագործումը, Ելեկտրոեներգիան լայնորեն կիրառվում ե մեր ֆաբրիկաներում և գործարաններում։ Սակավ կարելի յե պատահել այնպիսի շրջանային կենտրոնի կամ քաղաքի, վորն ոգտվելիս չինի ելեկտրոեներգիայից։ Ելեկտրական լուսավորությունը մտել ե նմանապես շատ և շատ գյուղեր։

Անտառային հարստությունների արդյունաբերական մշակումն սկսվեց տուաջին անգամ խորհրդային իշխանության

որով։ Այդ տեսակետից առանձնապես նշանավոր ե ինգուրիկ թղթի ֆաբրիկան՝ Զուգդիդի քաղաքի մոտ։

Շատ տեղեր կառուցված են սղոցագործարաններ։

Արդյունաբերական նշանակություն ունեցող անտառներով առանձնապես հարուստ են Աբխազիան, Հարավ-Ոսեթին, Սվանեթին, Թաճան և Լեչխումին։

Բացի լեռնային արդյունաբերությունից, մեզ մոտ ուժեղ կերպով զարդացած ե նաև գյուղատնտեսական հումութի մշակումը։ Մեր քաղաքներում և գյուղերում կառուցված են շատ ֆաբրիկաներ և գործարաններ, վորոնցից ամենանշանավորներն են՝ Թբիլիսիի մահուդի ֆաբրիկան, Քութախիի մահուդի ֆաբրիկան, մետաքսամշակման ֆաբրիկաներն ու գործարանները—Թբիլիսում, Քութախում, Սամտրեղիայում, Մախարաձե քաղաքում, Ծուլուկիձե քաղաքում և Թելավում, շաքարի գործարանը—Ագարայում, թեյի ֆաբրիկաները—Զակվայում, Մախարաձե քաղաքում, Զուգդիդում և այլն, ծխախոտի ֆաբրիկաները Թբիլիսում, Բաթումում, Սուխումում, Լագոգիխում, պահածոների գործարանները — Գորում, Քութախում, կաշվի գործարանները—Թբիլիսում։ Գինեգործության արդյունաբերական կենտրոններն են համարվում՝ Թբիլիսին, Ծինանդալին, Նապարեսլին և այլն։ Արդյունաբերական նպատակներով զարգնում են թանգարժեք մշակույթներ։ որինակ՝ ուամի, տունգ, եվկալիպտ և այլն։

Այսպիսով, ծանր և թեթև արդյունաբերությունն առաջ յեկան և զարգացան խորհրդային իշխանության որով։ մեր յերկրի գյուղատնտեսությունն ընդունեց արդյունաբերական բնույթ։ Գյուղատնտեսության մեջ առանձին ուշադրություն են պիրվում այնպիսի ճյուղերի զարգացմանը, վորոնք արդյունաբերության հումութ են մատակարարում։

Խորհրդային իշխանության հաստատումից առաջ վրաստանը հետամնաց գյուղատնտեսական յերկիր եր։ Այստեղ բնակչությունն զբաղվում եր գերազանցապես յերկրագործությամբ,

բայց, այնուամենայնիվ, հացը պակասում եր։ Վոչ վոք չեր նպաստում թանգարժեք մշակույթների զարգացմանը։ Բամբակը, թեյը, ծխախոտը գրավում եյին չնչին տարածություն։ Գյուղատնտեսության բոլոր ճյուղերը կանգնած եյին զարգացման ցածր աստիճանի վրա, և նրանցից ստացված յեկամուտները նույնպես աննշան եյին։

Խորհրդային իշխանության հաստատումից հետո, մեր յերկրի գյուղատնտեսությունը բոլորովին վերածնվեց։ Քարթլի-Կախեթի հարթությունների չոր տափաստաններն արհեստական կերպով վոռոգվում են ամենաբարձր տեխնիկայով կառուցված ջրանցքների միջոցով։ Այդ ջրանցքներից նշանավորներն են՝ Տիրագունիի ջրանցքը, վորն սկսվում է Լիախվա գետից, Ալաղանիի ջրանցքը՝ Ալաղանի գետից, Ղարայազի ջրանցքը՝ Կուր գետից։ Շատ տեղերում ճահճները չորացված են։ Կոլխիդայի ընդարձակ ճահճների չորացման աշխատանքները գեռնս ավարտված չեն և կատարվում են արագ տեմպերով։ Շատ տեղերում ուժառպառ և անպառող հողերը վերածված են արգավանդ հողերի։ Մեծացել ե ցանքերի տարածությունը, բարձրացել ե նույնպես բերքատվությունը։ Բացի հացահատիկներից, զարգանում են թանգարժեք մշակույթներ (ցիտրուսներ, թեյ, ծխախոտ, բամբակ)։ Մշակում են այնպիսի արդյունաբերական բույսեր, վորոնք առաջ մեզ բոլորովին անհայտ եյին (տունգ, եվկալիպտ, ուամի, կանեփ, շաքարի ճակնդեղ)։ Խաղողագործությունը դարձել ե գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը։ ուժեղ կերպով զարգացել ե այգեգործությունը, բանջարագործությունը, բոստանագործությունը, կերի խոտերի մշակումը՝ արդյունաբերական անասնաբուծության կարիքների համար։ Շերամաբուծությունը դարձել ե գյուղատնտեսության կարևորագույն ճյուղ։

Մեր գյուղատնտեսությունը զարգանում ե վորպես սոցիալիստական տնտեսություն։ ստեղծված են խոշոր կոլտնտեսություններ և խորհանտեսություններ։ Միայնակ տնտեսու-

թյունները մեզ մոտ հաղվադեպ յերևույթ են։ Գործածությունից գուրս են գալիս հին յերկրագործական գործիքները՝ արորը և գութանը։ Մեր սոցիալիստական դաշտերում աշխատում են հազարավոր տրակտորներ և զանազան գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ՝ հնձիչներ, քամհարներ, շարքացաններ, տրիերներ, կոմբայններ և այլն։ Վրաստանի զբաններում կան մեքենատրակտորային կայաններ. յերկրագործական և ագրոտեխնիկական գիտելիքները տարածվում են բնակչության լայն խավերում։

Սոցիալիստական աշխատանքի պայմաններում գյուղի աշխատավոր բնակչությունը արագ քայլերով առաջ է ընթանում գեղի ունեոր կյանք։ Մեզ մոտ քիչ չեն միլիոնատեր կոլտընտեսություններ, այսինքն՝ այնպիսիները, վորոնց յեկամուար համառում ե միլիոն ոռուբու։

Խ Ճ ՈՒ ՂԻՆ Ե Ր Ը

Վրաստանում քիչ չեն լավ խճուղիները։ Այդ ճանապարհները մեծ նշանակություն ունեն յերկրի զարգացման համար։ Խճուղիներից ամենանշանավորն են՝ Վրացական խճուղին—գնում ե Թբիլիսիից—Ռոջոնիկիձե քաղաքը, կտրելով Կովկասիոնի լեռնաշղթան։


Քարթլի-ի մերեթի խճուղին—Մցխեթից-Քութախի՝ Սուրամիի լեռնանցքի միջով։

Ոսեթական խճուղին—Քութախիից—Հյուսիսային Ոսեթի՝ Մամիսոնի լեռնանցքի միջով, կտրելով Կովկասիոնիի լեռնաշղթան։

Կախեթի խճուղին—միացնում ե Թբիլիսին Թելավիի հետ Գոմբորի լեռնանցքի միջոցով, կտրելով Կախեթի լեռնաշղթան։

Մեսխեթի խճուղին—Քութախիից—Ախալցիխե՝ Զեկարի լեռնանցքի միջոցով, կտրելով Մեսխեթի լեռնաշղթան։

Ախալցիխեյի խճուղին—Բորժոմից—Ախալցիխե, Աջար-Մեսխեթի խճուղին—Ախալցիխեյից—Աջարիա՝ Գողերձի լեռնանցքի միջով, կտրելով Արսիանի լեռնաշղթան։



Վրացական խճուղին
(ցույց ե արված կետերով)

Զավախեթի խճուղին—Բորժոմից—Ախալցիաքի՝ Ցիտա-Մղարո լեռնանցքի միջով, կտրելով Թրիալեթի լեռնաշղթան։

Խորհրդային իշխանությունը ձեռք ե առնում հատուկ միջոցներ՝ խճուղիներում յերթեեկությունը կանոնավորելու համար։ Վերականգնված և բարելավված են ամենագլխավոր ճանապարհները (Վրացական խճուղին, Քարթլի-իմերեթի խճու-

դին և այլն): Կառուցված են նոր խճուղիներ Սվանեթում, Թուշեթում, Հարավ-Ռսէթում, Խելսուրեթում և այլն:


ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԵՐԼ

Գլխավոր յերկաթուղային գիծն ունի հետեւյալ ուղղությունը. Թբիլիսիից — Բաթումի և Փոթի (գեպի Սեվ ծովը), Թբիլիսիից — Բաքու (գեպի Կասպից ծովը) և այդտեղից Ռուսաստան, ինչպես նաև Թբիլիսիից — Յերևան (գեպի հարավ): Գլխավոր յերկաթուղային գիծը տեղադրում է: Դրանցից ամենակարևորներն են Սեվծովյան յերկաթուղին (Յիակայա քաղաքից — Սուխումի), Կախեթի յերկաթուղին (Թբիլիսիից — Թելավ և Ծնորի), Բորժոմի-Բակուրիանի յերկաթուղին (Խաշուրից — Բորժոմի և Բակուրիանի), Տղիբուլի յերկաթուղին (Քութախիից — Տղիբուլի), Ճիաթուրայի յերկաթուղին (Շորապանից — Սաշխերե):

Խորհրդային իշխանությունը հատուկ ուշադրություն է դարձնում յերկաթուղային շինարարությանը, յերթեեկության կանոնավորմանը, ճանապարհների բարելավմանը: Կառուցված են նոր յերկաթուղային գծեր: Սեվծովյան յերկաթուղին (Յիակայա քաղաքից — Սուխումի), Գուրիական յերկաթուղին (Նախաներիից — Մախարաձե քաղաքը), Ռիոնի կայարանից Ծղալտուրո տանող յերկաթուղին: Գլխավոր յերկաթուղային գիծը ելեկտրիֆիկացման և յենթարկված Սամարեղիայից մինչև Թբիլիսի: Այս շրջանում ելեկտրատարներն են քաշում գնացքը:

Ն.Վ.Ա.Գ.Ն.Ա.ՅՈՒԹՅՈՒՆԸ

Նավագնացությունը զարգացած է Սեվ ծովում: Սեվ ծովի ափերին մենք ունենք մի քանի նավահանգիստ, գրանցից ամենակարեղեններն են Բաթումին, Փոթին և Սուխումին: Այս յերեքից ամենանշանակուլը Բաթումիի նավահանգիստն է, վոր աչքի յե ընկնում իր խորությամբ: ովկիանոսային նավերն ազատ ներս են մտնում խորշը և կանգնում ափին: Մերձակալեները կտրում են քամիների ճանապարհը, դրա համար ել



ԹԱՐԺՎԻՐԱԲՈՒԺԻԼՈՒ ՀԱՅ ՌԱԴԻ ԽՈՐԱԿՈՒՅՆ

Բաթումի նավահանգստում նավերի բեռնումն ու բեռնաթափումը կատարվում է լավ պայմաններում:



Փոթի նավահանգստում ծովափը բաց ե ամեն կողմից, վորի հետևանքով քամին ուժեղ ե փչում, վորը և դժվարացնում է նավերի բեռնումն ու բեռնաթափումը: Քամու ուժը և ծովի ալեկոծումը մեղմացնում են պատվարները, վորոնք արհեստական ձեռվ կառուցված են ծովում, նավահանգստի առաջ: Բացի դրանից, Ռիոն գետը Փոթիի նավահանգստի մոտ մեծ քանակությամբ գետային տիղմ ե բերում Սեվ ծովը, վորի համար և անհրաժեշտ ե ժամանակ առժամանակ մաքրել ծովափն այդ տիղմերից:

Խորհրդային իշխանությունն առանձին միջոցներ ե ձեռք առնում մեր նավահանգիստները բարեկարգելու համար:

Բարեկարգված ե Սուխումի նավահանգիստը. առաջներում նավերը չեյին կարողանում նավահանգիստ մտնել և կանգնում ելին ծովափից յերկու կիլոմետր հեռավորության վրա, իսկ հիմա ազատ մտնում են հենց Սուխումի նավահանգիստը:

Բարեկարգվում է նաև Փոթի նավահանգիստը. Ռիոն գետն իր բերած տիղմերով ծանծաղեցնում է Փոթիի ծովախորշը, Ներկայումս Ռիոնը փոխադրված ե նոր հունի մեջ, և Փոթի նավահանգիստն ազատվելու յե գետային տիղմերից:

Նախատեսված ե մաքրել Պալիաստոմի լիճը, լայն նեղուցով միացնել ծովին և վերածել մեծ ծովախորշի:

Մեզ մոտ կարգավորված ե նավագնացությունը և՛ Ռիոն գետի վրա՝ Փոթիից մինչև կողորի գյուղը (Կողորի գյուղը գտնվում է Սամարեղիայի մոտ): Մնացած գետերը դեռ չեն ոգտագործվում նավագնացության համար:

Ա Վ Ի Ա Յ Ի Ա Ն


Վրաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո սկսեց զարգանալ և ավիացիան՝ ողային հաղորդակցությունը:

Շատ տեղերում կառուցված են սավառնակայաններ: Ամենամեծ սավառնակայանը գտնվում է Թբիլիսում: Ողային հաղորդակցություն ե սահմանված հանրապետության առանձին մասերի միջև, ինչպես նաև Թբիլիսիի, Բաքվի և Մոսկվայի միջև:

Ողային ուղիներով վորխադրում են ուղևորներ և փոստը, Մեզ մոտ արագ և զարգանում ողային հաղորդակցությունը:

III ԽԱՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՄԱԿԵՐԵՎՈՒՑՅՈՒՆ

ԽՍՀ Միության ֆիզիքական քարտեզը մեծ մասամբ ներկված է կանաչ գույնով. դա խոսում է այն մասին, զոր ԽՍՀ Միության մակերևույթի մեծ մասը ներկայացնում է դաշտավայր: Խորհրդային Միության ամենազլիսավոր դաշտավայրերը յերեքն են՝ Արեվելյա-Յեղուպական դաշտավայրը, Արևմտա-Սիբիրական դաշտավայրը և Թուրքանի դաշտավայրը: Քարտեզի կանաչ ֆոնի վրա տեղադրված են բաց շագանակագույն տեղեր՝ դրանք աննշան բարձրություններ են և սարահարթեր: ԽՍՀ Միության Յեղուպական մասի ամենազլիսավոր բարձրություններն են՝ Միջին-Ռուսական բարձրությունը և Մերձվոլգյան բարձրությունը: Ասիական մասում փոփած է լայնարձակ Միջին-Սիբիրական սարահարթը:



Zapovednaya

Խորհրդային Միության հարավ՝ արևելյան սահմանների գրեթե ամբողջ յերկարությամբ, ինչպես նաև Յեվրոպական և Ասիական մասերի միջև քարտեզի վրա ձգված ե մուգ շագանակագույն մի շերտ—դրանք լեռնաշղթաներ են և բարձր լեռներ:



Աւրալը և Կովկասիոնին

ԽՍՀ Միության յեվրոպական մասում գտնվում են Ղրիմի լեռները, իսկ ԽՍՀ Միության յեվրոպական և ասիական մասերի միջև, սահմանագծի վրա՝ Ուրալյան լեռները:

ԽՍՀ Միության ասիական մասում՝ Կովկասում, բարձրանում ե Կովկասիոնի լեռնաշղթան, Ավրանստանի և Չինաստանի սահմանագլուխին՝ Պամիրի լեռնաշխարհում և Տյանշան լեռնաշղթան, Չինաստանի և Մոնղոլիայի սահմանագլուխին՝ Ալթյան լեռնաշղթան:

Այսպիսով, Խորհրդային Միության մեջ լեռներն ու լեռնաշղթաները գտնվում են ծայրամասերում։ Ամբողջ Միության ամենաբարձր լեռնագագաթները գտնվում են Պամիրի լեռնաշխարհում։ Դրանցից ամենանշանավորներն են Ստալինի պիկ գագաթը, վորը ծովի մակերևույթից բարձր և 7495 մետր, և Լենինի պիկ գագաթը, վորը ծովի մակերևույթից բարձր և 7139 մետր։

Վարժություններ. — 1. Գտեք ԽՍՀ Միության ֆիզիկական քարտեզի վրա և ցույց տվեք ԽՍՀՄ դաշտավայրերը, բարձրությունները և լեռնաշղթաները։ 2. Հետևելով մուգ յերանգների ուժեղացմանը, պարզեցեք, թե լեռնաշղթան վրբ տեղում ավելի բարձր ե. 3. Ուշադրությամբ նայեցեք քարտեզին՝ լեռնագագաթները չունեն արդյոք մակագրություններ, վորոնք ցույց են տալիս նրանց բարձրությունը ծովի մակերևույթից, կարդացեք այդ մակագրություններից մի քանիսը։ 4. Քարտեզի մասշտաբով պարզեցեք Ուրալի և Կովկասի յերկարությունը (ուղիղ գծով). Դրանցից վրբն և ավելի յերկարը։ Պարզեցեք, թե ի՞նչ ուղղությամբ են ձգվում Ուրալն ու Կովկասինին։

ԱՄԵՆԱԳԼԽԱՎՈՐ ԳԵՏԵՐԸ

ԽՍՀ Միության մեջ շատ կան մեծ ու յերկար գետեր։ Գետը յերկար է լինում այնքան, վորքան վոր մեծ և լինում ցամաքային այն տարածությունը, վորի վրայով նա հոսում է։ Խորհրդային Միության Յեվրոպական և ասիական մասերը ցա-

մաքային հսկայական տարածություններ են, դրա համար ել շատ գետեր ստիպված են կտրել մեծ հեռավորություններ՝ մինչև ծով կամ ովկիանոս թափվելը։



ԽՍՀՄ Յեվրոպական մասի գետերը

Քարտեզը լավ ցույց է տալիս, վոր ԽՍՀ Միության գետերը հոսում են դեպի ծովերը յերկրի մակերևույթի թեքու-

թյան ուղղությամբ։ Նրանցից մի քանիսի ակունքները գտվնում են լեռներում և բարձրություններում, իսկ մի քանիսներինը՝ լճերում։

Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսն են թափվում հետեւյալ գետերը։ Հյուսիսային Դվինան, Պեչորան, Ոբը, Յենիսեյը և Լենան։

Ոխոտի ծովն ե թափվում Ամուր ջրառատ գետը։

Մել ծովն ե թափվում Դնեպր գետը, վորի վրա կառուցված ե մի մեծ հիդրոելեկտրակայան՝ Դնեպրոգետսը։

Դնեպրից արևելք՝ Ազովի ծովն ե թափվում Դոն գետը։

Կասպից ծովն ե թափվում ԽՍՀ Միության Յեվրոպական մասի գետերից ամենայերկարը՝ Վոլգա նավարկելի գետը, վորն իր յերկարությամբ գերազանցում է Յեվրոպայի բոլոր գետերին, Վոլգան ընդունում է շատ վտակներ, վորոնցից ամենամեծերն են Ոկան և Կաման։

Կասպից ծովն ե թափվում նաև Ուրալը, վորն սկիզբ ե առնում Ուրալյան լեռներում։ Ուրալը յերկար գետ է, բայց խոր չե։ Նույն ծովն ե թափվում և Անդրկովկասի ամենայերկար գետը՝ Կուրը (Մտկվարին)։

Ֆիննական ծոցն ե թափվում Նեվա գետը, վորը կարճ է, բայց լայն ե և ջրառատ։


ԽՍՀ Միության գետերի մեծ մասը հոսում է դաշտավայրերով։ Վորի հետեւանքով այդ գետերի հոսանքը դանդաղ է, վորոշ տեղերում՝ նույնիսկ աննկատ։ Արագահոսությունը հատուկ է միայն լեռնային գետերին, որինակ, Կովկասում։

ԽՍՀ Միության գրեթե բոլոր գետերը, բացառությամբ Անդրկովկասի գետերի, ձմեռը ծածկվում են սառույցով։

Այդ ժամանակ նավագնացությունը գետերում անհնար և դառնում։ ԽՍՀ Միության գրեթե բոլոր գետերը ջրառատ են։

Անձրկի և ձնհալի ժամանակ գետերը հորդում են։ Իսկ ամառվա ամիսներին, յերբ յերաշտ ե լինում, մի քանի գետեր, ինչպես որինակ, Ուրալն ու Դոնը ծանծաղում են։

Գետերի թե հորդառատությունը և թե ծանծաղումն արգելք են հանդիսանում նավագնացության։ Խորհրդային իշխա-




ԽՍՀՄ Ասրական մասի գետերը

Նութքունը գետերն ոգտագործում ե հիդրոկայանների համար, յերաշտային վայրերը վոռոգելու համար, նավազնացության և ձկնորսության համար:

Խորհրդային Միությունը գետերի տեսակետից ամենահարուստ յերկիրն եւ ամբողջ աշխարհում:

Վարժություններ.—1. Գտեք ԽՍՀ Միության ֆիզիկական քարտեզի վրա ձեզ հայտնի գետերը. 2. Կարդացեք քարտեզի վրա ուղիղ մի քանի գետերի անուններ. 3. Ցույց տվեք, թե վհր տեղերում գետերը պետք ե ունենան արագ հոսանք, վհր տեղերում՝ դանդաղ հոսանք. 4. ԽՍՀ Միության պետական



Վոյդա գետն իր վտակներով

սահմանը վճր գետով և անցնում մեծ տարածության վրա. 5. Զավեցեք քարտեզի մասշտաբով, վորքան կարելի յե ճիշտ, վղութա գետի յերկարությունը. 6. Բայ նույն քարտեզի իրար

Հետ համեմատեցեք Վոլգա և Դնեպր գետերի յերկարությունը և ասեք, թե նրանցից վհրն ե ավելի յերկար. 7. Ինչու Կովկասիոնից հոսող և Մել ծովվը թափվող գետերը կարճ են. 8. ԽՍՀ Միության ուրվագծային քարտեզի վրա կապույտ մատիտով գծեր քաշեցեք ձեզ հայտնի գետերով՝ նրանց ակունքներից մինչև գետաբերանը: Մակագրեցեք նրանց անունները: Խաչեր դրեք գետերի ակունքներին:

ԱՄԵՆԱԳԼԽԱՎՈՐ ԼՃԵՐԸ

Խորհրդային Միության մեջ կան շատ լճեր, Նրանցից
ամենամեծերն են՝ Արալ լիճը՝ Միջին Ասիայում, Բայ-
կալ լիճը՝ Սրբելյան Մերձի բարձրության վրա, Լադոգա և
Բնեթա լճերը՝ ԽՍՀ Միության արևելյան մասի հյուսիսարև-
մուռքում, Բայթիկ ծովից վոյ հեռու։

Այդ լճերից Արալ լիճը (ինչպես և Կասպից լիճը) կոչվում է նաև ծով. քարտեզի վրա այդպես ել գրված է—Արալի ծով։ Արալ լճից վոչ մի գետ սկիզբ չի առնում, հետեւապես նա չհոսող լիճ է։ Բայկալը, Լաղոգան և Ոնեգան հոսուն լճեր են։ Բայկալ լիճն աշխարհի ամենախոր լիճն է։ Արալ լիճը (ինչպես և Կասպից լիճը) աղի յե, իսկ Բայկալ, Լաղոգա և Ոնեգա լճերը քաղցրահամ են։


Խորհրդային իշխանությունն սպառգործում և լճերը նա-
վազնացության և ձկնորսության համար:

Խորհրդային Միությունը լճերի տեսակետից ամենահարուստ յերկիրն է:

Վարժություններ. — 1. Գտեք ԽՍՀ Միության ֆիզիկական քարտեզի վրա ձեղ հայտնի լճերը. 2. Կարդացեք քարտեզի վրա մի քանի ուրիշ լճերի անուններ. 3. Քարտեզի մասշաբով չափեցեք Բայկալ լճի յերկարությունը. 4. Վորոշեցեք քարտեզով հնարակոր ե, արդյոք, նավով անցնել Ոնեցա լճից Ֆիննական ծոցը և ի՞նչ ճանապարհով. 5. Նավով կարելի յէ անցնել մի գետից մյուսը կամ մի լճից մյուսը և՛ այն ժամանակ, յերբ այդ ջրային տարածությունների միջև ընկած ե ջամաք, միայն հարկավոր ե այդ տեղում ջրանցք փորել և

այդպիսով կառուցել նավագնացության արհեստական ճանապարհ:

Նկատեցեք, թե վորտեղ պետք ե փորվի նավարկելի ջրանցքը, վորպեսզի հարավոր լինի նավով անցնել Կասպից:



Բայկալ լիճը

ծովից Ֆիննական ծոցը; Ոնեգա լճից՝ Սպիտակ ծովը. Վորոշեցեք քարտեզով՝ արդյոք գոյություն չունե՞ն այդ ջրանցքները։ ԵՄՀ Միության ուրվագծային քարտեզի վրա կապույտ գույշնով ներկեցեք ձեզ հայտնի լճերը և գրեցեք նրանց անունները։


Կ Լ Ի Մ Ա Ն

Խորհրդային Միության կլիման աչքի յե ընկնում իր այլազանությամբ։ Յերկի մոտ մեկ տասերորդ մասը՝ հյուսիսային քենանքով այն կողմն ընկած Յեվրոպական մասի չյուսիսը և Միբիրի հյուսիսը գտնվում են ցուրտ գոտում։ Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի մի քանի կղզիներ հեռու յեն գտնվում հյուսիսային բևեռից 800 կիլոմետրից վոչ ավելի։

ԵՄՀ Միության մնացած ամբողջ տարածությունը գտնվում ե բարեխառն գոտում, սակայն նրա մեծ մասը կրում ե ցուրտ կլիմայի ազդեցությունը, վորովհետև գուգահեռականների ուղղությամբ ձգվող լեռնաշղթաները վոչ մի տեղ հյուսիսային ցուրտ քամիների ճանապարհը չեն կտրում, և այդ քամիներն անարգել կերպով թափանցում են խորքը, հասնելով ամենահարավային ծայրամասերին։ Իսկ հարավային շրջանները՝ Անդրկովկասը և Միջին Ասիական հանրապետությունները, վորոնք հասնում են 35-րդ զուգահեռականնին, գտնվում են հյուսիսային արևադարձից միայն 1300 կիլոմետր տարածության վրա և այդ պատճառով ել նրանք հանդիսանում են տաք կլիմա ունեցող յերկրներ։

ԵՄՀ Միության մեջ ծովերի մեղմող ազդեցությունը թույլ ե յերևան գալիս. առաջին՝ այն պատճառով, վոր ծովերը գտնվում են ծայրամասերում և հեռու տեղերում, յերկրի ներքին մասերը շատ հեռու յեն նրանցից, յերկրորդ՝ Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսը, ինչպես և Ոխոտի ու Բերինգյան ծովերը, մեծ մասամբ սառցապատ են, յերրորդ՝ Սեվ ծովում գերակշռում են արևմտյան քամիները, և նրա մեղմող ազդեցությունը տարածվում ե միայն Արևմտյան Վրաստանի սահմաններում, իսկ Սեվ ծովի հյուսիսային ափը, Ուկրաինան և մյուս շրջանները չեն կրում ծովի ազդեցությունը։ Կասպից ծովի վրա գերակշռում են հյուսիսային քամիները, վորի հետևանքով կասպից ծովը, չնայած վոր ամբողջապես գտնվում ե մեր Միության սահմաններում (բացի իր հարավային ափից), այնուամենայնիվ Խորհրդային Միության տերիտորիայի վոչ մեկ մասի վրա ազդեցություն չունի։ Այդպիսով, ծովերի թույլ ազդեցության հետևանքով, Խորհրդային Միության գերակշռող մասում կլիման ցամաքային ե, միայն Սեվ ծովի արևելյան ափին, Բալթիկ ծովի արևելյան ափին և Խաղաղ ովկիանոսի ափին կլիման ծովային ե։

Նույն բանն ե հաստատում մթնոլորտային տեղումների բաշխման քարտեզը։ Ամբողջ Խորհրդային Միության մեջ ամենաառատ մթնոլորտային տեղումները լինում են Սեվ ծովի արեւատական գոտում մթնոլորտային տեղումները լինում են Սեվ ծովի արեւ-



վելան ափին — Արևմտյան Վրաստանում, առանձնապես Բաթումիի շրջակայքում, զորտեղ տարեկան տեղումների միջինը հավասար է 2529 միլիմետրի, իսկ ամենից քիչ քանակությամբ մթնոլորտային տեղումներ են լինում Միջին Ասիայում՝ Թուրքանի գաշտավայրերում (տարեկան տեղումների միջինը մինչև 100 միլիմետրի) և Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի ափերին։ Համեմտաբար բավականաչափ մթնոլորտային տեղումներ են լինում Բալթիկ ծովի ափին և Խաղաղ ովկիանոսի ափին։

Այսպիսով, Խորհրդային Միության մեջ ջերմությունն ու մթնոլորտային տեղումներն ամեն տեղ հավասարաչափ բաշխված չեն։ Միության մեծ մասում կլիման ցամաքային է, կլիմայի խստությունն առաջ է բերում Խորհրդային Միության համարյա բոլոր գետերի և և առցապատում։ ԽՍՀ Միության խնչվես Յեվրոպական, այնպես և Ասիական մասում սակագ կղատահի այնպիսի մի գետ, վորը 3—4 ամսով չսառչի, իսկ Սառուցյալ ովկիանոսի ափերի մոտ գետերը սառչում են նույնիսկ 10 ամսով։

ՀՈՂԸ, ԲՈՒԽԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ, ԿԵՆԴՅԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Հստ իր հողի, բուսականության և կենդանական աշխարհի՝ Խորհրդային Միությունն ամենաբազմազան յերկիրն է։

Հողի հատկությունների վրա մեծ ազդեցություն են ունենում կլիմայական պայմանները, Բուսահողը (հումուս) մեծ քանակությամբ առաջ է գալիս միայն այնտեղ (հետեապես, հողը դառնում է սկ), վորտեղ տաքությունն ու մթնոլորտային տեղումները չափավոր են։ Այդ պատճառով ել սկահողը համատարած շերտով տարածված է Ռեկրանայում և Հյուսիսային Կովկասում։ ԽՍՀՄ Յեվրոպական մասում սկահողի համատարած շերտը գրավում է մոտ 110 միլիոն հեկտար տարածություն։ Սկահողը համարյա նույնքան տարածություն է գրավում ԽՍՀ Միության Ասիական մասում։ Աշխարհում վոչ մի պետություն չունի սկահողի այսպիսի հսկայական տարածություն։ Այդ տեսակետից ԽՍՀ Միությունն ամենահարուստ յեր-

կիրն եւ Խորհրդային Միության մեջ սեահողը պարունակում է
4 — 16 տոկոս բուսահող. սեահողի հաստությունը մի քանի
տեղերում հավասար է 15 սանտիմետրի, իսկ վորոշ տեղերում՝
համառում է $1\frac{1}{2}$ մետրի: Յեզրոպական մասի հարավային շրջան-
ներում նրա հաստությունը հավասար է մի մետրի:

Միության մեջ, որինակ, Սեվ ծովի ափին՝ Վրաստանում
կա նաև կարմքահող, վորը նպաստում է տաք յերկրնե-
րի այնպիսի բույսերի զարգացմանը, վորպիսին է թեյի թուփը
և այլն:

Տաք յերկրների բուսականության (արմավենի, թեյի
թուփ, մանղարին և այլն) հանդիպում ենք Վրաստանում՝ Սեվ
ծովի ափին, այնտեղ, վորտեղ ձմեռը տաք է, իսկ ցուրտ գո-
տում տարածված են բոլորովին այլ տեսակի բույսեր, տունդ-
րաններում՝ մամուռ և քարաքոս, ավելի բարեխառն—տաք տե-
ղերում՝ անտառներ (տայգա կամ կուսական անտառներ),
հարավի չոր տափաստաններում՝ խոտաբույսեր և թփուտներ:
Այն բանի հետևանքով, վոր կլիման լեռան ստորոտից մինչև
նրա բարձր գագաթը փոխվում է գրեթե նույն ձևով, ինչպես
հասարակածից մինչև բևեռ, այսինքն՝ աստիճանաբար ցըտում
է, լեռների բուսական ծածկույթն ել փոխվում է այնպես, ինչ-
պես տաք և ցուրտ յերկրների բուսականությունը: Որինակ,
Աքբաղիայսում, Սեվ ծովի ափին, Սուխումիի շրջակայքում լեռ-
ների ստորոտներին աճում են տաք յերկրների բույսեր, լեռ-
ների լանջերին, ցածում՝ սաղարթավոր անտառ, նրանցից
բարձր՝ խառն անտառ (փշատերև և սաղարթավոր տեսակները),
ավելի բարձր՝ փշատերև անտառ, այնուհետեւ թփուտներ, իսկ
ել ավելի բարձր՝ խոտեր և մամուռ, և, վերջապես, գագաթը,
յեթե բարձրությունն անցնում է ծյան սահմանագիծը, հավեր-
ժական ծյունով է ծածկված լինում:

Հստ այդ պայմանների՝ բազմատեսակ եւ կենդանական
աշխարհը, մարգագետիններում և տափաստաններում ապրում
են տափաստանային կենդանիներ, լեռներում՝ լեռնային կեն-
դանիներ, անտառներում՝ անտառային կենդանիներ, ցուրտ
կլիմա ունեցող տեղերում՝ ցուրտ յերկրների կենդանիներ:

IV ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՅԱՆՔԸ ԽՈՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ

ԼԵՌՆԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Խորհրդային Միության լեռնային շրջանները բոլորն ել
գտնվում են ծայրամասերում: ԽՍՀ Միության ֆիզիկական
քարտեզի վրա դրանք ցույց են տրված շագանակագույն: Նրան-
ցից ամենազգլիւավորներն են՝ կովկասիոնի շրջանը, Ու-
րալը, Ղրիմի լեռները, Ալթայը, Տյան-Շանը և
Պամիրը:

ԽՍՀ Միության լեռնային շրջանները գանվում են կի-
մայական տարբեր պայմաններում: Ուրալն սկսվում է տունդ-
րաներում, Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի ափերից, ձըգ-
վում է հարավային ուղղությամբ, կտրում ե տայգան ու սեա-
հողային շրջանը և վերջանում չոր տափաստաններում: Կով-
կասիոնին և Ղրիմի լեռները փոշած են մերձարեագարձների
ու տափաստանների միջև: Տյան-Շանը և Պամիրն ընկած են
անապատների ծայրամասերում: Սակայն, չնայած այն բանին,
թե տեղերում ինչ կլիմայական պայմաններ կան, կամ ինչ-
պիսին են շրջակա լեռնային շրջանները, լեռներում՝ ընու-
թյունը փոխվում է տեղի բարձրության համապատասխան,
վորքան բարձր են լեռները, այնքան ավելի ցուրտ է լինում:
Բարձր լեռների գագաթները ծածկված են հավերժական ձյու-
նով և սառցագաղարով:

Հավերժածյուն գագաթներից սառցագաղարը դանդաղո-
րեն սահում են ներքեւ: Հեռվից նրանք նման են սառցային
գետերի: Յեվ, իսկապես, նրանք շարժվում են գետերի նման՝
ափերին ավելի դանդաղ, քան հոսանքի միջին մասում: Բացի

Կովկասիոնիից, համերժական ձյունն ու սառցադաշտերը ծած-
կում են նաև Պամիրի և Տյան-Շանի լեռնային յերկիրը:

Լեռնային շրջանները կտրտված են կիրճերով և խոր հո-
վիտներով: Լեռնագագաթների միջև կատարները մի քանի տեղ
իջած են և ներկայացնում են լեռնանցքներ, վորոնց միջոցով
հաղորդակցում են իրար հետ լեռնային գյուղերը: Գյուղերը
տեղավորված են լեռների լանջերին, կիրճերում և խոր հովիտ-
ներում: Իսկ բարձր լեռնագագաթներն անմարդաբնակ են: Ցե-
թե ամպոտ յեղանակին կանգնենք բարձր մի գագաթի վրա և
նայենք ներքե, կարծես թե առանձին գագաթներ այստեղ-
այստեղ ցըված են ամպերի ծովում՝ վորպես նավեր, իսկ դի-
տողը գտնվում է ամպերի գլխին: Արևոտ յեղանակին բարձր
լեռնագագաթներին ձյունն ու սառույցը շողզողում են կու-
րացնող մի փայլով: Այդպիսի տեղերում ճանապարհորդները
կրում են մուգ գույնի ակնոցներ:

Աղյան մարդագետիններն ոգտագործվում են անասնաբու-
ծության համար:

ԽՍՀ Միության լեռների շարքում իրենց հանքային հա-
րըստությամբ ամենից ավելի հոչակված են Ուրալյան լեռ-
ները: Ուրալը գրեթե յերկու անգամ ավելի յերկար ե
կովկասիոնիից, բայց և ավելի ցած: Նրա ամենաբարձր գա-
գաթները հասնում են մեկ և կես կիլոմետրի (ծովի մակերե-
վույթից): Շատ հեշտ ե կտրել-անցնել Ուրալը: Մի տեղ,
նույնիսկ, յերկաթուղի յե անցնում:

Ահա թե ինչ ե պատմում մի ճանապարհորդ.

«Ուժա կայարանում մի փոքր կանգնելուց հետո գնացքը
շարժվեց և սկսեց դանդաղորեն բարձրանալ լեռը: Ներքեւում՝
հովտում, աղմկում ե լեռնային գետակը, վորի ափերին բարձ-
րանում են սեպ ժայռեր: Լեռների լանջերը ծածկված են ան-
տառներով: Ցեղեմիների գագաթները բարձրանում են անտա-
ռի թափուտից: Տեղ-տեղ հանդիպում են մարդագետիներ, վո-
րոնք ծածկված են լեռնագագաթից գլորված քարի կտորներով
և ճալաքարերով: Ուրալի լեռները շատ են քայլքայլած. սառ-
նամանիքը, ջուրն ու բամին են այդ քայլքայման պատճառը:

Ուրալ չունի այնպիսի գագաթներ և խոր կիրճեր, ինչպես
կովկասիոնին:

Յերկաթուղու շրջադարձի մոտ յերկաց մի գործարան:
Գնացքը գանգաղացը իր ընթացքը: Բարձրանում ենք գեպի
լեռնանցքը: Ներքեւում կայծկլտում են գործարանի լույսերը:
Շոգեքարշը վիճում ե: Ալդեն գիշեր ե, բայց գնացքում վոչ
վոք չե քնում: Մենք արդեն լեռնանցքումն ենք՝ Յեվոպայի և
Ասիայի սահմանադրվին: Մեր աչքերի առաջից արագ անցավ
փոքրիկ մի քարասյուն՝ Յե վրոպա - Ասիա մակադրությամբ:

Յեզս մի քանի ըոպեի, և գնացքն արագությամբ իջավ
ներքե, Ուրալի մյուս կողմը: Գնացքն ավելի և ավելի արագ ե
ալանում՝ իր հետեր թողնելով ժայռեր, անտառապատ լեռնա-
լանջեր, վոչ բարձր գագաթներ: Մեր առաջ բացվեցին տա-
փաստան, ցորենի դաշտեր: Ուրալը մնաց մեր հետեր»:

Ուրալի ընդերքում շատ կա վոսկի, պլատին, յերկաթ,
պղինձ, քարածուխ: Խորհրդային իշխանության որով շատ ե
զարգացել հանքային հարստությունների մշակումը: Ուրալում
բարձրանում և արագ աճում են նորանոր գործարաններ:

Ուրալյան լեռների հարավային մասում՝ Ուրալ գետի
ակունքների մոտ ե գտնվում Մագնիտնայա լեռը: Այդ
լեռը գրեթե ամբողջովին կազմված է յերկաթահանքի հարուստ
շերտերից: Հանքը շատ մոտ է լեռան մակերեսույթին: Մինչեւ
հեղափոխությունը հանքի հանույթն այստեղ ձեռքով եր կա-
տարվում: Հանքը փոխադրում ելին ձիերով: Իսկ այժմ, ընդա-
մենը յերկու տարում, այստեղ բարձրացել ե մի ամբողջ քա-
ղաք — Մագնիտոգորսկը, ուր կառուցված ե մետաղամշակ
մի գործարան — զիգանտ: Այս գործարանումն ե կատարվում
հանքի հալումը: Գործարանն ունի աշխարհում ամենախոշորը
համարվող հալոցներ: Գործարանում աշխատում ե մի քանի
հազար բանվոր: Բոլոր աշխատանքները մեքենայացված են,
կիրառվում են նորագույն և լավագույն մեքենաներ: Գործա-
րանին սպասարկում են հենց տեղում կառուցված նոր ելեկ-
տրակայանները: Մագնիտոգորսկի շուրջը զարգացել են գյու-
ղանտեսության նոր ճյուղեր: Բլուրների նախկին լերկ լան-
ջերին այժմ կանաչին են տալիս բանջարանոցները:

ՄԵՐՁԱՐԵՎԱԴԱՐՁԱՅԻՆ ԳՈՏԻՆ

Քարտեզով. — Գտեք Սեվ և Ազովի ծովերը. Գտեք Ղրիմի թերակղին, վորն ընկած է այդ ծովերի միջև. Գտեք Ղրիմի հարավային ափը:

Բացի Վրաստանից, ԽՍՀ Միության մեջ տաք կիմա ունեցող շրջան է հանդիսանում նմանապես Ղրիմի հարավային ափը:

Ղրիմի թերակղին գտնվում է Սեվ և Ազովի ծովերի միջև. Ղրիմի հարավային ափի յերկայնքով ձգվում են Ղրիմի լեռները հարյուր կիլոմետր յերկարությամբ. Ղրիմի լեռներից հարավ գտնվում է Սեվ ծովի առափնյա շերտը, վորը պաշտպանվում է հյուսիսային ցուրտ քամիներից Ղրիմի լեռների շորհիվ. Այս ծովափին ամառը տաք է ու չոր և տեսում է ամբողջ հինգ ամիս. Ամառը սակավ է անձրեվ գալիս. Զմեռը հաճախ է մառախուղ լինում և անձրեւ գալիս. Զմեռը տաք է և շուտ և անցնում. Ծովում լինում են ուժեղ փոթորիկներ. Յերբեմն ծովափին ձյուն է գալիս, բայց յերկար չի տեսում:

Ղրիմի լեռներից հյուսիս բոլորովին ուրիշ կիմա յետ. Այն ժամանակ, յերբ, որինակի համար, Յալթայում (լեռներից հարավ) վարդը ծաղկում է, Սիմֆերոպոլում (լեռներից հյուսիս) հաճախ ձյուն է գալիս. այն ժամանակ, յերբ Սիմֆերոպոլում վառարանները վառում են և պատուհաններին կրկնակի փեղկեր են անցկացնում՝ ցրտից պաշտպանվելու համար, նույն այդ պահին Յալթայում այնքան տաք է լինում, վոր պատուհանները կարելի յետ միշտ լայնորեն բաց թողնել:

Ինչպես Աղևամայան Վրաստանում, այնպես ել Ղրիմի հարավային ափին գարունը շուտ է գալիս. Պտղատու ծառերը մարտին արդեն ծաղկում են. Այստեղ տարվա լավագույն ժամանակն է համարվում ամառվա վերջը և աշունը. այսինքն՝ ոդոստոսը, սեպտեմբերը և հոկտեմբերը. Այդ ամիսներին արեն այնքան ել ուժեղ չի տաքացնում, ինչպես հուլիսին, յերբ յեղանակը տաք է լինում և անամար. Յեղանակն այլ է լեռների գագաթներին և կատարներին. այստեղ հով է ամռանը, անձրեւ գալիս և այն ժամանակ, յերբ ծովափին տաք է ու չոր:

Ղրիմի հարավային ափի կիմայի չորությունը բացատրվում է նրանով, վոր Սեվ ծովում գերիշխում են արեվմտյան քամիները:

Ղրիմի հարավային ափին մշտադալար բույսեր շատ կան, վորոնք մեծ մասամբ մարդու ձեռքով են տարածված: Այստեղ լավ են աճում՝ դափնի, ձիթենի, կիպարիս, դափնեվարդ, մագնոլիա: Այդիներում հասունանում են դեղձ, ծիրան: Լեռների լանջերին աճում են նոճու անտառներ, ավելի վեր, ուր մթնոլորտային տեղումներն ավելի շատ են, հանդիպում են այսպիսի սաղարթավոր տեսակներ՝ կաղնի, հաճարի: Լեռների գագաթները հարթ են և ծածկված կանաչող մարգագետիններով:

Այստեղ կենդանիներ շատ քիչ կան, վորովինեան մարդը կոտրել է նրանց: Լեռներում տեղապահների վայրի այծն ու յեղջերուն, արծիվները թաքնվել են անմատչելի ժայռերում:

Ղրիմի ծովափին ապրում են մեծ մասամբ թաթարներ: Նրանք զբաղվում են այգեգործությամբ: Թաթարների գյուղերը ցըգած են գետերի հովիտներում և լեռների լանջերին: Տնակները կառուցված են լեռնալանջերին, և հաճախ տնակի հետևի պատի փոխարեն ոգտագործված է ժայռը, իսկ մնացած պատերը շինված են քարից: Տնակների կտուրները տափակ են և հողածածկ: Կտուրներին քնում են, միրգ են չորացնում: Կտուրն ոգտագործվում է նաև վորպես բակ և ճանապարհ հարևան, ավելի բարձր դիրքի վրա գտնվող տնակի համար: Յեթե ցանկանաք լինել գյուղի վերին մասում, ապա անհրաժեշտ է բարձրանալ մեկ կտուրը մյուսին միացնող քարե փոքրիկ սանդուխներով:

Այդիներում մշակում են՝ դեղձ, նուշ, ծիրան, ձիթապտուղ, գցված են խաղողի այգիներ և թանգարժեք տեխնիկական կուլտուրաներ: Ծովափի յերաշտային տեղերում ջուրը մեծ նշանակություն ունի այգեգործության համար: Մրգի և խաղողի այգիները լավ բերք են տալիս այնտեղ, վորտեղ ջուրը

հեշտությամբ եւ ճարվում վուրգման համար։ Անջրդի տեղեւրում ամեն ինչ չըրանում եւ, վոչնչանում։

Մինչև խորհրդային իշխանության հաստատումը թաթարներն աղքատ եյին ապրում և մեծ կարիքի մեջ եյին։ Լավագույն հողերը գտնվում եյին կալվածատերերի և ցարական պալատականների ձեռքին։ այստեղ ինքը՝ ցարն ուներ կալվածք։ Զքավորները մեծ տուրքեր եյին վճարում հողի և ջրի համար։ Հարուստները ճնշում ու շահագործում եյին չքավոր թաթարներին։ Զքավոր թաթարները գրեթե բոլորն ել անդրագետ եյին։

Ներկայումս Ղրիմի հարավային ափի աշխատավորները նոր ձևով են ապրում։ Իողերը, մրգի և խաղողի այգիները կազմում են նոցիալիստական սեփականություն։ Մենատնտեսության փոխարեն ամեն տեղ հիմնված են կոլտնտեսություններ, վարոնք պայքար են մղում տնտեսության զարգացման և կոլտնտեսականների կենցաղային պայմանների բարելավման համար։

Բացված են մի քանի տասնյակ դպրոցներ, ուր դասավանդությունը տարվում է մայրենի՝ թաթարական լեզվով։

Ղրիմը ԽՍՀ Միության աշխատավորության առողջավայրն է։ Զոր ու տաք կլիման, ծովային մաքուրողը, մրգերն ու խաղողը բազմաթիվ հիվանդներ են գրավում դեսի Ղրիմի հարավային ափը։ Ղրիմն առանձնապես բարերար պղղեցություն ունի թույլ թոքեր ունեցող հիվանդների վրա։

Ղրիմի հարավային ափի բնության բուժական հնարավորությունները հեղափոխությունից առաջ անմատչելի եյին աշխատավորությանը, դրանցից միայն հարուստներն եյին ոգտվում։

Խորհրդային իշխանությունը Ղրիմի հարավային ափը վերածեց աշխատավոր մասսաների առողջավայրի։ Ցարի և նրա պալատականների պալատները, հարուստների ամառանոցները վերածված են սանատորիաների և հանգստի տների՝ աշխատավորության համար։ Ցարական լավագույն պալատներից մեկում սարքված է սանատորիա հատկապես կոլտնտեսականների համար։

ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԳՈՏԻՆ

Կառպից ծովից արեելք տարածվում են անապատներ։ Անապատներ կան թուրանի դաշտավայրում։ Մի ժամանակ թուրանի դաշտավայրը ծովի հատակ եր։ Հարավից արեելքից այդ դաշտավայրը յեղերված է լեռներով։ Այստեղ է գտնվում Պամիրից հյուսիսարեւիք ձգվում մի լեռնային յերկիրը։ Պամիրից հյուսիսարեւիք ձգվում են Տյան-Շան լեռները։ Անապատների գոտում կա յերկու մեծ ավագության անապատ՝ Կարա-Կում և Կղը-Կում։

Անապատների գոտում խոնավ քամիներ չեն լինում, վորովհետև կասպից ծովի վրա գերակշռում են հյուսիսային քամիները։ Այստեղ յերկինքը միշտ անամպ եւ Անապատում պատահում են նաև այնպիսի տեղեր, վորտեղ ամառն անձրևի մի կաթիլ անգամ չի ընկնում։ Յերբեմն ել պատահում է, վոր կաթկթել ոկտող անձրևը գոլորշիանում և ոգում՝ դեռ չհասած շիկացած ավագներին։ Ավագի ջերմությունը համնում է 72 աստիճանի, իսկ յերբեմն՝ ավելի բարձր, ստվերում շոգը միջին հաշվով համնում է 50 աստիճանի։ Քարերը, մետաղյա առարկաներն այնպես են շիկանում, վոր այրում են մարդու ձեռքը։ Սակայն, քանի վոր յերկինքն անամպ է, ցերեկով շիկացած առարկաները գիշերն արագ կերպով պաղում են։ Յերեկն անապատում անառնելի շոգ է, իսկ գիշերը՝ հով։ Ամառը շարունակվում է 5—6 ամիս, իսկ ձմեռը, ընդհակառակը, կարճատև եւ եցուրտ։ Սառնամանիքը յերբեմն համնում է 20 աստիճանի։ Թուրանի դաշտավայրով շրջակայրի լեռներից գետեր են հոսում, սակայն նրանց մեծ մասը կորչում է ավագներում կամ ցամաքում է։ Միայն յերկու մեծ գետեր՝ Ամու-Դարիան և Միր-Դարիան առաջանաւում են հասնում Արալի ծովափերին, ուր և թափվում են ծովը։ Ամու-Դարիան սկիզբ է առնում Պամիրի լեռներից, իսկ Միր-Դարիան՝ Տյան-Շան լեռներից։ Այս յերկու գետի ակունքներն ել գտնվում են սառցադաշտերում։

Ամառվա շոգ ամիսներին, յերբ անապատի գետերը ցա-

մաքում են կամ ծանծազում, Ամուշարիան և Սիր-Դարիան վարարում են և գուրս գալիս ափերից, վորովիետե այդ ժամանակ բարձր լեռներում հալչում են ծյունն ու սառուցը:

Անապատներում կտն նաև լճեր, սակայն նրանք հաճախ ցամաք են լինում. ջուրը գոլորշիանում ե, և լճի հատակին նստում ե ձյան նման սպիտակ աղը:

Ավագոտ անապատում վորոշ խորության վրա հաճախ ջուր ե լինում: Դա ստորերկրյա ջուր ե: Ավագաղատ տեղերում այդ ջուրը չի գոլորշիանում այն պատճառով, վոր ավաղի հատիկների միջով հողի յերեսը չի բարձրանում (հակառակ յերեսոյթ ենք տեսնում, յերբ ջրին մոտեցնում ենք մի կտոր շաքար կամ ծծան թուղթ. նրանք ծծում են ջուրը և վեր բարձրացնում): Անապատի ստորերկրյա ջրերը լցվում են ջրհորները. Ջրհորներն անապատում ուղղություն են տալիս ճանապարհորդներին. անապատում ճանապարհորդում են մի ջրհորից մյուսը. Քարավանները և մարդիկ շարժվում են ջրհորների միջև ընկած արահետներով, վորովիետե ջրհորների մոտ միայն կարելի յե ծարավը հագեցնել և ջրի պաշար վերցներ:

Ավագոտ անապատում ես բուսականություն կա, սակայն այնպիսին, վորը հեշտությամբ ե տանում շողը և ջրի պակասը. Այստեղ գերակռում են թփուտները, վորոնք զուրկ են տերեներից: Ավագոտ անապատում աճում ե յուրատեսակ մի ծառ—սաքսառուլը: Սաքսառուլի բունը ճաքճքած ե. դա բարեձև ծառ չե, այլ կոշտապատ ե, ծռմոված ամեն ուղղությամբ: Նրա տերեներն արտասովոր են, նրանք նման են թեփուկների: Զահել, կանաչ ճյուղերը սաքսառուլի համար տերեների դեր են կատարում: Սաքսառուների պուրակը, տերեների բացակայության պատճառով, ստվեր չի տալիս: Սաքսառուն այնչափ չոր ե, վոր նրա փխրուն բունը չի կարելի կացնով ճեղքել, այլ կարելի յե փշել: Սովորաբար նրա բունը խփում են մի մեծ քարի, և այդ ուժեղ հարվածից սաքսառուլի բունը ջարդ ու փշուր ե լինում: Սաքսառուլը լավ ե ընտելացած անապատային պայմաններին. նա ունի շատ յերկար արմատներ, վորոնց շնորհիվ նա ջուր ե ծծում գետնի խոր շերտերից:

Գետերի ափերին առաջացել են ովազիսներ: Ովազիսներում աճում են յեղեգնուաներ, շամբի, ինչպես նաև ծառեր:

Ավագոտ անապատում հող չկա: Սաղարթապուրկ և առանձին-առանձին ցրված ծառերը բուսահող չեն տալիս: Դաշտավայրերում տարածված են անբերի, ամբողջապես աղ ծծած աղուտային հողեր: Հողը բերրի յե միայն գետերի ափերին, վորովիետե գետերը վարարման ժամանակ մեծ քանակությամբ տիղմ են թողնում իրենց ափերին:

Անապատում ապրում են կենդանիների այն աեսակները միայն, վորոնք հեշտությամբ են դիմանում շողին և չոր կլիմային: Այստեղ շատ կան մողեսներ և ոճեր: Կան այնպիսի մողեսներ (վարագ), վորոնք շատ խոշոր են և ունեն մեկից մինչև մեկ ու կես մետր յերկարություն, Անապատում ապրում են նմանապես անտիլոպներ — չե յըաններ:

Անտիլոպը զգույշ, վախկոտ կենդանի յե, արագավազ ե և դրանով փրկում ե իրեն: Անապատի համարյա բոլոր կենդանիներն ունեն գորշ-գեղնավուն գույն, նման իրենց շրջապատող միջավայրի գույնին, և այդ պատճառով ել նրանք անհկատելի յեն մնում անապատի ավաղներում:

Մեծ գետերի ափերին, խիտ շամբուտներում ապրում են գագրեր և վարազներ:

Անապատն ուղտի հայրենիքն ե: Ուզան ընտանի կենդանի յե, նա հեշտությամբ ե քայլում անապատի շիկացած ավաղներում, վորովիետե նրա թաթերը ծածկված են կոշտ կաշվի հաստ շերտով: Ուզան հաճույքով ե ուտում կոշտ, նույնիսկ փշոտ խոտը: Նա մի քանի որ կարող ե մնալ առանց կերի, ջրի ե, նույնիսկ, այդպիսի որերին նա կարող ե տանել թե մարդկանց և թե բեռը մի քանի հարյուր կիլոմետր. Այդ պատճառով ել ուղտին անվանել են «անապատի նավ»:

Անապատների գոտում ապրում են ուղեկները, թուրքմենները և ղազախները: Անապատներում նրանք պարապում են անասնաբուծությամբ: Հովիմսերը վոշխարներին և ուղտերին քշում են մի տեղից մյուսը՝ գետի նորանոր արտատեղիներ:

Հին ժամանակներից սկսած մարդիկ բնակություն են հաստատել գետերի ափերին, ուր հողը բերքի յէ, բուսականությունը՝ հարուստ, և յերկրագործությունը կարող է հեշտությամբ զարգանալ:

Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը անապատի բնակչությունը հետամնաց եր, սակայն հեղափոխությունից հետո կյանքի պայմաններն արմատավես փոխվեցին և բարելավվեցին: Այստեղ կազմվեց յերկու միութենական հանրապետություն՝ Թուրքմենական ԽՍՀ և Ռւզբեկական ԽՍՀ:

Ցարական իշխանության որով անապատների բնակչությունը հարստահարվում եր, Ցարական իշխանությունը գենքի ուժով և նվաճել այդ յերկրները: Համարյա 70 տարի բնակչությունը տառապում եր ցարական ինքնակալության լծի տակ: Բնակչությունից խում եյին լավագույն հողերը և մեծ հարկեր եյին վերցնում: Այդ տեսակետից ցարական կեղեքիչներին չեյին զիջում տեղական խաները (խոշոր կալվածատերերը), բայերը (հարուստները) և մոլաները (հոգևորականությունը): Զուրը, վոր այնպիսի կարևոր նշանակություն ունի անապատի պայմաններում, պատկանում եր խաներին ու բայերին, և, իհարկե, ով վոր տիրապետում եր ջրին, նա յել իշխում եր ամբողջ բնակչությանը:

Խորհրդային իշխանությունը բայերից խլեց հողերը, վոշը և հանչացը հողի մասնավոր սեփականությունը: Ներկայումս ջրից ոգտվում են բոլորը, ջուրը հավասարաչափ բաշխվում է այդիներին ու դաշտերին: Տարեց-տարի ընդլայնվում է վոռողման ջրանցքների ցանցը, և անապատը վերածվում է մշակված հողերի, ուր ցանում են զանազան թանգարժեք մշակույթներ: Այստեղ, ուր գյուղացին բահով ու քլունդով եր փորփռում գետինը, այժմ հաղարավոր տրակտորներ մշակում են խորհրդնեսությունների և կոլտնեսությունների անծայրածիր դաշտերը և բամբակի պլանտացիաները: Քոչվոր անասնապահները նույնպես կազմել են կոլեկտիվ տնտեսություններ և անցել են նստակյաց կյանքի: Կազմված են վոչխարաբուծական խոշոր խորհրդնեսություններ:

Անապատի գոտում արագ կերպով զարգանում է արդյունաբերությունը: Կառուցված են բամբակագտիչ գործարաններ, մետաքսի մանածագործական գործարաններ, գյուղատնտեսական մեքենաներ թողարկող գործարան, ելեկտրակայաններ: Կառավից ծովի ափերին դարձացել է ձկնորսական արդյունաբերությունը: Այստեղ ել հենց նավթ են հանում: Կասպից ծովի Կարա-Բողոք-Գյուլ ծոցի մոտ ստացվում են զանազան աղեր: Կարա-Կում անապատի կենտրոնում յերեան են բերքած ծծմբի պաշարներ, և կառուցված է ծծմբի գործարան: Աճում են քաղաքները: Յերեկվա քոչվոր անասնապահներն այսոր գնում են ֆարբիկանները և գործարանները՝ վորպես բանվոր:

Տնտեսության գարդացմանը նպաստում են վերջերս կառուցված խճուղիները և առանձնապես Թուրքեստան-Սիբիրի յերկաթուղին (Թուրքսիր), վորի շնորհիվ մեր յերկրի հացաշատ շրջաններից մեծ քանակությամբ հաց և մտնում անապատների դուտին:

Այսպիսով, անապատն որեցոր փոխում է իր կերպարանքը: Արհեստական վոռողման լայն կիրառումը վերածել է անապատը ծաղկուն ցանքադաշտերի, այդիների, բամբակի դաշտերի: Ֆարբիկաններ և գործարաններ առաջին անգամ կառուցված են խորհրդային իշխանության որոտ:

Վարժություններ. — 1. Գտեք ԽՍՀՄ ֆիզիկական քարտեզի վրա Կարա-Բողոք-Գյուլ ծոցը, Աբալ ծովը, Ամու-Դարիա գետը, Սիբ-Դարիա գետը, Կարա-Կում և Կղըլ-Կում անապատները: 2. Գտեք ԽՍՀՄ կենդանաբանական-աշխարհագրական քարտեզի վրա անապատների տարածման շրջանը և տեսեք, թե այդ դրույմ ինչ կենդանիներ են ցույց արված քարտեզի վրա:

ՉՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐ

Տափաստանն անծայրածիր մի հարթություն է, ուր անտառներ չկան, և հողի ամբողջ մակերեսությը ծածկված է միայն խոտով: Տափաստանը բոնում է տամարակ և հարյուրագոր կիրումեր տարածություն: Տափաստանը միապաղպաղ հար-

թություն եւ Այստեղ, շրջապատող ամբողջ տարածությունը՝ ինչպես ծովի վրա, աղեղնաձև եւ Ռւր վոր նայես՝ վերևում յերկինք եւ, իսկ ներքեւում՝ ամեն կողմ հարթություն։ Քայլում ես, բայց թվում եւ, թե կանգնած ես միևնույն տեղում, ասես յերբեք տեղդ չես փոխել, այնքան միապաղտղ եւ տափաստանների բնությունը։

Կասպից ծովի հյուսիսային ավին, Վոլգա գետի ներքին հոսանքի յերկու ափերին և ավելի հեռուն՝ դեպի արևելք — մինչև Զինաստանի սահմանը ձգվոծ եւ չոր տափաստանների լայնածավալ մի գոտի։

Չոր տափաստաններում ամառը կիզիչ եւ չոր, իսկ ձմեռը՝ խիստ, թեև վոչ այն աստիճանի, ինչպես անապատների գոտում։ Ատլանտյան ովկիանոսից փչող տաք ու մեղմ քամիները շատ սակավ են համեմատ չոր տափաստաններին, իսկ Կասպից ծովը, վորի ափերին են գտնվում այդ տափաստանները, Նրանց վրա չի ազդում, վորովհետեւ, ինչպես մենք արդեն գիտենք, այդ ծովում իշխում են հյուսիսային քամիները։ Չոր տափաստաններում հաճախ են փշում չոր ու տաք քամիներ։ Շոգ սրերին հողը չորանում եւ ճաքճաքում։ Զմռանն այստեղ հաճախ բռնք ու փոթորիկ եւ լինում։ Զմռան վերջին յերբեմն ամբողջ տափաստանը ծածկվում է սառցի բարակ շերտով։

Չոր տափաստաններում գետեր քիչ կան։ Դրանցից ամենանշանավորներն են Վոլգայի ստորին հոսանքը, Ռւրալը և Եմբան։ Ամռանը գետերը ծանծաղում են։ Ամռավա վերջը, նույնիսկ, այնպիսի մեծ գետում, ինչպես Ռւրալն եւ, նավագնացությունը գժվարանում եւ, իսկ մանր գետակները բռնըռնին ցամաքում են։ Այստեղ գետերի մեծ մասը ծովափ չի հանում։ Նրանք կորչում են ավագների մեջ և կամ թե թափվում են փոքրիկ լճերը։

Չոր տափաստաններում պատահում են զլիավորապես այնպիսի բռնյալ, վորոնք հարմարվել են չոր կլիմայի պայմաններին։

Վաղ գարնանը, հենց վոր ձյունը հալվում է, և հողը խոռնավություն եւ ծծում, արագորեն աճում են սոխարմատ բռն-

սերը՝ ձնծաղիկը, դեղին ու կարմիր կակաչները։ Չոր տափաստանները շատ կարճ ժամանակով են ծածկվում կանաչ խոտերով։ Գարնանը շուտով փոխարինում եւ շոր ու չոր ամառը։ Կանաչը թառամում եւ, խոտը խանձվում։ Նրանց փոխարինում են այնպիսի բռնյալ, վորոնք հեղտությամբ են դիմանում ուժեղ յերաշախին, որինակ, վ եւ բախութը։ Յերեսում են նաև բարձմենյակը, ուղղակի գուշակը, սուրբ-սուրբ փշերով։ Չոր տափաստանների բռնյալ ունեն յերկար արմատներ, այդպիսի արմատներ խորանում են գետնի մեջ և այնտեղից խոնավություն ծծում։ Այդ խոտերն իրարից հեռու յեն գարնվում, և նրանց միջից յերեսում եւ շորից ճաքճաքած գետնի լերկ մակերնութը։ Այնտեղ, վսրտեղ հողը շատ եւ աղ պարունակում, աճում են աղաբույսեր։

Յերկարատես, շոր ու չոր ամառվա պայմաններում, ինչպես նաև խոտաբույսերի նոսրության պատճառով, հողի մեջ մեծ քանակությամբ բռնահող չի գոյանում։ Չոր տափաստաններում գերակշուռ են գորշ հողերը, վորոնք քիչ քանակությամբ են բռնահող պարունակում։ Պատահում են նաև աղուտային (աղ ներծծած) հողեր։

Չոր տափաստաններում խոշոր կենդանիներ տեղաբեր են պատահում։ Այստեղ կան արագագազ սայդակներ (Ղեցրանի մի տեսակը), վորոնք ջուր ու կեր վորոնելիս հեղտությամբ են կարում մեծ տարածություններ։ Նրանք միայն արագավազության շնորհիվ են իրենց պաշտպանում հարձակվող գայլերից։ Չոր տափաստաններում կան նաև կրծողներ՝ մկներ, ինչպես նաև մողեսներ, ոձեր, իսկ միջատներից՝ մորեխ։ Չոր տափաստանների կենդանիներն ունեն պաշտպանողական գույն, վորը համապատասխան եւ խոնձված տափաստանի գույնին և դրա համար ել նրանք դժվար են նկատվում։

Չոր տափաստաններում վաղուց ի վեր ապրում են զարգախներ և կալմիկներ, վորոնք զբաղվում են զլիավորապես անասնաբուծությամբ։ Բազմացնում են վոչխար, ձի և ուղար։ Չոր տափաստանների բնությունն աղքատ է, բայց կարող եւ կերտերել անթիվ վոչխարների և ուղտերի հոտեր, վո-

րովհետև այդ կենդանիները կերի մեջ առանձին ընարություն չեն կատարում: Սակայն հոտերը կերակրելու համար պահանջվում է մեծ տարածությամբ արոտատեղիներ, այդ իսկ պատճառով զազախները և կալմիկները ամառը քոչում են, այսինքն՝ իրենց հոտերը քշում են մի արոտատեղից մյուսը: Հենց վոր անասունների համար գտան հարմար արոտատեղի, այդտեղ թաղիքից ուրթեր (վրաններ) են սարքում իրենց համար և ապրում այնքան ժամանակ, մինչև վոր անասուններն ամբողջովին ուտեն խոտը: Իսկ ձմեռանոցներում իրենց համար խըրձիթներ են շինում կավից, վորին գոմալը են խառնում:

Մինչև չոկտեմբերյան հեղափոխությունը քոչվոր անասունապահները մեծ նեղություններ եյին քաշում, ամառվա յերաշտի ժամանակ ամբողջովին խանձվում եյին արոտատեղիները, իսկ անձյուն ձմեռվա ուժեղ սառնամանիքի ժամանակ նրանց անասունները կոտորվում եյին կերի պակասության պատճառով: Չոր տափաստաններում գժվար եր ջուր գտնել, հարկավոր եր փորել խոր ջրհորներ: Լավագույն ջրհորները գտնվում եյին բայերի (հարուստների) ձեռքին: Աղքատացած անասունապահները գնում եյին բարակություն անելու բայերի մոտ: Յարական կառավարությունը, փոխանակ ոգնելու, ել ավելի յել կողովում ու խեղդում քոչվոր անասունապահներին, իլում եր արոտատեղիները և նրանց հողերի վրա բնակեցնում ուռաներին:

Խորհրդացին իշխանությունը վճռականորեն ձեռնարկեց քոչվորների անասունության ու կյանքի վերակառուցմանն ու բարեկավմանը: Միջոցներ են ձեռք առնված, վորպեսզի քոչվորները նստակյաց կյանք վարելու նստավորություններ ստանան խոտը միասին ցանելու և համար, կառուցվում են ընդհանուր գոմեր, փորփում են ջրհորներ ընդհանուրի գործածության համար, սարքփում են բակեր, բացփում են անասունութական կետեր: Քոչվորների կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար կառուցվում են «կարմիր վրաններ», դպրոցներ, հիվանդանոցներ:

Չոր տափաստաններն այնքան ել նպառտափոր չեն հողագործության համար, բայց զրա փոխարեն նրանք կարող են կերակրել հարյուրավոր միլիոն անասուններ: Անտևառակու-

թյունը հմուտ կերպով վարելու գեղքում այդ տափաստանները կարող են մեծ քանակությամբ միս տալ մեզ: Յեկ ահա չոր տափաստաններում արգեն ստեղծված են խոշոր անասունառուծական խորհանտեսություններ:

Մենք մեծ ուշադրություն ենք գարձնում չոր տափաստաններում արդյունաբերությունը գարգացնելու գործին: Չոր տափաստանների ընդերքում թագնված են բազմազան հանքային հարստությունների շերտեր, վորոնց մինչև այսոր մարդկային ձեռքը չեր կպել: Ներկայումս չոր տափաստանները վերակենդանացնել են սոցիալիստական անտեսություն կառուցողների անդուր աշխատանքի շնորհիվ: Կարագանդայում արդյունահանում և քարածությունի մը այսի նավթը վիշտաներից գիշեր-ցերեկ խողովակներով հոսում և դեպի կասպից ծովի ափը: Բալխաշ լճի ափին կառուցվում եւ պղնձաձուլական գործարան, վորն իր հզորությամբ առաջին տեղն եւ գրավելու գլուխարհում: Մոտ առագայում զրա հետ միասին բարձրանալու յեն և ուրիշ գործարաններ, փորվետեակ այստեղ հողի ընդերքում կան պղինձ, արծիճ, ցինկ և այլ արժեքավոր հանածոներ: Այսպիսով, չոր տափաստաններն աստիճանաբար փոխում են իրենց տեսքը և զրա հետ միասին փոխվում են դաշտիների կենցաղային պայմանները: Քոչվոր զաղախներն ակնել են աշխատել արդյունաբերական նորակառուցներում և գարգնում են իրենց կուլտուրան:

Չոր տափաստանների արևմտյան մասում՝ կասպից ծովի ափին, Վոլգա գետի ստորին հոսանքում և Ռւրալ գետում կամ մեծ քանակությամբ ձուկ: Վոլգայի գետաբերանում գտնվում է Անտրախուան քաղաքը՝ ձինային արդյունաբերության ամենամիաշոր կենտրոնը: Այստեղ կառուցված են պահածոների մեծ գործարաններ, սաոցարաններ:

Մինչև չոկտեմբերյան հեղափոխությունը չոր տափաստաններում գցված եր միայն մի յերկաթուղարքի: Դա միացնում եր Զկալով քաղաքը Տաշքենդի հետ: Տափաստանների մասած տարածության վրա ուղարկության միակ միջոցը: Աստղին նովամյակի սկզբին չոր տափաստանների

արևելյան մասում գցվեց մի նոր յերկաթուղաղիծ՝ Թյուլը եռտան. Սիբիր յերկաթուղին (Թուրքսիր), վորը նպաստում ե տնտեսության արագ զարգացմանն այդ յերկրում:


Վարժություններ. — Գտեք ԽՍՀ Միության Փիզիկական քարտեղի վրա Եմբա գետը, Աստրախան քաղաքը, Կարագանդա քաղաքը, Թուրքսիրի յերկաթուղին:

ՍԵՎԱՀՈՂՈՅԻՆ ՏԱՓԱՌԱՆՆԵՐ

Չոր տափաստաններից գետի հյուսիս տարածվում են սեփակողային տափաստանները՝ սկսած Ոք գետի ակունքներից (արևելքում) մինչև Սեվ և Ազովի ծովերի ափերը (արևմուտքում): Սևահողային տափաստանների մակերեսութը ներկայացնում ե գաշտավայր, վորը վորոշ տեղերում բարձրանում է: Բարձրություններից ամենախոշորն ե Դոնեցի բլրաշարքը, վորն իր ընդերքում պահում ե ամբողջ աշխարհում հայտնի սքանչելի քարածխի շերտերը — դա Դոնեցան և Դաշտավայրը թեքվում ե հարավային ուղղությամբ, վորի հետևանքով այստեղի գետերն ուղղվում են դեպի Սեվ, Ազովի և Կասպից ծովերը. որինակ՝ Դնեպրը, Դոնը, Վոլգան, Ուրալը: Աւրալյան լեռներից գետի արևելք՝ տափաստաններում քիչ գետեր են պատահում, նրանք գրեթե բոլորն ել թափում են Որ գետը:

Սևահողային տափաստաններում ամառը շոգ ե և տեսմ ե 4—5 ամիս: Ամառն սկսվում ե գեռ մայիս ամսից: Այստեղ ամառը չոր ե լինում, անձրել հազվադեպ ե, բայց, այնուամենայնիվ, ավելի հաճախ ե դալիս, քան չոր տափաստաններում: Թուրքանի գաշտավայրից այս կողմը փչում են տաք ու չոր քամիներ: Աշունը կարճատե և: Զմեռը նույնպես տևական չե: Հաճախ փչում են հյուսիս-արևելյան ցուրտ քամիներ և մնում ե բուք, վորը ձյունով ծածկում ե գյուղերը, ճմառապես կարմիները և, նույնիսկ, գնացքներ ե կանգնեցնում: Գարունը վաղ ե գալիս և կարճատե և: Վորքան գետի արևելք՝ այնքան ավելի տափաստանները հեռանում են ծովից, դրա համար ել

քամիներն այստեղ աննշան քանակությամբ խոնավություն են բերում և կլիման ավելի յե չորանում:



Տափաստան

Տափաստաններում ամենալավ ժամանակը գարունն ե: Խիստ ձմեռվա բուք ու փոթորիկներից հետո, մարտին յեղանակը սկսում ե տաքանալ: Զյունն արագորեն հալվում ե և խոնավությամբ հագեցած հողը ծածկում է բազմազան ծաղկափիթ խոտերով: Ամենից առաջ ծաղկում են ձնձն աղիկը, կակաչը, վարոնք գեռ նախորդ տարվանից իրենց սոխարմատների մեջ հավաքել են սնուցիչ հյութեր: Դրանցից հետո յերեսում են զանազան խոտեր: Ցերը տափաստանում փչում ե հովը, խոտն սկսում է տատանվել և հիշեցնում ե ծովի ծփանքը: Խոտերի մեջ շատ միջատներ կան: Բուն շինած, ապրում են և շատ կրծողներ՝ մկներ, արջամկներ, գետնասկյուներ: Ամբողջ որը ճռվողում են թռչունները:

Վրա յե համառում ամառը, արևն արդեն ավելի ուժեղ ե այրում, և տափաստաններում սկսվում ե անտանելի շոգը: Խոտերը չեն գիմանում շոգին ու չորությանը և թռութում են:

Սոխարմատային բույսերն արդեն կարողացել են սննդի պաշար հավաքել հաջորդ տարվա համար: Այժմ արդեն տափաստաններում աճում են միայն այնպիսի խոտեր, վորոնք հեշտությամբ են դիմանում շող ու չոր յեղանակին: Անապատը նորից ծածկվում է բազմազան խոտաբույսերի ծածկութով: Բայց այս անդամ յերեսում են բոլորովին այլ տեսակի խոտեր: Ծաղիկներ քիչ են յերեսում: Գերակշռում են բարձր խոտերը, վորոնք ունեն մազմղուկներով ծածկված յերկարավուն ու մանր տերևները: Այդպիսին են վետրախոտը, բարձվենյակը: Թոշունները հեռանում են տափաստանից, մնում են միայն արոսը, արտույտը և տափաստանային արծիվը:

Ամառվա յերկրորդ կեսին շոգն ել ավելի յեռմեղանում: Ողն անչափ չորանում եւ: Տափաստանն այնպես է փօխվում, վոր անձանաչելի յեռմում: Արեի կիզիչ ճառապայմբների տակ փշանում են բոլոր բույսերը: Մնում են միայն փետրախոտն ու բարձվենյակը, բայց նրանք ել դեղնում են և զունատվում: Տափաստանն ստանում ե գորշ գեղնավուն գույն: Տափաստանը ցերեկն անկենդան ե, բայց գիշերը մինչև լուսաբաց նորից կենդանանում ե: Մերթ այստեղ, մերթ այնտեղ յերաններով թոշում են կաքանչերը, խոտերի մեջ անդադար ճռճռում են ճպունները: Ցերեմն լովում ե մկների ծվծվոցը: Տափաստանի վրա սալառնում ե տափաստանային արծիվը, վորոններով իր վարսը:

Գալիս ե աշունը: Շոգը մեղմանում ե: Սկսում են վշել ցուրտ քամիներ: Թոշուններն ու միջանները լուսում են: Կըրծողները ձմեռվա պատրաստություն են տեսնում:

Ամբողջ տափաստանը, վոր բանում ե հազարավոր կիլոմետր տարածություն, ծածկված ե սեահողի թանձը շերտով: Վրա համար ել կոչվում ե սեահողային տափաստան: Աշխարհում և վնչ մի յերկիր չունի այդպիսի լայնածավալ սեահողային շերտեր: Դարերի ընթացքում տափաստանը տարեցաւարի ծածկել ե թանձը խոտով: այստեղ ամեն տարի խոտն աճել ե, թառամել ու տպա փտել, այսպիսով բուսահող ե կուտակ-

վել, և գոյացել սեահող: Սեահողն այդ տափաստանների գլուխավոր հարստությունն եւ: Այդ տափաստանը մեծ բերք է տալիս, յեթե յերաշար չի վասում: Այստեղ են աճում հյութեղ խոտը, լավագույն հացահատիկը և գտնազան տեսակի մրգեր ու բանջարեղեններ:

Սեահողային տափաստաններում բնակչությունը խիտ ե: Այստեղ մեծ մասամբ ապրում են ուկրաինացիներ և ուռուներ: Յարական Ռուսաստանում բոլոր աշխատավորները ճնշվում եյին, բայց ուկրաինացիներն ավելի ելին ճնշվում, քան ուռուները. նրանք զրկված եյին նույնիսկ իրենց մայրենի լեզվով խոսելու իրավունքից: Հիմնարկներում գործավարությունը ուսուաց լեզվով եր կատարվում: Ուկրաինացիների յերեխաները պետք ե դաստիարակվեյին ուռուսական դպրոցներում: Ուկրաինական լեզվով գրքեր գրեթե բոլորովին չկային:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո արմատապես փոխվեց Ուկրաինայի աշխատավորության կյանքը: Կազմվեց Ուկրաինական Խորհրդային Սոոցիալիստական Հանրապետություն, Արագ տեմպով զարգանալ սկսեց Ուկրաինայի տնտեսական և կուլտուրական կյանքը, վորը մեծ նշանակություն ունի ամբողջ Միության սոցիալիստական շնարարության համար:

Սեահողային տափաստանը ԽՍՀ Միության հացի շտեմարանն եւ: Այստեղ փոփած են ցորենի զաշտեր, այգիներ, բռնականներ, բանջարաննոցներ: Այս տափաստանում գլխավորապես մշակում են ցորեն, յեղիպատցորեն, շաքարի ճակնդեղ, արեածաղիկ, ծխախոտ և բամբակ:

Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ սեահողային տափաստանների ամենաարգավանդ հողերը կալվածատերերին և կուլակներին եյին պատկանում: Զքավոր և միջակ գյուղացիները ծանը զբության մեջ եյին գտնվում:

Խորհրդային իշխանության որով գյուղացիական տնտեսությունները համախմբվել են կոլտնաեսություններում: Կոլտնաեսականների գրությունն որեցոր բարելավվում եւ: Հիմնվել են և հիմա յել հիմնվում են հացահատիկային խորհնանտե-

սություններ: Խորհուտեսություններն իսկական գյուղատնտեսական ֆաբրիկաներ են: Աշխատանքի դրեթե բոլոր տեսակները՝ վարը, ցանը, բերքահավաքը, մեքենաներով են կատարվում: Կառուցված են մի քանի հարյուր մեքենա-տրակտորային կայաններ: Համառ պայքար ե մղվում յերաշտի և դաշտային վնասատուների դեմ:

Սևահողային տափաստանը հարուստ ե վոչ միայն արգավանդ հողով, այլև հանածոներով: Այստեղ շատ կան յերկաթի և քարածխի շերտեր: Քարածխի մեծ պաշար կա Դոնքասում՝ Դոնեցի քարածխային ավաղանում, վորը գտնվում է Դոնեցի լեռնագոտում: Յերկաթ ահանքի մեծ պաշար կա Դոնքասից արևմուտք, Դնեպր գետի այն կողմը՝ Կրիվոյ Ռոգ քաղաքի մոտերքը, ինչպես նաև Ղրիմի թերակղզու վրա՝ Կերչ քաղաքի մոտ:

Հակայական ելեկտրական եներգիա յե պահանջվում՝ Դոնքասի և Կրիվոյ Ռոգի գործարանների և հանքահորերի հագարակոր մեքենաներն աշխատացնելու համար: Հենց այստեղ, մոտերքում, Դնեպր գետի վրա կառուցված ե հիգրաելեկտրակայան՝ Դնեպրոգեսը:

Սևահողային տափաստաններից գեղի հյուսիս կլիման համեմատաբար ավելի խոնագ ե, այստեղ տափաստանների միջև պատահում են և անտառներ: Այդպիսի տափաստանը կոչվում է անտառատափաստան: Անտառատափաստանում աարածված ե սևահող, Այստեղ, ինչպես և սևահողային տափաստաններում, բնակչությունը գլխավորապես կազմված ե ուկրաինացիներից և ռուսներից: Տնտեսությունը նմանապես կրում է նույն բնույթը, ինչ վոր սևահողային տափաստաններում: Անտառատափաստանները նույնպես հանդիսանում են ԽՍՀ Միության հացի շոեմարաններ:

Վարժություններ. — 1. Գտեք ԽՍՀ Միության քարտեզի վրա Դոնքասը, Կրիվոյ Ռոգը, Կերչը, Դնեպրոգեսը: 2. Գտեք ԽՍՀ Միության բուսական քարտեզի վրա սևահողային տափաստանների և անտառատափաստանների գոտիները: 3. Քարտեզի վրա կարդացեք այն քաղաքների անունները, վորոնք

գտնվում են սևահողային տափաստաններում և անտառատափաստաններում (Խարկով, Վորոնեժ, Ռոստով, Ստալինգրադ, Շարատով, Կույբիշև):

ԽԱՌՆ ԱՆՏԱՌՆԵՐ

Անտառատափաստաններից հյուսիս սկսվում են այնպիսի անտառներ, ուր սաղարթավոր ծառերի միջև պատահում են նաև փշատերեկ ծառեր: Այդպիսի անտառները կոչվում են խառն անտառներ:

Խառն անտառները համատարած շերտով ձգվում են ԽՍՀ Միության Յեվրոպական մասում: Նրանք ձգվում են Միության արևմտյան սահմանի յերկարությամբ, մոտավորապես Կիևից մինչև Լենինգրադ և սեպածե անցնում դեպի արևելք՝ Դորկի քաղաքի ուղղությամբ: Խառն անտառների այս շերտումն է գտնվում մեր Միության մայրաքաղաք՝ Մոսկվան:

Խառն անտառների գոտին, ինչպես դա յերեսում է ֆիզիկական քարտեզից, գտնվում է դաշտավայրում, միայն այդ գոտու միջին մասում, հյուսիսից-հարավ ձգվում է մի բարձրություն՝ Միջին-Ռուսական բարձրության վրա, վորտեղից նրանք հոսում են զանազան կողմերով դեպի հետեւյլ յերեք ծովերը՝ Բալթիկ, Սև և Կասպից:

Խառն անտառների գոտում կլիման համեմատաբար ավելի ցուրտ ե, քան սևահողային տափաստաններում և անտառատափաստաններում: Արևմտյան քամիները, վորոնք փչում են Ալտանայան ովկիանոսից, բավականաշատ խոնավություն են բերում: Այս գոտում հաճախ ե անձրև գալիս: Սակայն ձմեռն այնքան խիստ չե, վարովիետե տաք քամիները մեղմում են այն: Զմեռն այստեղ շարունակվում է ամբողջ հինգ ամիս: Բոլոր գետերը սառչում են և ավելի յերկարատե, քան տափաստաններում: Այս գոտում վոչ մի տեղ այլև սևահող չի պատահում: Հողն այստեղ շատ քիչ ե պարունակում բուսա-

հող և նման ե մոխրի. այդպիսի հողը կոչվում է պոգոլա-
յին հող:

Խառն անտառներում լավ են աճում կեչին, կաղնին,
թխին, հացին և լորին: Ծառերի տակ աճում են զանա-
գան թփեր: Անտառն ամենից ավելի կենդանի յե այնտեղ:
ուր կան սաղարթավոր տեսակներ: Արել ճառագայթներով լու-
սավորված կանաչ տերեները փայլում—շողջողում են:

Այստեղ վայրի գաղաններ քիչ են մնացել, վորովհետեւ
մարդը վոչնչացրել ե նրանց: Յերգող թոշունները ճյուղից-
ճյուղ, ծառից ծառ են թոշում և իրենց ծլվոցով կենդանաց-
նում են անտառը:

Խառն անտառների արևմտյան մասում մեծ տարածու-
թյան վրա ճահիճներ են ձգված: Ճահճային տարածություն-
ները հարուստ են տորֆով:

Խառն անտառների գոտում զլիավորապես ապրում են
բելոռուսներ և ռուսներ: Այստեղ և գտնվում Բելո-
ռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրա-
պետությունը: Յարական իշխանության որով բելոռուս-
ները վատ եյին ապրում: Նրանց գլուղերը ցրված եյին ճահ-
ճուտներում և անտառներում: Քիչ արգավանդ հողերը տալիս
եյին ցած բերք: Արդյունաբերությունը թույլ եր զարգացած:
Բնակչությունն անգրագետ եր: Դպրոցներ քիչ կային, յե-
ղածներումն ել դասավանդում եյին ռուսաց լեզվով: Բելո-
ռուսների կյանքը բարելավվեց միայն Հոկտեմբերյան հեղա-
փոխությունից հետո: Շպտ տեղերում ճահիճներն արդեն չո-
րացված են, և այժմ այդ նոր հողամասերի վրա փռված են
գաշտեր և արոտատեղիներ: Չորացված տորֆային վայրե-
րում կառուցված են ելեկտրակայաններ, վորոնք ելեկտրոն-
ներդիա յեն տալիս գյուղատնտեսությանը և արդյունաբե-
րությունը: Կառուցված են փայտի վերամշակման շատ գոր-
ծարաններ, վորոնք տալիս են մեզ թուղթ, լուցկի, ֆանե-
րա և այլն: Արագ թափով զարգանում ե և բելոռուսների
կուլտուրան:

Խառն անտառների գոտում ուժեղ կերպով աճել ե ար-
դյունաբերությունը: Այստեղ առաջներումն ել ֆաբրիկաներ և
գործարաններ կային, բայց արդյունաբերությունն առանձնա-
պես զարգանալ սկսեց խորհրդային իշխանության որով: Մոսկ-
վայրում, Լենինգրադում և Գորկում կառուցված են բազմա-
թիվ խոշոր գործարաններ: Առաջին անգամ այդ գործարաննե-
րում սկսեցին թողարկել այնպիսի բարդ մեքենաներ, վորոնք
ծառայում են Խորհրդային Միության զանազան անկյուննե-
րում կառուցվող ֆաբրիկաների, գործարանների և ելեկտրա-
կայանների սարքավորմանը. որինակ, Թբիլիսիի, Քութայիսիի
ֆաբրիկաներն ու գործարանները, Զագեսն ու Ռիսնգեսը բազ-
մաթիվ մեքենաներ են ստացել Մոսկվայից և Լենինգրադից
իրենց սարքավորման համար:

Մոսկվայի ուղղությամբ, ինչպես յերեսում ե և քարտեզից,
ամեն կողմից յերկաթուղիներ են ձգվում: Մոսկվայի յերկա-
թուղային հանգույցում տասնմեկ յերկաթուղազիծ ե կենտրոնա-
նում: Այդ հաղորդակցության ճանապարհներով Մոսկվան և մո-
տակա արդյունաբերական կենտրոնները կապ են հաստատում
իՍՀ Միության հեռավոր շրջանների հետ: Այստեղից միլիո-
նավոր արդյունաբերական ապրանք ե ուղարկվում Խորհրդային
Միության բոլոր անկյունները և նույն ճանապարհներով ան-
թիվ քանակությամբ ամեն տեսակի հանքային նյութեր ու վա-
ռելիք ե բերվում այդ արդյունաբերական կենտրոնները:

Սակայն յերկաթուղիները, այնուամենայնիվ, չեն բավարա-
րում վոխադրման գծով աճող մեր պահանջները: Հաղորդակցու-
թյան ամենաեժան ճանապարհը—դա յրային ճանապարհն ե: Նա-
յեցեք իՍՀ Միության քարտեզին. խառն անտառների գոտում
սկսվում ե առնում Յեղուսակայի ամենախոշոր գետը՝ Վոլգան, վորո-
նի յերկարությամբ յերկու և կես անգամ անցնում ե մեր կուր-
գետից: Վոլգան ձախ կողմից մեծ վտակներ ե ընդունում, իսկ
աջ կողմից նրա մեջ թափվում ե Ոկա գետն իր Մոսկվա-գետ-
վտակով, վորի վրա գտնվում ե Մոսկվան: Սակայն Վոլգայի
նավերը չեյին կարողանում մոտենալ Մոսկվա քաղաքին, վա-
րովինեան Մոսկվա-գետը սակավաջուր եր, և Մոսկվա քաղաքը

հեռու եր մնում Վոլգայից, չնայած այդ գետի մոտիկությանը՝ Յեվ աճա խորհրդային իշխանությունը վորոշեց Մոսկվա-գետը Նավարկելի դարձնել և Մոսկվա քաղաքը միացնել Վոլգայի ջրային ճանապարհներին։ Յեվ, իսկապես, ջրանցքը բացվեց Վոլգայի և Մոսկվա-գետի միջև։ Այժմ Մոսկվա-Վոլգա ջրանցքի միջոցով Մոսկվա քաղաքը ջրային ճանապարհներով հաղորդակցության մեջ և մտնում ԽՍՀ Միության բազմաթիվ յերկրների հետ, այդ տեղերն եւ ուղարկում իր արդյունաբերական ապրանքները՝ մեքենաներ, մանածային գործվածքներ, գրքեր՝ Միության բոլոր ժողովուրդների համար և այդ տեղերից ստանում միլիոնավոր տոնն ցորեն, աղ, ձուկ, նավթ, յերկաթ, ածուխ և անտառանյութ։

Մոսկվան և Լենինգրադը Խորհրդային Միության ամենախոշը քաղաքներն են։ Այդ յերկու քաղաքներում ապրում եւ մոտավորապես այնքան բնակչություն, վորքան ամբողջ Անդրկովկասում։

Վարժություններ. — 1. Գտեք ԽՍՀ Միության քարտեզի վրա՝ Լենինգրադը, Կիևը, Մոսկվան, Գորկին։ 2. Գտեք Մոսկվա-Վոլգա ջրանցքը։ 3. Գտեք ԽՍՀՄ ուսւական քարտեզի վրա խառն անտառների տարածման շրջանը։

Տ Ա Յ Գ Ա

Խառն անտառներից և անտառատափաստաններից հյուսիս ապարթավոր ծառերը հաղվագեպ են դառնում. ամբողջ տարածությունը գրավված է փշատերև անտառներով։ Սաղարթավոր ծառեր փշատերև անտառներում միայն տեղաբնակ են պատճում, այն ել հարավային մասում։ Այդպիսի անտառը կոչվում է տայգա։

Տայգան մեծ մասամբ փռված է դաշտավայրում։ Միայն յերկու տեղ այդ դաշտավայրը կտրվում է. գրեթե նրա մեջտեղը ձգվում են Ուրալյան լեռները և Յենիսեյ գետից արևելք բարձրանում է Միջին-Միբիրական բարձրավանդակը։

Տայգայում կլիման խիստ ցուրտ է. Զմեռը ցուրտ է և

յերկարաւու (6—8 ամիս)։ Տայգայի արևմտյան՝ Յեվրոպական մասում կլիման ավելի քիչ է խիստ, վորովհետև այս մասը հեռու չի գտնվում Ատլանտյան տաք ովկիանոսից։ Բայց տայգայի ասիական մասի կլիման շատ է խիստ։ Ովկիանոսի տաք ու խոնավ քամիները չեն հասնում տայգայի այս մասին, իսկ հյուսիսում՝ նրան մոտիկ գտնվում են բևեռային ծովերը։ Միբիրական տայգայի մի տեղում — Վերխոյանսկ քաղաքի մոտ ձմեռն ուժեղ սառնամանիք է լինում. յերկրագնդի վրա և վճռ մի տեղ չկա այդպիսի սառնամանիք։ Այստեղ, հունվարին ողի միջին ջերմությունը հասնում է 56 աստիճանի, իսկ յերեան սառնամանիքը հասնում է 70 աստիճանի։ Այս իսկ պատճառով Վերխոյանսկը կոչվում է «Ցրտի բևեռ»։ Այդպիսի սառնամանիքի ժամանակ սնդիկը սառչում է ջերմաչփում, յերկաթը դառնում է փիրուն, ծառերը ճայթյունով ճաքում են, նույնական ավելի տաք ու խոնավ է միայն Հեռավոր Արևելքում, ձապոնական ծովի ափին։

Տայգայում հոսում են մեծ և ջրառատ գետեր՝ Ոբը, Յենիսեյը, Լենան, Պեչորան և Հյուսիսային Դվինան։ Ջմռանը բոլոր գետերը սառչում են։ Մի քանի տեղ սառցի հաստությունը հասնում է յերկու մետրի։ Ոբը, Յենիսեյը և Լենան հոսում են հարավային յերկրներից։ Նրանք սկիզբ են առնում լեռներում և բռորն ել թափվում են բևեռային ծովերը, վորոնք հանդիսանում են Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի մասերը։

Տայգայի Յեվրոպական մասում տարածվում են նոճին և յեղենին, տեղաբնակ պատճում են և կեչի ու կաղմախի, իսկ Ասիական մասում, ուր կլիման ավելի խիստ է, առնում են ծառերի այլ տեսակներ՝ մայրի, խիժոտ փիճու, կվենի։

Տայգան մռայլ ու տխուր է. Այստեղ չես հանդիպի հարավային անտառին հատուկ լուսավոր և ուրախ տնկյունների։ Հազարավոր կիլոմետր, տարածության վրա ձգվում են խիստ փշատերև անտառներ։ Անտառներում գրեթե ամբողջովին մռն

ու խոնագ ե: Փշատերկ ծառերի ստվերների տակ աճում են մամուռներ և սունկեր: Դրանց աբանքում՝ ցըզած են հաղարձի և մրտենական հապալասի (չերնիկա)՝ թփիկներ: Շատ տեղերում տայգան անանցանելի յեւ ամեն կողմ ընկած են ծառի բներ ու ճյուղեր. քարակոշտեր, տեղտեղէ ել ճահիճներ կան: Գետինը միշտ ծածկված է թափված փշատերներով:



Տայգան ձմռանը

Մուայլ տայգան յերբեմն տեղ է տվել գետերի, վորոնց ափերին տեղավորվել են զյուղեր: Առհաստրակ, տայգայում բնակչությունը նոսր է. կարելի յեւ կարել հարյուրավոր կիլոմետր տարածություն՝ առանց հանդիպելու և վոչ մի հոգու: Մարդկային վոտքը դեռ չի մտել տայգայի անտառների ամեցնախոսը մասերը:


Տայգայում հողն անբերի յեւ, վօրովհետեւ պողպոլային է: Տայգայաւմ՝ կենդանական աշխարհը, սակայն, բազմազան է, Այստեղ մշտապես ապրում են ցախաքըրը, մայրէ-

հավը, փայտփորիկը և այլն: Վայրի խոշոր գաղաններից այստեղ կա իշայծյամ: Նա ամառը խոտ է ուտաւմ, իսկ ձմեռը կրծում է թփերի կեղեմները և ծառերի ճյուղերը: Ծառից-ծառ է ցատկում սկյուռը. Նա կերակրվում է ծառերի բողբոջներով և սերմերով: Տայգայում շատ գիշատիչներ կան: Թաջուններ և սկյուռներ են վորսում կղաքիւր, սամույրը, ժանտաքիսը:

Անտառում, ասես, անձայն թռչում են բգերն ու բգեծները: Մանր կենդանիներ ու թռչուններ ե վորսում աղվեսը: Ծառերի վրայից կենդանիների վրա յեւ հարձակվում լուսանը: Անտառի յեղեցներին թափառում են գայլերը: Զմեռը նրանք վահմակներ են՝ կազմում և հացակվում նույնիսկ խոշոր կենդանիների վրա: Անտառի թափուառում ապրում է գորշ արջը: Նա կերակրվում է բույսերով, հատապտուղներով և կենդանիներով: Զմեռն անց է կացնում իր վորջում և քուն և մոնում:

Ջմեռվա կեսին սառնաշմտնիքը կաշկանդում է տայգայի բնությունը: Ծառերի ճյուղերն այնպես են սառչում, վոր ամենաթեթև հարվածից փշրվում են: Նապաստակներն այլևս վաղելու ուժ չեն ունենում և ժամանակի մեծ մասն անց են կացնում իրենց ըներում: Կաքավներն ու մայրեհավերը ծառից-ծառ չեն թռչում և մանում են ձյան մեջ, միայն լուսաբացին կարձ ժամանակով:

Իշայծյամ հյուր են գնում կեչիներին ու յեղենիներին և սնվում նրանց բողբոջներով: Գազաններն այլևս չեն յերկում. նրանք թաքնվում են: Ցեվ ձուկն ել անշարժ պառկում է գետի հունին:




Իշայծյամ

Ամեն կողմ լուսթյուն ե թագավորում։ Ամբողջ բնությունը ծածկված ե ձյան սպիտակ սավանով։ Ամենափոքր խշշղոցն անգամ լովում ե հեռավոր տարածությունների վրա, իսկ առնակների ճռճոցը կարելի յե լսել 2—3 կիլոմետր հեռավորությունից։ Մարտին սկսում են փչել քամիները՝ զարնան այդ նախակարապետները։ Ձյան կույտերը բարձր տեղերից գլորվում են հովիաները և սպառնում վոչնչացնել ճամբորդներին։ Ապրիլին և մայիսին ձյունն ամբողջովին անհետանում է։ Դրանից հետո գետերն ել են բացվում և ազատվում սառցային ծածկույթից։ Նախ բացվում են փոքրիկ գետակները, հետո՝ մեծ գետերը և ապա՝ լճերը։ Ջրի յերեսին բղացող սառույցները քանդում են ափերը, վնասում անտառներին և թփերին։ Ծառերի ճյուղերն ու գաղաթները կանաչում են և ծաղկում, հաճախակի յերեսում են նապաստակի հետքեր, իսկ նրանց յետեկից՝ աղվեսներինը ու գայլերինը։ Յեղշերուները հոտերով դուրս են գալիս արածելու։ Թոշունները ճյուղերի վրա նստած՝ փետուրներն են հարդարում։ Վերացառնում են սաղը, կարապը, բաղը, կոռունկն ու մյուս չվող թոշունները, և նրանց աղմուկը խլացնում է շրջակայքը։ Հումսին արդեն շոգ ե լինում, բայց այստեղի շոգը մեր զարնանային տաքությունն է հիշեցնում (10—18 աստիճան)։ Հումսին ու ոգոսատող անձրեային ամիսներ են։ Աշունը նույնակես անձրեային ե, անձրեի հետ յերբեմն ձյուն ել և գալիո։ Թոշուններն ու կենդանիները չվում են հարավ և ամեն կողմ նորից ծածկվում ե ձյունով։ Բնությունը քուն և մտնում և սիրապետում ե սառնամանիքը։

Տայգայի գոտում ապրում են եվեն կներ, յակուտներ, կարելներ, ֆիններ, կոմիներ, ռուսներ։ Եվեններն զբաղվում են փորսորդությամբ, յեղջերվապահությամբ և ձըկնորսությամբ։ Յակուտները մասսամբ նստակյաց են, մասսամբ կիսանստակյաց և զբաղվում են առնասնապահությամբ, հողագործությամբ։ Կարելները, ֆինները, կոմիները և ռուսները նստակյաց են և զբաղվում են զվարապետական գյուղատնտեսությամբ, անտառագործությամբ և մուշտակա-

մոլթ գաղանների վորսով։ Նրանք մեծ մասամբ ապրում են գետերի և յերկաթուղու մոտ։

Յարական իշխանության որով տայգայի ժողովուրդները կտրված եյին կուլտուրական կենարուններից։ Նրանց վորսորդական արհեստի արդյունքները չնչին գներով ընկնում եյին մեծագորդ վաճառականների ձեռքը։



Տայգան ամռանը

Խորհրդային իշխանության որով տայգայի ժողովուրդների կենցաղային պայմաններն արմատապես փոխվեցին։ Այդ մեծագորդ վաճառականներին փոխարիննեցին ֆակտորիաները. գրանք պետական առևտերի այն կետերն են, ուր վաճառքի համար տարվում են զանազան ապրանքներ՝ ալյուր, ձավարեղեն, աղ, զնդակ, վառող ու մանրագնդակ, յուղ, թեյ, շաքար, կոնֆետեղեն, զանազան տեսակ ամանեղեն, հագուստեղեն, գրքեր, պլակատներ և այլն։ Տայգայի բնակիչները Փակտորիաներն են բերում իրենց ունեցած մուշտակեղենը և գրա փոխարեն ստանում կամ գրառ և կամ թե իրենց պետք յեղած ապրանքները։ Տայգայում նստակեցության համար կառուցվում են գյուղեր, դպրոցներ, կոռպերատիվներ։ Այնտեղ,


վորտեղ քոչվոր յեղջերվապահներն են ձմեռում, ստեղծվում են կուլտքազներ: Կուլտքազները կան՝ դպրոց, հիվանդանոց, ռադիոկայան, կուլտուրայի տուն, կոռագերատիվ: Ահա այսպես փոխվել ե տայգայի ժողովուրդների կյանքը սոցիալիզմի յերկրում:

Տայդան շատ հարուստ ե հանածոներով, բայց վոչվոք չեր հետազոտում զբանք դարձական իշխանության որովի Այժմ տայդայում հայտաբերված են՝ վոռկի, արծաթ, արծիճ, ցինկ, քարածուխ, աղ, գրաֆիտ, նավթ։ Մեծ նշանակություն ունի կուղբասի (Կուղնեցկի ավագան) քարածուխը, վորը հոչակված ե իր մեծ պաշարով և վորակով։ Աւրալից արեմուտք, կամագետի ափին հողի ընդերքում դոնի գույն են զանազան աղեր. զբանց մի տեսակը գործածվում է կերակրի մեջ, իսկ մի քանիսը պետքանի են դաշտերի պարագայթման համար — զբանք կալիումի աղերն են։ Յարական իշխանության որով այս հարստությունները մնացել են անոգտագործելի, իսկ այժմ՝ Բերեզնիկում կառուցված ե աշխարհի ամենամեծ քիմիական կոմբինատը։ Այդ կոմբինատն ընդգրկում է մի քանի խոշոր գործարան, ուր պարագայթները ե պատրաստվում։ Այստեղից կամագետ պետք պարագայթերն ուղարկվում են ԽՍՀ Միության զանազան անկյունները։ Կոլտնտեսությունների և խորհունտեսությունների անծայրածիք դաշտերի համար։

Տայգայում արտգորեն բարձրանում են նոր քաղաքներ՝ Որինակ, մի անգամ կոմյերիտականներ յեկան այստեղ, տայգայում ընտրեցին մի անտառամաս, ծառեց կտրեցին, գետինը մաքրեցին, ճահիճը չորացրին, և Ամուլ դետի ափին մի անգամից բարձրացավ մի նոր արդյունաբերական քաղաք իր գործարաններով և ֆաբրիկաներով, յերկինարկանի աներով, հիվանդանոցներով, ակումբներով, խանութներով, կինոթատրոններով: Այդքաղաքը կոմսոմոլուկն է՝ Խորհրդային Միության ամենայերիտասարդ քաղաքներից մեկը: Նոր քաղաք է կառուցված նույն Յենիսեյի գետաբերանի մոտ — գա Իգարկան և բեկեռային նովահանգստային քաղաքը:

Տայգայում միայն յերեք գծով և անցկացված յերկաթուղի. մի յերկաթուղակիծը ձգվում է տայգայի հաբավային սահմանագծի գրեթե յերկարությամբ՝ լենինգրադ-Վլադիվոտսկ։ Մյուս յերկուար տայգան լայնքով են կտրում՝ 1. լենինգրադ-Մուրմանսկ և 2. Վոլոգդա-Նորսկելսկ։

Տայգայի տնտեսության համար մեծ նշանակություն ունեն գետային ճանապարհները և հցուսխային ծովային ճանապարհը. Հյուսիսային ծովային ճանապարհն անցնում է Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի բեղեռային ծովերով: Բացի գետային ճանապարհներից, տայգայում այժմ գցվում են ավտոմոբիլային ճանապարհներ (արանմներ):



Սպիտակ-Բալթիկծովյան ջրանցքը

Տայգայի հյուսիս-արևեմտյան մասում, Կարելա Ֆիննական ԽՍՀ-ում և Կոլայի թերակղղում՝ Ֆինլանդիայի սահմանի մոտ կան անսպառ հարստություններ՝ ճոխ անտառներ, մուշտակամորթ՝ գազաններ, հանքեր, սպիտակ տծուի Սակայն ցարական

իշխանության որով այս յերկիրը վայրենի յեր և անմարդաբնակ: Զկար և ճանապարհային հաղորդակցություն: Յեզ ահա խորհրդային իշխանությունն այդտեղի լճերի և գետերի միջով բացեց նավարկելի մի ճանապարհ, վորն իրար և միացնում յերկու ծով՝ Սպիտակ և Բալթիկ: Այդ Ստալինի անվան Սպիտակ-Բալթիկ ծովյան ջրանցքով կարելի յե 5—6 որում կենինգրադից հասնել Սպիտակ ծովը: Իսկ առաջ այդ ճամբորդության համար պետք եր 17 որ, վորովինեան անհրաժեշտ եր շրջանցել Յեվրոպայի հյուսիսային ափերը:

Սպիտակ ծովի ափին, Հյուսիսային Դվինայի գետաբերանի մոտ գտնվում է խոշոր մինավահանգիստ՝ Արխանգելսկը, վորտեղից անտառանյութ և փոխազրկում արտասահման:

Վարժություն. — 1. Գտեք ԽՍՀ Միության բուսական քարտեզի վրա տայդայի տարածման շրջանը: 2. Գտեք ԽՍՀ Միության քարտեզի վրա Վերխոյանսկ, Արխանգելսկ, Իգարկա, Կոմսոմոլսկ, Բերեզնիկի քաղաքները: Քարտեզի վրա կարդացեք տայդայի գոտում գտնվող մյուս քաղաքների անունները:

Տ Ո Ւ Դ Ր Ա


Տայդայից դեպի հյուսիս, Սառուցյալ Ովկիանոսի ափին գտնվում են անտառազուրկ տարածություններ, ուր ուժեղ ցրտի պատճառով ծառեր չեն աճում, և այդ ամբողջ տարածությունը ծածկված է մամուռներով: Քարաքոսներով: Այդ անտառազուրկ շրջանը կոչվում է տունդրա:

Տունդրան ձգված է դաշտավայրում, նրա մակերեսութը տեղաբեկ ըլլապատ է, իսկ տեղ-տեղ հանդիպում ենք նաև լեռնուառունդրայի:

Տունդրան համարյա ամբողջապես ընկած է բնեռային շրջանից այն կողմը, ուր ձմեռն արել որերով, նույնիսկ ամիսներով բոլորովին չի յերեսում:

Տունդրայի ափերին սառը ծովերը ծածկված են սառցի համառարած շերտով: Չմեռն այստեղ տեսում են 8—9 ամիս, Սառնամանիքը, բուքը, սառը և չոր քամիներն այստեղ հա-

ճախակի յերեսույթ են: Զյունն առատությամբ չի դադիս, և հաղը շատ խորն ե սառչում:




Տունդրան ամռանը

Ամառը տունդրայում կարճատե և լինում: Որերով և նույնիսկ ամիսներով արել մայր չի մտնում, բայց նրա ճառագայթներն անչափ թեք են ընկնում, վոր տունդրան չի տաքանում: Այդ իսկ պատճառով այստեղ հողի մակերեսույթից 50—100 սմ. խորության վրա գտնվում է հավերժական սառած շերտ: Այդ շերտը չի թողնում, վոր ջրերն անցնեն գետնի խորքերը: այդ պատճառով ձնհալից հետո տունդրայում գոյանում են ճահիճներ և լճեր: Տունդրայի գոտով անցնում են նաև մեծ գետեր, վորոնք սկիզբ են առնում հարավային հեռավոր յերկըներից և թափվում բեկեռային ծովերը, որինակ՝ Փեշորան, Ուլը, Յենիսեյը և Լենան:

Տունդրայի բուսականությունը հարուստ չե: Այստեղ չկան անտառներ, վորովինետե սառած շերտի զատճառով ծառերը չեն կարողանում խոր արմատներ դցել: Ցածրադիր տեղերում

աճում են մամուռներ, ավելի բարձրադիր տեղերում՝ քաքար ուսեր, վորոնցից աչքի յե ընկնում յագելը, Յագելը մոխրագույն է, մանրիկ, չոր տերեներով, վորոնք նման են յեղջերպի ճյուղավոր յեղջյուրներին, նրա ցողունն ավելի փափուկ է և հյութառատ: Յեղջերուն հաճույքով է ուտում տյդ բույսը, ահա թե ինչու յագելը կոչվում է նաև «յեղջերպի մամուռ»: Տունդրայում այստեղ-այնտեղ պատահում են բնեռային գաճաճ ծառեր, որինակ՝ կեշի, ուսի, սոճի, վորոնք կպած են




Տունդրայի բուսականությունը. 1. Կապույտ հապալաս, 2. Հավամբգի

գետնին: Այդ գաճաճ ծառերի բարձրությունը լուցկու ձողիկի բարձրությունից չի անցնում, այնպես վոր այդպիսի ծառերի մի ամբողջ փունջ կարելի յե տեղավորել կոճակի ողակում: Մամուռների մեջ ցրված են հատապտղային թփեր՝ լոռամբգի, ճախնամորի, կապույտ հապալաս, հավամբգի: Միայն քամիներից պաշտպանված տեղերում են աճում վառ ծաղիկներով խոտեր:

Տունդրայի կենտրոնական աշխարհն աչքի յե ընկնում իր բազմագանությամբ, սակայն կենդանիների թիվը մեծ չե: Տունդրայի գլխավոր կենդանին հյուսիսային յեղջերուն եւ Բներում ապրում են բենուային մկները, վորհնք ուղագում են քարաքոսով և մամուռով: Շատ կան բենուային աղվեսներ և բենուային բար, վորոնք վորսում են բիեռային մկներ և չփող թոշունները, Հաճախ պատահում են

և գայլեր: Ամառը տունդրան լցվում է մոծակների բզբցով, վորոնք մառախուղի նման պատում են ամեն մի կենդանի եյակի: Ամառը լճերի ափերն են գալիս զանազան չվող թռչուններ՝ բագեր, սագեր, կարապներ: Լճերում և գետերում բազմաթիվ ձկներ կան: Տունդրայի կենդանիները և թռչունները (աղվես, բուն և այլն) ճյունի պես սպիտակ են: Այդ սպիտակ գույնն ոգնում է նրանց գոյության կովում:



Հյուսիսային յեղջերու

Խորհրդային Միության մեջ տունդրաները գրավում են վրաստանից 40 անգամ ավելի մեծ տարածություն: Սակայն այդ անծայրածիր տարածությունը շատ նոսր բնակչություն ունի: Այստեղ ապրում են նեններ, սատաններ, լուսոր վետլաններ և աելմեններ: Տունդրաներում կա մի քանի քաղաք, այդ քաղաքներում, ինչպես և գետերի ափերին, գերակշռում են ուռւնները:

Համարյա այս բոլոր ժողովուրդները զբաղվում են վորհեռային մկներ և չփող թոշունները:

սորդաթյամբ, ձկնորսությամբ և յեղջերվապահությամբ, Սրանք գրեթե բոլորն ել քոչվոր են՝ փոխադրվում են մի տեղից մյուսը, կեր վորոնելով իրենց յեղջերուների համար:

Տունդրայի ժողովուրդներն աղքատ եյին ապրում ցարական իշխանության որով: Նրանք գտնվում եյին տունդրայի խիստ բնության տիրապետության տակ: Խորհրդային իշխանությունը տունդրայից քշեց բոլոր չարչիներին և մեծագնորդ վաճառականներին, վորոնք լափում եյին տունդրայից բնակչության վողջ բարիքը: Այժմ այստեղ կազմակերպված են ֆակտորիաներ: Տունդրայում բացված են կուտրազաներ, դպրոցներ, կինոթատրոններ, հիվանդանոցներ: Տունդրայի բնակչության բոլոր յերեխաները սովորում են դպրոցներում:

Տունդրայի բնակչաւթյան գլխավոր զբաղմունքը յեղջերվապահությունն է: Յեղջերուն վոչ միայն ծառայում ե քոչվորին (լծում են սահնակին, մնվում են նրա մսով, մորթին ոգտագործում են հագուստեղեն պատրաստելու և բնակարաններ կառուցելու համար), այլ և այժմ բազմացվում ե արդյունաբերական նպատակով: Յեղջերվի միան ուղարկվում ե պահածոների գործարանները, նրա մորթին նույնական ոգտագործում ե արդյունաբերական նպատակներով:

Մեծ նշանակություն ունի մուշտակամորթ գագանների վորսը: Տունդրայում կազմակերպված են վորտորդների արտելներ, հիմնվում են ֆերմաներ՝ մուշտակամորթ գագանների ամենաթանգարին տեսակները բազմացնելու համար:

Տունդրայում հանածո հարստությունները դեռևս վոչ բոլոր տեղերումն են հետազոտված: Ամենից ավելի լավ են հետազոտված կոլա թերակղզու ընդերքը: Այստեղ ճահիճների և լճերի միջև բարձրանում են Խիբինի լեռները: Մի քանի տարի առաջ այս յերկիրն անմարդաբնակ եր, Մերթ այստեղ, մերթ այստեղ կարելի յեր հանդիպել սաամ հովիվների, վորոնք արածացնում եյին յեղջերուների հոտեր: Սակայն Խիբինի լեռների հետազոտությունը ցույց տվեց, վոր նրանց ընդերքում ապատիտ կա թաքնված, վորը պետքական ե հողի պարաբռացման համար: Խիբինում այժմ բարձրացել ե մի նոր

քաղաք՝ Կիրովական ե ապատիտը, Կիրովսկի քաղաքը գեռևս յերիտասարդ ե: Նրա կառուցումն սկսվեց 1931 թվականին: Բայց այստեղ արդեն կան մի քանի ֆաբրիկաներ ու գործարաններ, շատ քարաշեն տներ, մի քանի դպրոց, հիվանդանոց, ակումբ, գրադարան և մի մեծ հնչուն կինո: Կիրովսկի փողոցներով անցնում են ավտոներ և ավտոբումներ: Քաղաքի մոտ կառուցված ե ելեկտրակայան, վորը ելեկտրաներգիա յե տալիս քաղաքին և հանգանորերին: Ահա այսպես վերածնվեց Խիբինի վայրենի տունդրան:

Տունդրայի բնակիչներն առաջներում հաճախ եյին սովորականում: Նրանք մնվում եյին միորինակ կերակրով ձկնեղենով, յեղջերվի և ծովային գազանների մսով: Միայն խորհրդային կոռպերացիան սկսեց տունդրա փոխադրել ցորենի ալյուր և ազ: Այստեղ վոչ մի գաղափար չունեյին բանջարեղենի մասին, չունեյին բանջարանոցներ, արտեր, վոչվոք չեր կարող մտածել, վոր սառած հողում, ճահիճներում կարելի յե բանջարեղեն մշակել, Բայց խորհրդային իշխանությունը կարողացավ այդ ել անել: Այժմ կոլա թերակղզում, կիրովսկ քաղաքին մոտ հիմնը ված ե գյուղատնտեսական փորձակայան, ուր մշակում են վոչ միայն կարտոֆիլ և կաղամբ, այլ և յելակ: Այդ փորձակայանն ապացուցեց բոլորին, վոր տունդրայում հնարավոր ե զբաղվել և բանջարաբուծությամբ, և հողագործությամբ: Արդարացան հայտնի ստալինյանի՝ Ս. Մ. Կիրովի խոսքերը. «Զատային պիսի հող, վոր խորհրդային իշխանության որով հնարավոր չլինի հմուտ ձեռների շնորհի առաջեցնել մարդկության բարորությանը»:

Տունդրայում առայժմ մի յերկաթուղի կա կոլայի թերակղզում—դա կիրովյան յերկաթուղին ե: Մնացած տարածության վրա հաղորդակցությունը պահպանվում ե սահնակներով, վորոնց լծում են յեղջերու կամ շուն: Ճանապարհազուրկ տունդրայում մեծ նշանակություն ունի գետերի ոգտագործումը՝ նավագնացության համար: Կոլայի թերակղզում գտնվում ե մի մեծ նավահանգստային քաղաք՝ Մուրմանսկը: Այդ նավահանգստան առանձնապես աչքի յե ընկնում նորանով, վոր չի սառչում՝ շնորհիվ իր մոտով անցնող ծովային տաք հոսանքի:

Վարժություններ. — 1. Գտեք ի՞նչ Միության բուսական բարեկղի վրա տունդրայի աարածման շրջանը: 2. Գտեք ի՞նչ Միության քարտեզի վրա կիրովսկ և Մուրմանսկ քաղաքները:


ԲԵԿԵՌԱՅԻՆ ԳՈՏԻ

Հյուսիսային բևեռի շուրջը, մինչև Յեվրոպայի, Ասիայի և Ամերիկայի ափերը, մի քանի հազար կիլոմետր տարածության վրա ձգվում է Հյուսիսային սառուցյալ ովկիանուը: Այդ ովկիանուի գրեթե կեսը՝ Յեվրոպայի և Ասիայի հյուսիսային ափերից մինչև բևեռը, պատկանում է Խորհրդային Միությանը: Այդ շրջանը մեր Միության ամենահեռավոր հյուսիսային մասն է: Դա կոչվում է բևեռային գոտի կամ Արկտիկա:

Բևեռային գոտու բնությունը շատ խիստ է: Սառուցյալ ովկիանուի ափերին և ովկիանոսում գտնվող կղզիներում հագերժական ձմեռն է թագավորում: Ամառը մի յերկու ամիս սառուցը հալվում է ովկիանոսի ափերին: Յերբ հեռանում են ափից դեպի խորքը, ովկիանոսի յերեսին նկատում ես լողացող սառցի մանը կտորներ: Դա արդեն նշան է, վոր այդտեղից վոչ հեռու՝ հյուսիսում, ովկիանոսը ծածկված է համատարած սառցային ծածկույթով: Յեզ, իսկապես, վորքան հեռանաւմ ես ափից, այնքան շատ ես հանդիպում սասցի և վերջապես մոտենում ես սառցադաշտերի, վրոնք ծածկում են ամբողջ ովկիանոսը: Սառցադաշտերում միայն սառցահատով կարելի յե ճանապարհ բաց անել: Բայց դա կապված է մեծ վատակների հետ: Դեպի բևեռը սառցահատներն ել անկարող են ճանապարհ բաց անել, այնքան վոր այստեղ անանցանելի յեն սառցադաշտերը: Միայն սավառնակով կարելի յե բևեռին հասնել:

Չմեռն այս յերկում արեւ մի քանի ամիս բոլորովին չե յերնում, և իշխում է բևեռային գիշերը: Կոլայի թերակղու հյուսիսային ափերին բևեռային գիշերը տևում է


յերկու ամիս, նոր Յերկիր կղզում՝ չորս ամիս, իսկ Հյուսիսային բևեռում՝ կես տարի: Ամառը, ընդհակառակը, արեն ամիսներով մայր չի մտնում, և իշխում է բևեռային ցերեկը: Սակայն, միննույն ե, արեի ճառագայթներն այնպես թեք են ընկնում, վոր շատ և շատ թույլ են տաքացնում այդ վայրերը: Բևեռային կղզիներում բնությունը կենդանանում է միայն 2—3 ամսով: Մնացած ամբողջ ժամանակ սառուցյան և տիրապետում: Ամառվա ընթացքում ձյունն ու սառուցյը հալգում են, ժայռերը մերկանում, տեղ-տեղ յերկում ե աղքատ բուսականություն՝ քարաքոսներ, կանաչ մամուռաբարձեր, մանր ծաղկիներ—բևեռային կակաչ, բևեռային զանգակածաղիկ: Այսպիսով, բևեռային կղզիներում տճում են տունդրայի բուսականություն:



Սահնակներով ճանապարհորդություն բևեռային շրջանում

Բևեռային գոտում զանազան կենդանիներ շատ կան. ովկիանոսի սառցի վրա և բևեռային կղզիներում թափառում են ովկիանոսում կան՝ փոկ, ծովացուր կետ և զանազան ձկներ: Ամառը փոկերը դուրս են գալիս


Ձկներ վորսում են տրաուլերներով։ Խորհրդային նոր տրաուլերը մի ամբողջ լողացող գործարան է։ Նա վոչ միայն վորսում ե ձուկ, այլ և այդ ձուկը նույն տեղում մշակության ե յենթարկում և դարձնում պատրաստի մթերք, Տրաուլերի վրա փոշի յեն դարձնում ձկան վառկորները, իսկ ձկան լարզից հանում են ձկան յուղ, վորը գործ ե ածվում վոչ միայն կերակրի մեջ, այլև վորպես բուժիչ միջոց։



Թ Ա Հ Ն Ի Շ Ո Ւ Կ Մ

Սառուցյալ ովկիանոսում նավագնացություն հաստատվեց խորհրդային իշխանության որով։ Խորհրդային Միության հյուսակային ծովափի ամբողջ յերկայնքով ձգվում ե ծովային նավագնացության ճանապարհ։ Կղզիների վրա կան ռադիոկայաններ, բևեռային յեղանակը և բևեռային սառուցյների շարժումն ուստանասիրող հետազոտական կայաններ, վորոնց շնորհիվ ռադիոկայանները մեծ ոգնություն են ցույց տալիս բևեռային ծովերում դժուգող նավերին։ Ամեն տարի կազմակերպվում են

առողջահատներից և սավառնակներից բաղկացած գիտարշավներ։ Խորհրդային Միության սառցահատները լավագույններն են աշխարհում։ Մինչև խորհրդային իշխանության հաստատումը Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսը համարյա բոլորովին չեր ուժագործվում ծովագնացության համար, վորովինեակ իր ավերի մուտ նա սառչում ե 9—10 ամսով իսկ ավելի հյուսիս՝ մշտապես սառցապատ ե։ Յարական իշխանության որով մի քանի անգամ վիրձել են կտրել-անցնել ովկիանոսը, սակայն այդ ճանապարհորդությունը՝ Մուրմանսկից մինչև Բերինգյան նեղուցը՝ յերեք տարի յեր տեսում։ Այդ գիտարշավը կարծւակ ամառվա ընթացքում անցնում եր աննշան տարածություն, և հենց վոր ձմեռը վրա յեր հասնում, մոտենում եր ափերին և ձմեռում այնտեղ, սպասելով հետեւյալ ամռան։



Ս ա ռ ո ւ ց յ ա լ

Ներկայումս Սառուցյալ ովկիանոսը յուրացված ե։ Խորհրդային իշխանությունն իր սառցահատների և խիզախ բերվեախույզների հաջող պայքարով ապացուցեց ամբողջ աշխարհին, վոր Սառուցյալ ովկիանոսի վրա կարելի յե կանոնագոր նավագնացություն հաստատել։ 1932 թ. ամառը Ռ. Յու. Շմիդտը «Միբիրյակով» սառցահատով ամառվա յերեք ամիս-

Ների ընթացքում ճեղքեց-անցավ Սառուցյալ ովկիանոսը՝ Մուղ-
մանսկից մինչև Բերինդյան նեղուցը:

Նույն Ռ. Յու. Շմիդտին հաջողվեց 1936 թ. «Զելյուս-
կին» շոգենավով հաղթահարել այդ տարածությունը ձմեռվա-
ամիսների ընթացքում, չնայած վոր այդ շոգենավն իսկական
սառցահատ չեր: Դրանով նա ապացուցեց, վոր Սառուցյալ
ովկիանոսը կարելի յե անցնել վոչ միայն տմառը, այլ և ձմեռը,
միայն պետք է կարողանալ կովել սառույցների դեմ:



«Զելյուսկինի» խորտակումը

«Զելյուսկին»-ի արշավը հաջողությամբ պսակվեց: Շոգե-
նավը հասավ իր նպատակին: Բայց հենց վոր նովը գուրս
յեկավ Սառուցյալ ովկիանոսից, ուժեղ մրբիկը նրան կրկին
յետ քշեց դեպի Սառուցյալ ովկիանոսը, ուր և նա փետրվարի
13-ին ջարդվեց սառուցներից: Շոգենավը ընկղմվեց: Ռ. Յու.
Շմիդտը և գիտարշավի 100-ից ավելի մասնակիցներ տեղա-
փորվեցին սառցադաշտում: Այն սառցադաշտը, վորի վրա յեր-
կու ամիս շարունակ դառնվում եր Շմիդտի ճամբարը, լաստի
նման լողում եր ովկիանոսի ջրերում: Հոսանքը նրան տանում
եր մի տեղից մյուսը, սառցի վրա ճեղքվածքներ եյին գոյա-

նում, և նա կոտրվում եր: Ճամբարին մահ եյին սպառնում
հարեւան սառցադաշտերն ու սառցասարերը: Սառնամանիքն ու-
ժեղ եր, յերեւմն համնում եր 40 աստիճանի: Յերկու ամիս
շարունակ ամբողջ աշխարհը մեծ հուզմունքով հետևում եր
Շմիդտի ճամբարի վիճակին: Ամառը մոտենում եր, և սառցա-
դաշտն աստիճանաբար հալվում:

Խորհրդային Միությունն շտապ կարգով պատրաստում եր
իր սառցահատներն ու սավառնակները: Գանվեցին հերոսներ,
վորոնք իրենց վրա վերցրին ճամբարը վրեկելու պարտավորու-
թյունը: Իրենք՝ ճամբարում գտնվողները, մեծ արիությամբ
եյին կովում տարերքի դեմ: Ընակարաններ եյին կառուցում,
լիակատար կարգ ու կանոն եյին հաստատում, ուղիոյով ամ-
բողջ աշխարհին հաղորդում եյին, թե ինչպես են ապրում
սառցի վրա, չեյին կորցնում իրենց հույսը, վոր սոցիալիստա-
կան հայրենիքը կփրկի իրենց կորստից: Յեզ, խկաղիս, խոր-
հրդային սավառնորդները Սառուցյալ ովկիանոսում մահվան ճի-
րաններից խլեցին Շմիդտի ճամբարում գտնվողներին և իրենց
թևերի վրա նրանց ցամաք փոխադրեցին:

Չելյուսկինյանների և խորհրդային սավառնորդների հերո-
սության լուրջ կայծակի արագությամբ տարածվեց ամբողջ
աշխարհում: Խորհրդային Միության մեջ յերեխան անգամ գի-
թե, թե ովքեր են չելյուսկինյանները և նրանց վրկող հերոս
սավառնորդները:

Նույն ձեռվ հոչակ ձեռք բերին նաև «Լիտկե» սառցահա-
տի գիտարշավի մասնակիցները, վորոնք մի ամառվա ընթաց-
քում ճեղքեցին անցան Սառուցյալ ովկիանոսը՝ առանց վորեւ
պատահաբի:

1937 թ. Խորհրդային Միությունը Հյուսիսային բևեռ ու-
ղարկեց սավառնակներից բաղկացած մի մեծ գիտարշավ, վո-
րի կազմի մեջ մտնում եյին 42 հոգի՝ ակադեմիկ Ռ. Յու.
Շմիդտի գլխավորությամբ: Գիտարշավին մասնակցում եյին և
չելյուսկինյաններին վրկող Խորհրդային Միության հերոս սա-
վառնորդներ Վոլոպյանովն ու Մոլոկովը: Թոփչչին սկսվեց Մուկ-
վայից: Գիտարշավը Հյուսիսային բևեռ հասավ մայիսի 21-ին:

Այս հաղթանակը վուկե տառերով գրված է բնեոփի նվաճման պատմության մեջ։ Բնեոփ շրջակայքում, դրեյֆող սառցի վրա, կառուցեցին բեռուային կայան, ուր գիտական հետազոտության համար մնացին Խորհրդային Միության հերոսներ՝ Պապանինը, Շիրշովը, Կրենկելը և Ֆեոդորովը։ Այդ կայանն Արկտիկայում՝ աշխատեց 9 ամիս։ Մեր սավառնորդներն ուսառցահատները հերոս պապանինյաններին բարեհաջող կերպով փոխադրեցին հայրենիք։

Նույն 1937 թ. յերկու անգամ անվայրեջը թոփչք կատարվեց Մոսկվայից — Ամերիկա՝ Հյուսիսային բնեոփ վրայով։ առաջին թոփչքին մասնակցում եյին Զկալովը, Բայդուկովը և Բելյակովը, յերկրորդին՝ Գրոմովը, Յումաշեր և Դանիլինը։

Խորհրդային բազեներն այդ թոփչքներն ավարտեցին փայլուն հաղթանակով։

Վարժություններ։ — Գտեք ԽՍՀ Միության քարտեզի վրա Հյուսիսային ծովային ճանապարհը։ 2. Ուշագիր նայեցեք ԽՍՀ Միության զոռաշխարհագրական քարտեզին, ինչպիսի կենտրոնիներ եք տեսնում բնեուային գոտում։

V. ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Էստ իր բնական առանձին գոտիների, մենք ծանոթացանք Խորհրդային Միությանը՝ նրա բնության պատկերներին, բնակչության զբաղմունքին և սոցիալիստական շինարարությանը։ Այժմ կրկնենք անցած նյութը, վորպեսզի Խորհրդային Միության մասին լրիվ գաղափար կազմենք։

1. ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Մակերեսը ու յոթը

ԽՍՀ Միության ֆիզիկական քարտեզի վրա բնչ պայմանական նշաններով են ցույց տրված ծովի մակերեսութից բարձր և ցածր գտնվող դաշտավայրերը, բարձրությունները, միջին քարձրության և շատ բարձր լեռները, հավերժածյուն և սառցադաշտային լեռները։

Քարտեզից յերեսում ե, վոր ԽՍՀ Միությունը մեծ մասմբ հարթավայրային յերկիր ե. այսուղ գերակշռում են զաշտավայրերը, հարթությունները տեղակեղ ըլքապատ են։ ԽՍՀ Միության մեջ կան նաև լեռներ։ Լեռները գտնվում են զմիսավարապես ծայրամասերում։

Յնչյաց տվեք քարտեզի վրա՝ Արեւելա-Յեվրոպական, Արևմտա-Սիբիրական և Թուրքանի դաշտավայրերը։

Յնչյաց տվեք քարտեզի վրա հետևյալ բարձրությունները, սարահարթերը, լեռները և լեռնաշղթաները՝ Միջին-Թուրքական բարձրությունը, Միջին-Սիբիրական բարձրավանդակը, Աւալյան լեռները, Կովկասիոնի լեռնաշղթան, Խիբրինի լեռները, Ալթայան լեռնաշղթան, Տաման-Շան լեռնաշղթան, Պամիր լեռնաշղթանը։

Համեմատեցնք այդ լեռների բարձրությունները. վերսնք
են նրանցից ավելի բարձր, վերսնք են ծածկված հավերժական
ձյունով և սառցադաշտերով, վերաեղ են գտնվում ԽՍՀ Միու-
թյան ամենաբարձր լեռնագագաթները:

Հանածո հարսությունները

Մեր Միությունը հանածոներով շատ է հարուստ: Հողի ըն-
դերքի հարստությունն անհրաժեշտ է ոսցիալիստական տնտե-
սության զարգացման համար: Հողի ընդերքը հետազոտվում է
ամենուրեք՝ և՛ հեռավոր տունդրայում, և՛ տայգայի խորքե-
րում, և՛ կիզիչ անտառատներում:

ԽՍՀ Միությունն իր նավթային պաշարով առաջին տեղն
է գրավում ամբողջ աշխարհում: Շատ նաև կա կովկասում—
Բաքվում, Գրոզնում: Գտնված են նավթի նոր հանքատե-
ղեր տայգայում, տափաստաններում:

ԽՍՀ Միությունն իր քարածիի պաշարով յերկրորդ տեղն
է գրավում ամբողջ աշխարհում: Գլխավոր հանքատեղերն
են Դունայ, Կուր, Արևոտան:

ԽՍՀ Միությունն իր պղնձահանքի պաշարով առաջին
տեղն է գրավում ամբողջ աշխարհում: Գլխավոր հանքատեղերն
են Կրիսոյ Ռոգը, Կերչը և Ուրալը:

Հիշեցնք թե Խորհրդային Միության մեջ ել ինչ հանածո
հարստություններ կան: Քարտեզի վրա ցույց տվեք նրանց
բաշխումը:

Գ Ե Տ Ե Ր Ը

Դանք քարտեզի վա հետեւալ գետերը՝ Դնեպր, Դոն,
Վոլգա, Պեչորա, Ուրալ, Նեվա, Հյուսիսային Դվի-
նա, Սիր-Դարիա, Ամուշ-Դարիա, Որ, Յենիսեյ, Ի-
նա, Ամուր:

Այս գետերը վիճտեղից են սկիզբ առնում, վոր ծովերն են
թափում: ԽՍՀ Միության մեջ գետերն ինչպես են ոգտա-
գործվում:

Կ Լ Ի Մ Ա ն

ԽՍՀ Միության բնական գոտիներն ուսումնասիրելիս
մենք իմացանք, վոր մեր Միության մեջ տարբեր գոտիներում
կլիման տարբեր է:


ԽՍՀ Միության մեծ մասն գտնվում է բարեխառն գո-
տում: Համարյա ամբողջ Միություն մեջ ձմեռը խիստ տար-
բերվում է ամառվանից:

ԽՍՀ Միության արևմտյան մասում, Ատլանտյան
ովկիանոսին մոտիկ, ձմեռը բարեխառն է, իսկ ամառը՝ հով:
Վորքան զնում ես գեղի արևելք, ձմեռն այնքան ավելի խիստ
է լինում և ամառը՝ շոգ: Մթնոլորտային տեղումների քանակն
ավելի և ավելի պակասում է Ատլանտյան ովկիանոսից գեղի
արևելք հեռացող վայրերում: Կլիման տունծնապես խիստ է
Արևելյան Միքիրում, Վերխոյանսկ քաղաքի մոտ, ուր
գտնվում է ցրտի լեռնոր: Թուրանի դաշտավայրի կլիման չոր-
ե, այստեղ անապատներ կան: Հեռավոր Արևելքում՝ Ճա-
պոնական ծովի ափերին և Կամչատկայի հարավ-արևմտյան մա-
սում մթնոլորտային տեղումների քանակը մեծ է: Խաղաղ ով-
կիանոսից վչող քամիներն են բերում այդ տեղումները: Դրե-
մի հարավային ափը և Արևմտյան Վրաստանի Սեվ-
ծովյան ափը լեռներով պաշտպանված են հյուսիսային ցուրտ
քամիներից: այստեղի կլիման տաք է, մերձարևադաշտին:
Արևմտյան Վրաստանի Սեվծովյան ափն ամենախոնավ տեղն
է ամբողջ Միության մեջ: Սեվ ծովից վչող արևմտյան քա-
միներն ամպեր են քշում այստեղ, վորի հոմար և՛ հաճախ
անձրև և գալիս:

Բնական գոտիները

Բնական գոտիներն ուսումնասիրելիս մենք ծանոթացանք
ԽՍՀ Միության հողին, բուսականությանը և կենդանական աշ-
խարհին:

Հիշեցնք, թե վոր տեղերումն են տարածված սևահողը և
պոդգոլային հողը:



Հիշեցնք, թե հարավից հյուսիսից ի՞նչպես են իրար հաջորդում բռնյակները տեսակները:

Հիշեցնք, թե ի՞նչ կենդանիներ են ապրում տունդրայում, անտառներում, տափաստաններում, նրանք ի՞նչպիսի գույներով են հարմարվել իրենց միջավայրի պայմաններին:

Հողի, բուսականության, և կենդանական աշխարհի բազմազանությունը բացատրվում ե կլիմայի տարրերությամբ։ ԽՍՀ Միության մեջ հարավից-հյուսիս փոխվում ե կլիման, դրա հետ միասին փոխվում ե և հողը, և բուսական ու կենդանական աշխարհը։

Կովկասինիի բարձր լեռներում կլիման փոխվում ե լեռնան ստորոտից գեպի գագաթը։ Վորքան տեղը բարձր ե այնքան ցած ե լինում ջերմության աստիճանը։ Այդ իսկ պատճեռով այստեղ բարձրության զուգընթաց փոխվում ե և բուսականությունը։

Կովկասիմնիի վորեւե բարձր լեռան վրա՝ ստորոտից մինչև
գագաթը, կարելի յե տեսնել բուսականության նույնքան փո-
փոխություն, վորքան Խորհրդային Միության վողջ անծայրա-
ծիր տարածության վրա՝ հարավից-հյուսիս, մինչև Սառուցյալ
ովկիանուսը:

ԽԱՀԱՄ ՏԵՍՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՐ

Ճարտական Ծուսաստանում արդյունաբերությունը միայն
մի յերկու-յերեք տեղ եր զարգացել: Մնացած ամբողջ յերկ-
րում գընթե վոչ մի տեղ Փաբրիկաններ և գործարաններ չկային:
Ներկայումս ԽՍՀ Միության մեջ հիմնված ե սոցիալիստա-
կան տնտեսություն: Մեր Միությունը հետամնաց զյուղատքն-
տեսական յերկրից գարձել ե հզոր սոցիալիստական արդյունա-
բերական յերկիր, ուր գյուղատնտեսությունը հասել ե զար-
գացման բարձրագույն առաջնանի: Փոխվել ե Խորհրդային
Միության քարտեզը: Ծայրամասերում, ուր հետամնացությունն
ավելի շատ եր զգալի, աճել են կոլտնտեսություններ, խորհ-
անտեսություններ, գործարաններ, հանքանորեր, խոշոր եկե-
տրակայաններ, քաղաքներ:

Քարտեղի վրա ցնւյց տվեք ԽՍՀ Միության գլխավոր արդյունաբերական կենտրոնները:


Արդյունաբերական աճին զուգընթաց աճել է և գյուղանտեսությունը: Քայլայված մնհատական գյուղական տնտեսությունը կազմված էն կողանտեսություններ: Մեր Միության մեջ աշխատում են մի քանի հազար խորհարնակություններ և մեքենատրակտորային կայաններ: Կողանտեսությունների և խորհանությունների դաշտերում լայնորեն կիրառվում են գյուղատնտեսական մեքենաները:

ԽՍՀ Միությունը դարձել է աշխարհի ամենախոշոր սոցիալիստական պյուղատնտեսության յերկիրը:

Հաղորդակցության հանապարհները

Հաղորդակցության ճանապարհները մեծ նշանակություն ունեն տնտեսության զարգացման համար:

Խորհրդային Միության գլխավոր յերկաթուղային հանգույցը Մոսկվան է:



Նավագնացություն Վոլգայի վրա

Ցարական Ռուսաստանում յերկաթուղիներ քիչ կային, իսկ մեր Միության մեջ շատ տեղերում են գյուղած յերկաթուղա-

յին գծեր. մի քանի տեղ յերկաթուղին ելեկտրոֆիկացված եւ Յերկաթուղիների հետ միասին մեծ նշանակություն ունի նաև գետային նավագնացության կարգավորումը: Ամենակարևոր նավագնացային ճանապարհը Վոլգայի ճանապարհն եւ Մեղ մոտ գետերը ջրանցքներով միացվում են իրար, վորպեսզի ավելի ես զարգանա գետային նավագնացությունը: Մեղ մոտ ծովերն ել ջրանցքներով միացվում են իրար:

Հիշեցեք Մոսկվա-Վոլգա և Սպիտակ Բալթիկծովյան ջրանցքները և ցնւյց տվեք նրանց տեղը քարաեղի վրա:

Մեծ նշանակություն ունի ծովային ճանապարհի նավագնացության կանոնավորումը: Քարտեղի վրա գտնեք այդ ճանապարհները:

Մեր Միության ծովերից նավագնացության համար ամենակարևորներն են Սեվ և Բալթիկ ծովերը, վորոնք մեր յերկիրը կարծ ճանապարհով միացնում են Յելլոպայի և Ամերիկայի յերկրների հետ: Առանձնապես մեծ է Սեվ ծովի նշանակությունը, վորովհետեւ նա յերեք չի սառչում, այնինչ, Խորհրդային Միության մնացած բոլոր ծովափերը ձմեռը սառչում են (բացառություն է կազմում հեռավոր Մուրմանսկի ծովափը, ուր տաք հոսանքը թույլ չի տալիս, վոր ծովը սառչի):

Խորհրդային Միության գլխավոր նավահանգիստներն են Լենինգրադը, Բաթումին, Ոդեսան, Վլադիվոստոկը, Մուրմանսկը, Արխանգելսկը:

Մեծ ուշադրություն է դարձվում ողային հաղորդակցության զարգացմանը: Ողային գծերը միացնում են ԽՍՀ Միության բոլոր գլխավորագույն կենտրոնները:

Հիշեցեք խորհրդային խիզախ սավառնորդների կարևորագույն թոփչքները:



ՅԱԿ

ԽՈՐՀԻԱՅԻՆ ՍՈՅԻԱԼԻՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ԽԱՀՍ)

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՍՀՄ գիրքն ու մեծությունը	3
ԽՍՀՄ ծովային սահմանները	4
ԽՍՀՄ աահմանսկից պետությունները	7
ԽՍՀՄ բնակչությունը	8
ԽՍՀՄ քաղաքական կազմը	8

II ՎՐԱՅԱԿԱՆ ԽՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր տիեզերկ

Դիրքը, սահմանները և մեծությունը	12
Մակերեսույթը	14
Կովկասիոնի լեռնաշղթան	14
Դարձավի կիրճը	17
Կովկասիոնիի հարավային ճյուղերը	19
Հարավային լեռնաշխարհը	21
Հարթավայրի շրջանը	22
Կլիման	25
Գետերը և լճերը	26
Վրաստանի առանձին մասերը	30
Վրաստանի ինքնավար մասերը	32
Բնությունը և կյանքը Վրաստանի լեռնային շրջաններում	32
Բնակչությունը և տնտեսությունը	38
Բնությունը և կյանքը Վրաստանի հարթավայրերում	42

Բնուրյունն ու կյանքը Վրաստանի ինքնուկար մոսերամ

Արխադական ԽՍՀ	47
Աջարական ԽՍՀ	49
Հարավ-ոսեթական ինքնավար մարդ	51

Վրաստանի տնտեսուրյան ընդհանուր տեսուրյունը

Արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը	52
Խճուղիները	56
Ցերկաթուղիները	58
Նավագնացությունը	58
Ավելացիան	61

III ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՊԱՑՄԱՆՆԵՐԸ

Մակերեսույթը	62
Ամենադիմավոր գետերը	64
Ամենադիմավոր լճերը	69
Կլիման	70
Հողը, բուսական աշխարհը, կենդանական աշխարհը	73

IV ԲՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԿՅԱՆՔԸ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ

Լեռնային շրջանները	75
Մերձարևադարձային գոտին	78
Անապատների գոտին	81
Չոր տափաստաններ	85
Սևահողային տափաստաններ	90
Խառն անտառներ	95
Տայգա	98
Տունդրա	106
Բևեռային գոտի	112

V ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԱԿԱՆՈՒՆ

1. ԽՍՀ Միուրյան բնուրյունը

Մակերեսույթը	121
Հանածո հարստությունները	122
Գետերը	122
Կլիման	123
Բնական գոտիները	123
2. ԽՍՀՄ տնտեսուրյունը	125
Հաղորդակցության ճանապարհները	126

Պատասխանառու Խմբագիր՝ Ս. ՄԱԼՅԱՆ

Հանձնված և արտադրության 8/VII Ստորագրված և տպագրելու 15/VII 1940 թ.
Կ 772. Պատվեր (заказ) № 784. Քանակ (тираж) 5000

Լ. Պ. Բերիայի անվան Պոլիգրաֆկոմբինատ «Կոմունիստի», Լենինի փ. № 28.
Полиграфкомбинат „Коммунисти“ им. Л. П. Берия, ул. Ленина № 28.

Հայաստակի Ազգային գրադարան



NL0427471

31

80598

ԳԻՐԸ 2 Ռ. 50 Կ.

ԿԱԶՄԸ 40 Կ.

2 Ռ. 90 Կ.

Д. ДОНДУА
География
ч. II

Учебник IV кл. нач. школы
ГОСИЗДАТ ГРУЗИИ

Тбилиси
1940 г.